

ԱՐԱՐԱՎԱԿԱՆԱԿ

ՀՀՀՀ

ՕՐՅԱՐՅՅ

059

Հ-31

ᠠᠯᠤᠯᠠᠭᠤᠰᠤᠯᠤᠰᠤ

ᠠᠯᠤᠯᠠᠭᠤᠰᠤᠯᠤᠰᠤ  
ᠠᠯᠤᠯᠠᠭᠤᠰᠤᠯᠤᠰᠤ



ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԻ  
ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# ԱՆՆԱՎԱԳԻՏԱՆԿ ՕՐԱՅՈՒԽՅՅ

Կազմեց ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ



ԵՐԵՎԱՆ 1989

## Խմբագիր՝ Կոստանդին ԽՈՒՂԱՎԵՐԴՅԱՆ

Հանրագիտակ օրացույցը մեր ժամանակներում գրեթե մոռացության տրված հայերեն բազմաբովանդակ օրացույց-տարեցույցների հրատարակչական ավանդույթների վերականգնման փորձ է և հետապնդում է այն ընթերցանության հետաքրքրաշարժ գիրք դարձնելու նպատակ: Օրացույցային տվյալներից բացի պատկերազարդ այս գիրքը պարունակում է հայ ժողովրդի պատմությանը, ազգային ավանդություններին, Խորհրդային Հայաստանի գիտական ու մշակութային կյանքին նվիրված բազմազան հոդվածներ, որոնք մատուցվում են հանրագիտական շարադրանքով, թևավոր խոսքերի ընտրանի:

# ՀՈՒՆՎԱՐ

|            |   |    |    |    |    |
|------------|---|----|----|----|----|
| ԵՐԿՈՒՇԱԲԹԻ | 1 | 8  | 15 | 22 | 29 |
| ԵՐԵՔՇԱԲԹԻ  | 2 | 9  | 16 | 23 | 30 |
| ՉՈՐԵՔՇԱԲԹԻ | 3 | 10 | 17 | 24 | 31 |
| ՀԻՆԳՇԱԲԹԻ  | 4 | 11 | 18 | 25 |    |
| ՈՒՐԲԱԹ     | 5 | 12 | 19 | 26 |    |
| ՇԱԲԱԹ      | 6 | 13 | 20 | 27 |    |
| ԿԻՐԱԿԻ     | 7 | 14 | 21 | 28 |    |

## ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՄՍԱՆՈՒՆՆԵՐԸ

Հին հայերը առաջնորդվել են Բուն Հայկա թվականով, ըստ որի տարին ուներ 12 ամիս (յուրաքանչյուրը՝ 30 օրով) և 13-րդ (լրացուցիչ) մեկ ամիս (5 օրով): Ահավասիկ Բուն Հայկա օրացույցը.

|          |         |
|----------|---------|
| Նավասարդ | Արեգ    |
| Հռիփ     | Ահեկան  |
| Սահմի    | Մարերի  |
| Տրե      | Մարգաց  |
| Ջաղոց    | Հրոտից  |
| Արաց     | Ավելյաց |
| Մեհեկան  |         |

Հայոց ամսանունները դիցաբանական ծագում ունեն: Որոշ տոմարագետներ գտնում են, որ

հայոց տոմարի ամիսները կոչվել են Հայկ Նահապետի 12 ուսուրերի և դուստրերի անուններով:

## ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՕՐԱՆՈՒՆՆԵՐԸ

Անուններ են ունեցել նաև հայկական ամսվա բոլոր 30 օրերը և Ավելյաց ամսվա 5 օրը: Ահա դրանք.

|            |              |
|------------|--------------|
| 1. Արեգ    | 11. Երեզկան  |
| 2. Հրանդ   | 12. Անի      |
| 3. Արամ    | 13. Պարխար   |
| 4. Մարգար  | 14. Վանատուր |
| 5. Աիրանք  | 15. Արամազդ  |
| 6. Մազդեղ  | 16. Մանի     |
| 7. Աստղիկ  | 17. Ասակ     |
| 8. Միիր    | 18. Մասիս    |
| 9. Չոպաբեր | 19. Անահիտ   |
| 10. Մուրց  | 20. Արագած   |

- |              |               |
|--------------|---------------|
| 21. Գրգուռ   | 30. Գիշերավոր |
| 22. Կորդուիք | ԱՎԵԼՅԱՅ ԱՄՍՎԱ |
| 23. Ծմակ     | ՕՐԱՆՈՒՆՆԵՐԸ   |
| 24. Լուսնակ  | 1. Փայլածու   |
| 25. Ցրոն     | 2. Արուսյակ   |
| 26. Նպատ     | 3. Հրատ       |
| 27. Վահագն   | 4. Լուսնթագ   |
| 28. Սիմ      | 5. Երևակ      |
| 29. Վարագ    |               |

Այս օրանունները ոչ միայն արտացոլում են Հայկական լեռնաշխարհի նշանավոր տեղանունները, այլև հայոց յուրովի դիցարան են:

### ՀԱՅՎԱԿԱՆ ԺԱՄԱՆՈՒՆՆԵՐԸ

Հայերը ունեցել են ոչ միայն իրենց ազգային ամսանուններն ու օրանունները, այլև օրը (գիշերն ու ցերեկը) բաժանել են 24 հավասար մասերի (ժամերի) և դրանց տվել հետևյալ անունները:

#### Ցերեկվա ժամանուններ

|             |             |
|-------------|-------------|
| Այգ         | Շանթակող    |
| Ծայգ        | Հրակաթ      |
| Զայրացյալ   | Հուրփայլյալ |
| Ճառագայթյալ | Թաղանթյալ   |
| Շառավիղյալ  | Արագոտ      |
| Երկրատես    | Արփող       |

#### Գիշերվա ժամանունները

|           |            |
|-----------|------------|
| Խավարակ   | Հավաթափյալ |
| Աղջամուղջ | Գեղակ      |
| Մթացյալ   | Լուսաձեմ   |
| Շողավոտ   | Առավոտ     |
| Կամավոտ   | Լուսափայլ  |
| Բավական   | Փայլածու   |

Այս անունների մեջ ի հայտ է գալիս հին հայերի գեղագիտական ճաշակը՝ ցերեկվա ու գիշերվա առանձին պահերի երանգները զանազանելու հարցում: Դրանցից մի քանիսը ժամանակակից հայերենում պահպանվել են արդեն ոչ թե որպես ժամանուն, այլ ցերեկվա ու գիշերվա որևէ պահը ցուցանող հասկացություն (օրինակ, այգ, աղջամուղջ, առավոտ):

### ՔԱՆԻ ՆՈՐ ՏԱՐԻ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ ՀԱՅԵՐԸ

Ըստ մեզ հասած տվյալների, հայերն ունեցել են երեք Նոր տարի, որոնք կոչվել են Ամանոր, Նավասարդ կամ Կաղանդ:

Վաղնջական ժամանակներում մեր նախնիները Նոր տարին դիմավորել են մարտի 21-ին, գարնանային գիշերահավասարի օրը: Դա տարեգլխի պատահական ընտրություն չէր: Այդ հեռավոր ժամանակների հայ քրմերը իրենց բազմամյա դիտարկումներով նկատել են, որ բնությունը հարություն է առնում գարնան սկզբին: Այդ օրն էլ հայ մարդը դարձրել է Նոր տարի կամ Նոր տարեգլուխ և նշել այն ցնծալի տոնախմբությամբ, որով փառաբանել է բնության զարթոնքը, հողագործի աշխատանքը, աղերսել աստվածներին, որպեսզի բերքառատ դարձնեն տարին:



Հայկական երկրորդ տարեգույնը եղել է Լավասարդի 1-ը (օգոստոսի 11-ը):

Ըստ ավանդության, Հայկ Աղեղնավորը Հայոց ձոր գավառում սպանել է բռնակալ Բելին և ազատություն պարգևել իր տոհմին ու իր բոլոր հետնորդներին: Այդ հաղթությունը ենթադրաբար տեղի է ունեցել մեր թվականությունից առաջ 2492 թվականի օգոստոսի 11-ին: Այդ ժամանակվանից էլ հայերը Նոր տարին սկսել են տոնել օգոստոսի 11-ին:

Միջնադարի նշանավոր տոմարագետ Հովհաննես Սարկավազը հավաստում է, որ եբրայեցիների տոմարի հիմնադիրը Մովսեսն է, իսկ հայկական տոմարի հիմնադիրը՝ Հայկը:

Օգոստոսյան տոնը հայերը կոչել են Լավասարդ, որ նշանակում է Նոր տարի (Նավ (Նոր) + ա (հողակապ) + սարդ (տարի]): Լավասարդի ամենամեծ հանդիսությունը տեղի էր ունենում Արածանի գետի ափերին, Նպատ լեռան փեշերին: Տոնախմբությանը ներկա էին լինում երկրի թագավորն ու թագուհին, նշանավոր արքունականներ, զորապետներ, նաև՝ հայկական բանակը: Այստեղ գալիս էին Հայաստանի համարյա բոլոր գավառներից: Բայց դա սոսկ հաճույք պատճառող տոնախմբություն չէր, դրա մեջ կար ազգային միասնության մեծ խորհուրդ: Տոնախմբությունը տևում

էր մի քանի օր: Դրանցից մեկը կոչվում էր գինարբուքի օր: Այդ օրը մարդիկ խմում էին քաղցր հյութեր, թեթև խմիչքներ: Լավասարդավորների մեջ հարբեցողներ հազվադեպ են եղել: «Աստվածներն ամենից շատ որոմ են թողնում հարբեցողի արտում»՝ ասում է հայկական հնագույն առածը: Այդ տոների ժամանակ Նույնիսկ ուտելիքն է չափավոր եղել: Իհարկե, ուտելիքի մի ընդհանրական ցանկ չի եղել, որ պարտադիր լիներ Հայաստանի բոլոր կողմերի բնակիչների համար: Չպետք է մոռանալ, որ Հայաստանը բազմակլիմա երկիր է եղել և Նույնիսկ երկու իրար հարևան գավառներում Նույն բերքն ու բարիքը չեն ստացել: Տարբեր գավառներում տարբեր ուտելիք են օգտագործել: Այնուամենայնիվ ուսումնասիրությունները հավաստում են, որ Նոր տարվա հայկական ուտելիքները ինչ-որ չափով միասնական են եղել, որով բնորոշվել է բոլոր հայկական գավառների Նոր տարվա տոնասեղանների ազգային բնույթը: Այդ սննդատեսակների մեջ առաջինը եղել է հայկական կլորահատիկ ցորենը, որն աճել է միայն Հայաստանում: Եվ Նոր տարվա սեղանին մեր նախնիները դրել են հենց այդ ցորենից պատրաստված հաց, որպեսզի հայոց հեթանոս աստվածները բարբեր դարձնեն Նոր տարին: Երևի այդ հեռավոր ժամանակների հավա-



տալիքի արդյունք է հայկական ժողովրդական հին առածներից մեկը. «Նոր տարին հաց չեն փոխ առնում»: Ժամանակին այդ բառերը ընկալել են այսպես. Նոր տարվա սեղանին քո աճեցրած ցորենից թխած հացը պիտի դնես:

Հայկական հնագույն առածներից մեկն էլ ասում է. «Առանց գինու Նոր տարին կգա, առանց նգածաղիկի՝ կուշանա»: Հնում նգածաղիկը եղել է ամենահոշակված հայկական համեմունքը: Ախորժաբեր այդ ծաղիկը աճում էր Մասիսի լանջերին, այն քաղում և չորացնում էին Մասյացոտն ու ձակատք գավառների հայերը և տարածում ամբողջ Հայաստանով մեկ: Եվ հայը, որ գավառում էլ ապրելիս լիներ, Նոր տարում ըմբռնում էր սքանչելի նգածաղիկը: Այդ սովորության մեջ էլ ազգային միասնության խորք կար: Նգածաղիկը բոլոր հայերին կապում էր Մասիսի հետ, ողջ հայ ժողովուրդն իրեն կապված էր զգում Մասիսին, Միջնաշխարհին, այսինքն՝ հայրենիքի սրտին:

18-րդ դարում Սիմեոն Երևանցի կաթողիկոսի տոմարով հունվարի 1-ը ընդունվեց որպես Նոր տարվա սկիզբ: Բայց մինչ այդ Հայաստանի տարբեր վայրերում և հայկական տարբեր գաղթավայրերում հայերն արդեն սկսել էին Նոր տարին նշել հունվարի 1-ին: Մենք փորձում ենք հայկական դիմագիծ տալ այդ տոնին, այն զու-

գել մեր հնամենի Նավասարդյան տոնի պաճուճանքներով, աշխատում ենք պահպանել բոլոր այն սննդատեսակներն ու ըմպելիքները, որոնք օգտագործել են մեր նախնիները ազգային Նոր տարին նշելիս: Հունվարի 1-ի ուտելիքների մեջ մտնում են և տառով սկսվող մի քանի սննդամթերք. նգածաղիկ, նուռ, նաշիի ալյուրից թխված հաց, նուշ և այլն: Ասենք, որ որպես տոնական կոչվող ուտելիք են ընտրել և սկզբնատառով, որպեսզի հարմարեցնեն տարվա անվանը՝ Նոր տարի, Նավասարդ:

### *ՀԱՅԿԱԿԱՆ ԽՐԱՏԱՆԻ*

*Դժբախտաբար մեր ազգին մեջ շատերու բարձրանալուն գաղտնիքը բնական օրենքով միայն կըլուծվի. ծանրերը միշտ գետնաբարշ կմնան ու թեթևները վեր կելլեն:*

*Հակոբ Պարոնյան*

*Ազգային դպրոցները «ազգային ոգու» հենարաններից ամենանուժեղն են:*

*Ալեքսանդր Մյասնիկյան*

*Վաղվա օրը այսօրվա սխալներն է ուղղում:*

*Ներսես Ակիսյան*

*Անկարելի է գտնել աշխարհ մը և ազգ մը, որ համեմատվի հայուն և յուր երկրին, որ այնքան ավեր, մահ, սուր, ուրացություն,*



արյուն, գերություն կրած լինի, ու նորեն ցայտօր ապրի:

Գարեգին Արվանձտյան

Զարմանալի է մեր ազգի կենսունակությունը. ես լիքն եմ էդ մեծ կենսունակության անսասան հավատքով: Կենսունակություն էլ որ ասում եմ՝ ասում եմ խոսքի բարձր ու ազնիվ իմաստով: Եվ ոչ մի բռնակալ, և ոչ մի բարբարոս երբեք չի կարողացել նվաճել ու ընկճել հայկական ցեղի էդ հզոր հատկությունը: Ամեն անգամ, ամեն մի բռնակալի հայ ժողովուրդը կարող էր կրկնել Վարդանանց խոսքը, թե՛ կարող ես հայի մարմինը տանջել, բայց նրա հոգու հետ քնչ ես անելու...

Հովհաննես Թումանյան

## ԱՄԵՆԱԲԵՂԱՎՈՐ ԳՐԻՉ ՌԻՆԵՅՈՂ ՀԱՅՐ

Հայերի մեջ մինչև այժմ ամենաբեղմնավոր գրիչն ունեցել է բանաստեղծ, բանասեր, պատմաբան, աշխարհագրագետ, թարգմանիչ Ղևոնդ Ալիշանը (1820 — 1901): Եթե մեկտեղվի ու հրատարակվի նրա գիտական ու գրական հսկայական ժառանգությունը, ապա այն կկազմի ավելի քան 50 մեծադիր հատոր:

1847 — 60-ին «Բազմավեպ» հանդեսում Նահապետ ստորագրությամբ Ալիշանը հրատարակել է մի շարք բանաստեղծություններ ու պոեմներ («Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ», «Հրազդան»,

«Հայոց աշխարհիկ», «Պլպուլն Ավարայրի» և այլն): Ալիշանի ծավալուն գործերից շատերը նվիրված են հին Հայաստանի աշխարհագրությանը («Շիրակ», «Սիսուան», «Այրարատ», «Սիսական»): Դրանք հանրագիտական բացառիկ արժեք ունեցող գործեր են: Ալիշանը գրել է «Բաժինք Հայոց մեծաց» խորագրով 742 տողանոց մի պոեմ, որը 1868-ին տպագրվել է «Բազմավեպ» հանդեսում: Այդ պոեմում նա տալիս է հին Հայաստանի ամբողջական նկարագիրը ըստ 15 նահանգների (աշխարհների), նշում բոլոր գավառները, գյուղերի մի մասն իրենց հին ու նոր անվանումներով, տալիս դրանց ստուգաբանությունները, հիշատակում այդ վայրերում տեղի ունեցած իրադարձությունները: Այդ պոեմը Հայաստանի տեղանունների չափածո բառարան է՝ գրված բանաստեղծական շքեղ լեզվով: Ալիշանի գործերից են նաև «Հայբուսակ կամ հայկական բուսաբանություն», «Հայապատում», «Հայ-Վենետ», «Հուշիկք հայրենյաց հայոց», «Հայաստան յառաջ, քան զլինելն Հայաստան», «Նշմարք հայկականք»:

## «ՄՇՈ ՃԱՌՆՍԻՐ»

«Մշո ճառընտիրը» հայերեն ամենամեծ մագաղաթյա ձեռագիրն է: Այն գրվել ու ծաղկվել



է 1200 — 1202 թվականներին, երզնկայի Ավագ վանքում, Բաբերդի տանուտեր Աստվածատուրի պատվերով: Գրիչը Վարդան Կարնեցին է, ծաղկողը՝ Ստեփանոսը: Այժմ երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ճառընտիրը ունի 601 թերթ: Դրանցից յուրաքանչյուրը պատրաստված է մի երինջի կամ արջառի կաշվից: Բաժանված է երկու մասի, կազմ չունի, քաշը 28 կիլոգրամ է: Ձեռագիրն ըստ տարվա տոների դասավորված ճառերի, վարքերի, վկայաբանությունների, պատմական քաղվածքների ու ներբողների ժողովածու է, որի համար կոչվում է նաև «Տոնական»:

«Մշո ճառընտիրն» սկզբում ունեցել է 660 թերթ, որից 601-ը երևանում է, 17 թերթ պահվում է Վենետիկում: Ձեռագիրը 1202-ին հափշտակել է Բաբերդի այլազգի դատավորը և 2 տարի Խլաթում թաքցնելուց հետո, 1204 թվականին 4000 արծաթե դրամով վաճառել Մշո Առաքելոց վանքին: Փրկագինը հավաքել են շըր-

ջակայքի բնակիչներն ու վանքի միաբանները: Մինչև 1915 թվականը ձեռագիրը գտնվել է Մշո Առաքելոց վանքում: Մեծ եղեռնի օրերին երկու հայ կին ձեռագիրը երկու մասի են բաժանել (ծանր ինելու պատճառով) և շալկած հասցրել Արևելյան Հայաստան: Ապա երկու մասերը տարբեր ուղիներով հասել են Թիֆլիսի Հայոց ազգագրական ընկերություն, որտեղից էլ բերվել երեվան:

**ՄՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՊԱՏՄԱԲԱՆԸ  
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՄԱՍԻՆ**

*Ով Խորենացի, տես փոքրիկ ածուղ բազմապտուղ և ծաղկալի անդաստան մը դարձած է, ուր քեզի համար այնքան ատելի տգիտությունը իսպառ հաղթահարված է և ուր հայ հայրենասիրությունը պերճաբարբառ կթնդա փոքրիկ աշխարհի մեկ ծայրեն մյուսը:*

*Հրանտ Արմեն*

*Մեզ են գլխից են՝ զարկել, բայց նորեն  
Հայերն ապրել են, ապրում են, կապրեն:  
Հազար դարեր են զարկել, բայց նորեն  
Հայերն ապրել են, ապրում են, կապրեն:  
Եղեռնազարկ էլ եղանք, բայց նորեն  
Հայերն ապրել են, ապրում են, կապրեն:*

*Հովհաննես Շիրազ*



*Մարդ կա, որ հազար արժե, հազար կա, որ մեկ մի չարժե:*

*Այն մարդն, որ հազար արժե, անգետին մոտ փող մի չարժե:*

*Նահապետ Բուշակ*

## **ԱՅԼԳԻՍԻ ԲԱՆ ՇԱՍԱԿԻՐ, ՈՐ ՀԱՐԳԱՆՔՈՎ ՀԱՄՓԱ ՏԱՆ ԶԵՋ**

Կարո Ստեփանի Դավթյանը ծնվել է 1904 թվականին, Վանի նահանգի Կարկառ գավառի Տափ գյուղում: Երեք տարեկան հասակում, 1907 թվականին, ընտանիքի հետ փոխադրվել է հարևան Գյավաշ գավառի Նարեկ գյուղը: 1915-ի Մեծ եղեռնի օրերին թուրքերն սպանել են նրա հարազատներին: Որբացած տղան բռնել է գաղթի ճամփան: Կարոյի մահամերձ մայրը հացի փոխարեն որդու շալակին հայերեն գիրք է դրել: «Մի բան կգտնի՝ կուտի, — մտածել է մայրը, — կարևորն այն է, որ նա ազգությունը չփոխի: Հայերեն գիրք շալակողը այլագգի չի դառնա: Մարդ պիտի այնպիսի բան շալակի, որ հարգանքով ճամփա տան նրան»: Տղան գիրքը շալակին հասել է մինչև Վաղարշապատ:

Հետո որբ տղան կրթություն ստացավ և 1922 թվականից դարձավ հայոց լեզվի ու գրականության ուսուցիչ: 1936 թվականին նա ավարտեց Երևանի մանկավարժական ինստիտուտը: Ապա կյանքի մեծ մասը անցկացրեց Լեռնային Ղարաբաղում: Կարո Դավթյանն ամուսնացավ իր բախ-

տակից, Նույնպես Մեծ եղեռնից մազապուրծ ուսուցչուհի Սալաթի հետ: Նրանք ունեցան չորս գեղանի դուստրեր, որոնցից էլան և Ռազմիկան ապրում են Ստեփանակերտում, մյուս երկուսը՝ Նինելը ու Էմման, Երևանում: Երկար ժամանակ Դավթյանն զբաղվել է Ղարաբաղի բարբառի ուսումնասիրությամբ, որին նվիրված դիսերտացիայի համար էլ նա ստացել է բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: Կարո Դավթյանը մահացել է 1985 թվականին, Ստեփանակերտ քաղաքում, ուր և հանգչում է նրա աճյունը: Իսկ նրա շալակած ու կործանումից փրկված հայերեն ձեռագիր մատյանն այժմ պահվում է Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում:

*Հայը պիտի ապրի, հակառակ դահիճներուն և հակառակ իր առյուծի աչքին տակ բուսած կորեկին: Հայը պիտի ապրի ժողովորդներու սիրազօդ շղթայի մեկ ոսկի օղակն ըլլալու համար: Այս է մեր բոլորիս հույսը. հույս մը, զոր մուրճով կռցցինք, ինչպես մեր պապերեն մեկուն նիզակը, որ նպատակին կդիմեր օդին և արևին մեջ երգելով:*

*Դանիել Վարուժան*



Դու երկնամերձ իմ հայրենիք, դու հինավուրց իմ Հայաստան,  
Անմահ բանի սպասարկու, խորհուրդ խորին, իմ Հայաստան,  
Դու ալևոր տեսիլների աստեղազօծ իմ Հայաստան,  
Եվ նոր խոսքի ավետաբեր, հազարավերք իմ Հայաստան:

Ավետիք Իսահակյան

### ՀԱՅԿԱԿԱՆ ԽՐԱՏԱՆԻ

ժողովուրդը միշտ առաջնորդի  
պետք ունի:

Օերենց

Գիտությունը մենաշնորհի չի  
ճանաչում: Ոչ ոք չի կարող ասել,  
որ ինքը մեկընդմիշտ տիրացել է  
լիակատար ճշմարտությանը և  
իրավունք ունի գիտության բո-  
լոր հարցերում առաջին խոսքն  
ասելու, որպես բռնապետ:

Ստեփանոս Նազարյան

Ճշմարտությունը ամենից երկչոտ  
արարածն է:

Սուրացան

Կինը մեղմ պիտի խոսի, նսրբ,  
դուրեկան ձայնով, ոչ թե ճղճղա:

Հովհաննես Թումանյան

Այն դերասանը, որն աշխատում  
է դուր գալ, նա իր հաջողություն-  
նից մի բան գողանում է:

Միքայել Մանվելյան

Երջանիկ կարելի է համարել  
նաև այն մարդուն, որը իր կյանքի  
ճանապարհին չի հանդիպել չարե-  
րի, գռեհիկների ու պնդաճակատ-  
ների:

Հովակիմ Սուլովյան

(գրող, գրականագետ, մանկավարժ, 1864-1919)

Շատ լեզուների իմացությամբ  
հպարտանալու իրավունք չունի  
նա, ով չգիտե իր մայրենին:  
Երվանդ Շահազիզ

Լքել հիմա Հայաստանը, միև-  
նույն է, թե անցյալ դարերում լքել  
Ավարայրի դաշտը և մենակ թող-  
նել Վարդանին, միևնույն է, թե  
առանց դիմադրելու, հակառա-  
կորդին հանձնել Անիի բանալի-  
ները:

Սիլվա Կապուտիկյան

Հաճախ եմ Բյուրականից նա-  
յում գիշերային երևանին. այն  
նման է մի նոր գալակտիկայի՝  
իր մեծ ու փոքր աստղերով, իր  
կրակներով, գալակտիկա, որ ապ-  
րում է հայերեն կյանքով:

Վիկտոր Համբարձումյան

### ԱՇԽԱՏԱՆՔԻ

ՈՒ ԱՇԽԱՏԱՄԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Գոհունակությամբ աշխատելը  
առանց պսակի չի մնա:

Եզնիկ Կողբացի

Որևէ երկիր՝ ձեռնածալ նստած  
չի կրնար քաղաքակիրթ տիտղո-  
սին արժանանալ:

Ալեքսանդր Սարուխան

(սփյուռքահայ ծաղրանկարիչ, հրապար-  
կախոս, 1898 — 1977)

## ԳՐԱԴԱՐԱՆՍ

Բազմած են շուրջըս նրանք ամեն օր —  
Բոլոր հանձարեղ մեծերն աշխարհքի,  
Երգում են, պատմում ներդաշնակ ու խոր  
Միտքն ու գաղտնիքը մահի ու կյանքի:  
Ու էսպես՝ ինձ հետ, իմ տանն ամեն օր,  
Ոչ հաց են ուզում ինձանից, ոչ շոր:

Հովհաննես Թումանյան


Մարդկությունը կարող է աշ-  
խատասիրությամբ մեր մուրրակը  
դարձնել երկհարկանի:

Ջալալ Տեր-Գրիգորյան  
(մանկավարժ, թարգմանիչ, 1866 — 1940)

Ախր ես ինչպե՛ս վեր կենամ գնամ,  
Ախր ես ինչպե՛ս ուրիշ տեղ մնամ:  
Ախր ուրիշ տեղ հայրեններ չկան,  
Ախր ուրիշ տեղ հորովել չկա,  
Ախր ուրիշ տեղ սեփական մոխրում  
Սեփական հոգին խորովել չկա,  
Ախր ուրիշ տեղ  
Սեփական բախտից խռովել չկա:

Համո Սահյան

Խորհրդային Միության մեջ ազգային լեզվով տպագրված գրքերից  
ամենահինը հայերեն գրքերն են, իսկ հնատիպ գրքերի քանակով  
հայերեն գրքերը զիջում են միայն ռուսերեն գրքերին:



# ՓԵՏՐՎԱՐ

|            |   |    |    |    |
|------------|---|----|----|----|
| ԵՐԿՈՒՇԱԲԹԻ | 5 | 12 | 19 | 26 |
| ԵՐԵՔՇԱԲԹԻ  | 6 | 13 | 20 | 27 |
| ՉՈՐԵՔՇԱԲԹԻ | 7 | 14 | 21 | 28 |
| ՀԻՆԳՇԱԲԹԻ  | 1 | 8  | 15 | 22 |
| ՈՒՐԲԱԹ     | 2 | 9  | 16 | 23 |
| ՇԱԲԱԹ      | 3 | 10 | 17 | 24 |
| ԿԻՐԱԿԻ     | 4 | 11 | 18 | 25 |

Հանրագիտարանը արդեն ավելի քան մի դարուց ի վեր ճանաչված է իբրև անհրաժեշտություն, թե ինտելիգենտ մասսայի և թե նույնիսկ գիտնականների համար: Մարդ ամեն քայլափոխում հանդիպում է հարցերի ու անունների, որոնց մասին տեղեկություն որոնելը հանրագիտարանից դուրս մեծ մասամբ ապարդյուն է անցնում, որովհետև գործնականապես անհնարին է ամեն խընդրի մասին դիմել բազմաթիվ աղբյուրների և մանավանդ հատ-հատ տեղեկությունները ի մի ժողովել՝ մի ամբողջություն դուրս բերելու համար: Ահա թե ինչու լավ կազմված հանրագիտարանը մի նշանավոր գործիք է նաև գրական

ու գիտական հառաջադիմության համար, որպես և զորավոր գործոն է լուսավորություն տարածելու համար՝ ամեն տեսակետից: Մի հայոց հանրագիտարան, թեև լինի նա հայոց լեզվով, անհրաժեշտ ու օգտակար է ոչ միայն հայերի, այլև դա մի գանձ է բոլոր ազգերի համար:

Ավետիք Արասխանյան

(տնտեսագետ, հրապարակախոս, գրականագետ, 1857 — 1912)

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԶԻ  
ՊԱՏՎԻՐԱՆՆ ԻՐ ԺՈՂՈՎՐԴԻՆ  
Իբր հայ, կուզեմ, որ բոլոր ազգակիցներս ամուսնանան և զավակներու ու թոռներու տեր ըլլան, զի համոզված եմ, թե սովորա-

թիվ ցեղերը միայն ապագա ունին մեր հողագնդին վրա:

Մինաս Չերազ

### ՆԵՐՍԵՍ ԱԿՒՆՅԱՆԸ ՀԱԿՈՒՄՍ ՏԱՇՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Մեծ ու հոյակապ բանասեր Հա-կոբոս Տաշյանը կարճահասակ էր, բայց երբ կնվագեր (իսկ նա ըն-տիր սրնգահար էր), կթվար, թե նրա կծկված մարմինը բացվում ու երկարում էր:

Ներսես Ակինյան

### ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆՆ ԻՆՔՆ ԻՐ ՄԱՍԻՆ

Փորձով կարող եմ ասել, որ մի ուրքով կամ մի ձեռքով լինելը շատ վատ բան է, բայց մի աչքով լինելը ոչ մի նշանակու-թյուն չունի: Ահագին Արմատա-կան բառարանս, հինգ հատոր Անձնանունների բառարանս, տա-սը հատորանի Լիակատար քերա-կանությունս և այլն մի աչքի արդ-յունք է:

Հրաչյա Աճառյան

### «ԱՄՄԱՏԵ ԳԱՀ»

Մոսկվայի Կրեմլի զինապալա-տում է գտնվում «Ալմաստե գա-հը», որը պատրաստել են Նոր Ջուլայի հայ վարպետները: Այն Սպահանից Մոսկվա եկած հայ վաճառական Ջաքար Սահրատ-յանը 1660 թվականին նվիրել է Ալեքսեյ Միխայլովիչ ցարին: Գա-հի պատրաստման համար օգ-տագործվել է 897 տարբեր չափսի

ալմաստներ, 1298 մարգարիտ, ամեթիստ, շափուղա, տեպազիոն, հակինթ, 1830 նիշապուրի փի-րուզ, ոսկի, արծաթ: Ժամանակին «Ալմաստե գահը» գնահատվել է 22589 ռուբլի: Այժմյան գներով նրա արժեքն անցնում է մի քանի միլիոն ռուբլուց:



«Ալմաստե գահը»

«Ալմաստե գահը» աշխարհին հայտնի ընտիր գահերից մեկն է:

### ՀԱՇՎՊԱԿԱՆ ՏԵՆԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Խորհրդային Հայաստանում հաշվողական տեխնիկայի զար-գացումը սկսվել է 1950-ական թվականների կեսերից: Հիմնա-կան կենտրոններն են մաթեմա-տիկական մեքենաների գիտահե-տազոտական ինստիտուտը և «Էլեկտրոն» արտադրական միա-վորումը: 1954 — 55-ին հայ գիտնականները Մոսկվայում մաս-նակցեցին Խորհրդային Միություն-ում առաջին էլեկտրոնային հաշ-վիչ մեքենաներից մեկի՝ Մ-3-ի (Ա. Իոսիֆյան, Ի. Բրուկ) մշակմա-նը, որի կատարելագործված «Գո-հար» անվանմամբ տարբերա-կը հետագայում օգտագործվել է

ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի և Երևանի համալսարանի հաշվողական կենտրոնում: 1959 թվականին մշակվեցին մատնաչափ լամպերով, դիոդատրանսֆորմատորային վենտիլներով և ֆեռիտային հիշողության սարքով Խորհրդային Միությունում առաջին՝ «Արագած», իսկ 1960 թվականին՝ «Երևան» առաջին սերնդի մեքենաները: 1961 թվականին՝ նույն՝ մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում ստեղծվեց կիսահաղորդչային տրանզիստորներով ԽՍՀՄ-ում առաջին «Հրազդան-2» էլեկտրոնային հաշվողական մեքենան (գլխավոր կոնստրուկտոր՝ Ե. Բրուսիլովսկի), որը հիմք է ծառայել երկրորդ սերնդի էլեկտրոնային հաշվիչ մեքենաների համար: 1962 թվականին ավարտվեց դիոդատրանզիստորային տրամաբանությամբ ԽՍՀՄ-ում առաջին արագագործ տրամաբանական տարրերի «Մագնի» համալիրի մշակումը: Լայն կիրառություն ստացավ արագագործ տրամաբանական տարրերի օգտագործմամբ 1964 թվականին մշակված երկրորդ սերնդի «Հրազդան-3» (գլխավոր կոնստրուկտոր՝ Վ. Ռուսանեվիչ) մեքենան: 1967 թվականին ՀԽՍՀ ԳԱ և Երևանի համալսարանի հաշվողական կենտրոնում մշակվեց «Գառնի» թարգմանական մեքենան (Ռ. Ուռուտյան, Վ.

Գրիգորյան, Թ. Տեր-Միքայելյան): 1960-ական թվականներին ունիվերսալ մեքենաներից բացի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում ստեղծվեցին մի շարք մասնագիտացված մեքենաներ. «Ստատիստիկա» (Վ. Ռուսանեվիչ և ուրիշներ), «Դվին» (Ռ. Հարությունյան և ուրիշներ), «Արաքս» (Գ. Բելկին և ուրիշներ), «Մարշրուտ» (Ա. Քուչուկյան և ուրիշներ): 1974 թվականին «Մարշրուտ-3» հաշվողական համալիրի հեղինակներն արժանացել են ՀԽՍՀ պետական մրցանակի:

Դեռևս 1960-ական թվականների սկզբներին մեծ մեքենաների մշակմանը զուգընթաց այդ ինստիտուտում սկսվել էին փոքր մեքենաների ստեղծման աշխատանքները: 1964-ին ավարտվեցին «Նաիրի-1», իսկ 1966-ին՝ «Նաիրի-2» փոքր մեքենաների ստեղծման աշխատանքները: 1970 թվականին ստեղծվեց «Նաիրի-3» մեքենան, որն ինտեգրալ միկրոսխեմաներով կառուցված երրորդ սերնդի առաջին ունիվերսալ էլեկտրոնային հաշվիչ մեքենան էր ԽՍՀՄ-ում: «Նաիրի», «Նաիրի-3» սերիայի մեքենաների ստեղծման և ներդրման աշխատանքների համար Հ. Հովսեփյանը, Մ. Բունիաթյանը, Ա. Զակիրովը, Խ. Էլլեգյանը, Ս. Թումանյանը, Վ. Իշինը, Ս. Խաչատրյանը, Հ. Սաղոյանը,



Ֆ. Սարգսյանը 1971 թվականին արժանացել են ԽՍՀՄ պետական, իսկ «Նաիրի — 3-1», «Նաիրի — 3-2», «Նաիրի — 3-3» մեքենաների հիման վրա մշակված համակարգերը 1971 թվականին՝ ՀամԼԿԵՄ մրցանակների: 1976 թվականին ստեղծվել է չորրորդ սերնդի ԽՍՀՄ-ում առաջին «Նաիրի — 4» ունիվերսալ մեքենան (Հ. Հովսեփյան և ուրիշներ), որի



Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի հաշվողական կենտրոնում

հիման վրա 1978 — 79 թվականներին մշակվել են ռադիոինժեներների և մեխանիկ-կոնստրուկտորների ավտոմատացված աշխատատեղերի «Նաիրի — 4 ԱԱ-Ռ» և «Նաիրի — 4 ԱԱ-Մ» հաշվողական համակարգերը (գլխավոր կոնստրուկտոր՝ Գ. Օհանյան): 1978 — 85-ին մշակվել և արտադրության մեջ ներդրվել են «Նաիրի» անվանաշարի մի շարք կատարելագործված էլեկտրոնային հաշվողական մեքենա-

ներ և համալիրներ (գլխավոր կոնստրուկտորներ՝ Հ. Սարգսյան և Վ. Կարապետյան), որոնք օգտագործվում են ավտոմատացված մի շարք համակարգերում:

«Ռյադ-1» և «Ռյադ-2» էլեկտրոնային հաշվիչ մեքենաների մի շարք մոդելների և հաշվողական համալիրների մշակման և ներդրման համար գլխավոր կոնստրուկտոր Ա. Քուչուկյանը 1983 թվականին արժանացել է լենինյան մրցանակի, իսկ մի խումբ մասնագետներ՝ ՀԽՍՀ պետական մրցանակի: «Ռյադ» անվանաշարի մեքենաների ստեղծման ծրագրի սահմաններում մշակվել են նաև գերբարձր արագագործության հատուկ մատրիցային պրոցեսներ (1979 թ., 1986 թ.), որոնց համատեղ օգտագործումը էլեկտրոնային հաշվիչ մեքենաների հետ հնարավորություն է տալիս վերջիններիս արագագործությունը հասցնել վայրկյանում ավելի քան 100 միլիոն համարժեք գործողության (գիտական ղեկավար՝ Մ. Սեմերջյան, գլխավոր կոնստրուկտոր՝ Լ. Գասպարյան): Աշխատանքներ են կատարվել նաև կառավարման ավտոմատացված համակարգերի մշակման և ներդրման ուղղությամբ: 1976 թվականին մի խումբ մասնագետների (Ռ. Աթոյան և ուրիշներ) շնորհիվ է ՀԽՍՀ պետական մրցանակ՝ մասնագիտացված հաշվողական համալիրի մշակման համար: Վեր-

ջինիս հիման վրա կառավարման ավտոմատացված համակարգի ստեղծման համար 1980 թվականին Մ. Սեմերջյանին, Գ. Բաբայանին և ուրիշների շնորհվել է ԽՍՀՄ պետական մրցանակ, իսկ Ռ. Աթոյանին՝ լենինյան մրցանակ: Մեծ աշխատանքներ են կատարվել մագնիսական հիշող սարքերի մշակման բնագավառում: Ուշագրավ է մեծ արագագործությամբ, հիշողության մեծ ծավալով և նուրբ մագնիսական թաղանթներով ԽՍՀՄ-ում առաջին հիշող սարքի մշակումը, որի համար մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի մի խումբ մասնագետներ (Լ. Գրիգորյան և ուրիշներ) արժանացել են ՀԽՍՀ պետական մրցանակի: Սկսած 60-ական թվականներից մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում և էլեկտրոնային արդյունաբերության մյուս հիմնարկություններում էլեկտրոնային հաշվողական մեքենաների ստեղծման աշխատանքներին զուգընթաց կատարվել են ուժային տրանզիստորների տեսության, մաթեմատիկական լեզվաբանության, ունիվերսալ սնման աղբյուրների, նուրբ մագնիսական թաղանթների, շեմային տրամաբանության տարրերի, պատկերների ավտոմատ ճանաչման բնագավառների արժեքավոր հետազոտություններ:



**1990 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 25-ՈՆ  
ԼՐԱՆՈՈՄ Է  
ՋՈՐՎԱՐ ԱՆԴՐԱՆԿԻ  
ՇՆՆՅԱՆ 125-ԱՄՅԱԿԸ**

Թերևս չկա Ռուսաստանի փոքր ազգություններու մեջ որևէ ազգ մը, որ հոգեկան խոր և անխառն հրճվանքով ողջունե ռուսական ազատագրական շարժումները, որքան հայ ժողովուրդը: Ռոսիետև անիկա է եղել ամենեն ասպատակվածը և տուժողը պետական բռնակալ իրավակարգերեն: Մենք, արևմտահայերս առանձին, անմեկին ուրախությունով կողջունենք մեծ Ռուսաստանի ազատական հաղթանակը: Մենք կհավատանք, որ ազատ Ռուսաստան... պիտի անե այնպիսի գործնական քայլեր, որ մեր թշնամին ծունկի գա և զոջումներու զըջումն աղաղակե:

Մենք կհավատանք, որ Ռուսաստան... պիտի կառուցանե մեր ազգային բաղձանքներու կոթողը:

Անդրանիկ

Հէյ վախ, գործս կիսատ մնաց:  
Անդրանիկ

### ՀԱՅԿԱԿԱՆ ԽՐԱՏԱՆԻ

Կինը, եթե սիրի, լեռան ծանրու-  
թյուն կարող է կրել իր հոգում:  
Վահան Թոթովեց

Ջարդի քաղաքականությունը  
սիստեմ մըն է՝ հատուկ բոլոր  
տկար կառավարություններուն:  
Գրիգոր Ջոհրապ

Համբույրները սիրո քերական-  
ութեան միջակետերն են:

Հակոբ Պարոնյան

Պատմության ճանապարհին  
ամենից դանդաղ քայլեր կատա-  
րել է մետալուրգիան: Մի քայլը  
տևում էր գրեթե 2 հազար տարի:  
Առաջին մետաղը մարդը հայտնա-  
գործեց քսան հազար տարի  
առաջ: Ներկայումս մարդկություն-  
ընը օգտագործում է ավելի քան  
50 մետաղ:

Հովհաննես Մաղաթյան  
(երկրաբան, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս)

Ինչպես գեղեցկությունը կնոջ  
մը ամեն պակասությունները կը  
ծածկե կամ կարդարացնե, այն-  
պես ալ մարդու մը համար խելքը  
շատ բան ներել կուտա:

Երվանդ Օտյան

Ովքեր սիրտ ունեն՝ պատե-  
րազմի դեմ են:

Վիկտոր Համբարձումյան

Ամենահեշտը ժխտելն է, ամե-  
նադժվարը՝ հաստատելը:

Սիլվա Կապուտիկյան

Բարին երբեք չի մահանում:  
Եթե մահանար՝ աշխարհում մար-  
դիկ գոյություն չէին ունենա, ոչ մի  
տեղ կյանք չէր լինի:

Վիլամ Սարոյան

Օր մը մեր ցեղը հսկայի մը  
նման պիտի վերականգնի անի-  
րավ աշխարհի առաջ:

Տիգրան Չոկյուրյան

Եթե ազնվությունը խորանարդ  
աստիճանի բարձրացնենք՝ կըս-  
տանանք տվյալ մարդու յոթ պոր-  
տին հատուկ բարության չափա-  
նիշը:

Ռաֆայել Ալեքսանդրյան  
(մաթեմատիկոս, ՀԽՄՀ ԳԱ ակադեմիկոս,  
1923 — 1988)

Երբեմն մի պտղունց բարու-  
թյամբ կարելի է չարության մի  
բլուր փլցնել:

Թաթուլ Ալթունյան

Սովորելուց բացի մարդը կարող  
է վերջակետ դնել ամեն տեղ:

Աբրահամ Ալիխանով  
(ֆիզիկոս, ԽՍՀՄ և ՀԽՍՀ ԳԱ ակադե-  
միկոս, 1904 — 1970)

Արտույտը, վախենալով, որ եր-  
կինքը փուկ կգա, պառկեց մեջքի  
վրա, ոտքերը վեր տնկեց և աշխա-  
տեց դեմ տալ երկնքին: Տեսնող-  
ները ծիծաղեցին նրա վրա և  
ասին.

— Այ խելքի ծով ճնճողուկ,  
դու ոնց կարող ես քո ծղոտե  
ծնկներով պահել երկինքը:

Եվ թռչունը պատասխանեց.

— Ես իմ բաժին երկինքն եմ  
պահում:

Գրիգոր Մագիստրոս Պահլավունի



Հէյ ագահ մարդ, հէյ անհոգ մարդ, միտքդ երկար, կյանքդ կարճ,  
Քանի քանիսն անցան քեզ պես, քեզնից առաջ, քո առաջ.  
Ընչ են տարել նրանք կյանքից, թե ինչ տանես դու քեզ հետ,  
Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվա էս ճամփեդ:

Հովհաննես Թումանյան

Մեր հոյակապ հին վանքերի մուօ խուցերում, մենության մեջ  
Պատմիչները մեր վշտահար, մեղմ կանթեղի լույսով անշեջ,  
Մի նշխարով, մի կոմ ջրով և ճգնությամբ գիշերն անքուն,  
Պատմությունը մեր գրեցին մագաղաթի վրա դժգույն:

Ավետիք Բսահակյան

## ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԵՐԿԱՐԱՅԱՆ ՏՊԱԳԻՐ ՕՐԱՅԻՆՅԸ

1757 թվականից Վենետիկում  
սկսեց լույս տեսնել Վենետիկի  
Մխիթարյան միաբանության՝ գըր-  
պանի հայերեն օրացույցը: Դա  
աշխարհի ամենաերկարակյաց  
տպագիր օրացույցն է, որը ոչ  
մի տարի չի ընդհատվել (234  
տարի): Հայկական այդ օրա-  
ցույցը լույս է տեսնում գրաբար:  
Հրատարակության բնութագիրը  
տվել են իրենք՝ Մխիթարյաննե-  
րը. «Կցուցնե տարվո օրերը, տո-  
ները, պահոց օրերը, օրերու ձայ-  
ները, հունաց և լատինաց և հրեից  
և տաճկաց գլխավոր տոները,  
այլևայլ ազգաց թվականներու

տարեգույնները, արևու շրջանն  
ու փավարումները, օրո գուշա-  
կությունները և այլն. կպարու-  
նակի նաև ամեն տարի մեկ կամ  
ավելի գրաբար ոտանավոր, աստ-  
ղաբաշխական տեղեկություններ,  
ազգային հիշատակաց դարա-  
դարձներ, Մխիթարյան տպարա-  
նեն լույս տեսած նորատիպ գրքե-  
րու կամ ամբողջ հրատարակու-  
թյանց ցուցակներ»:

Օրացույցների ու տարեցույց-  
ների շարքում իր երկարակեցու-  
թյամբ երկրորդ տեղը գրավում է  
«Գոթայի ալմանախը», որը լույս  
է տեսնում 1763 թվականից,  
Գոթա (այժմ ԳՆՀ-ում) քաղա-  
քում, գերմաներեն և ֆրանսե-  
րեն:



# ՄԱՐՏ

|            |   |    |    |    |
|------------|---|----|----|----|
| ԵՐԿՈՒՇԱԲԹԻ | 5 | 12 | 19 | 26 |
| ԵՐԵՔՇԱԲԹԻ  | 6 | 13 | 20 | 27 |
| ՉՈՐԵՔՇԱԲԹԻ | 7 | 14 | 21 | 28 |
| ՀԻՆԳՇԱԲԹԻ  | 1 | 8  | 15 | 22 |
| ՈՒՐԲԱԹ     | 2 | 9  | 16 | 23 |
| ՇԱԲԱԹ      | 3 | 10 | 17 | 24 |
| ԿԻՐԱԿԻ     | 4 | 11 | 18 | 25 |

## ՀԱՅ ԵՐԿԱՐԱԿՅԱՆՆԵՐ<sup>1</sup>

**ԱՌԱՔԵԼՅԱՆ** Առաքել Գևորգի [1(13).1.1887, գ. Խանածախ (այժմ՝ ԼՂԽՄ Ասկերանի շրջանում)—5.5.1980, Երևան], բանասեր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ: Դասախոսել է Երևանի համալսարանում և Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում: Գրել է մի շարք գրքեր, որոնցից մեծարժեք է «Հայ ժողովրդի մտավոր

մշակույթի զարգացման պատմություն» եռահատոր աշխատությունը:

Ապրել է 93 տարի: **ԱՐՂՈՒԹՅԱՆ-ԵՐԿԱՅՆԱԲԱԶՈՒԿ** Սոֆյա Վասիլի (1860, Թիֆլիս — 22.5.1954, Թբիլիսի), հայ մանկավարժ, հասարակական գործիչ: 1881 — 83-ին Թիֆլիսում կազմակերպել է առաջին մանկական գրադարանը, 1886-ին՝ բացել դպրոց-պանսիոն և մանկապարտեզ: Եղել է Թիֆլիսի հայ ուսուցչուհիների միության նախագահ: Դասախոսել է Թիֆլիսի, ապա՝ Երևանի մանկավարժական ինստիտուտներում:

Ապրել է 94 տարի: **ԱՐՄԵՆՅԱՆ** Արմեն (Իփեկյան Ար-

<sup>1</sup> Հոդվածում խոսվում է միայն մշակույթի գործիչ երկարակյացների մասին: Այս փնջի մեջ ընդգրկվել են նրանք, ովքեր ապրել են 91 և ավելի տարի:

մենակ) Եւրիջանի (10.9.1871, Կ.Պոլիս — 18.7.1965, Լենինական), հայ դերասան, ռեժիսոր, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ: Բեմադրել է ավելի քան 100 պիես և խաղացել շուրջ 150 դեր: Արմենյանի ամենահետաքրքիր ռեժիսորական փորձը Արշակ Աթայանի «Սասունցի Դավիթը» պիեսի բացօթյա բեմադրությունն է Ալեքսանդրապոլի «Կազաչի պոստ» վայրում (1922 թ.)՝ իր տեսակի մեջ ինքնատիպ մի թատերահանդես՝ 150 դերակատարներով (երգչախմբեր, հեծելախումբ, փողային նվագախումբ և այլն), ի տես բնական ամֆիթատրոնում տեղավորված հազարավոր հանդիսականների: Լինելով համաժողովրդական թատերահանդեսի գեղարվեստորեն արդարացված մի փորձ՝ այս բեմադրությունը խորհրդանշել է ժողովրդի սոցիալական և ազգային վերածնունդը:

Ապրել է 94 տարի:

ԲԱԲՍՅԱՆ Մարգարիտ Ավետիքի (24.12.1874—18.10.1968), հայ դաշնակահարուհի, երգչուհի (մեցցո-սոպրանո), երաժշտագետ, մանկավարժ: 1904-ից մըշտապես բնակվել է Փարիզում: 1895-ին ծանոթացել է Կոմիտասի հետ, դարձել մերձավոր բարեկամը, 1906-ին և 1914-ին Փարիզում մասնակցել նրա համերգներին: Եռանդուն մասնակցել է կոմիտասյան խնամատար հանձ-

նաժողովին: Հավաքել է Կոմիտասի ձեռագրերը, հրատարակել որոշ գործեր, նրա մասին գրել հոդվածներ:

Ապրել է 94 տարի:

ԳՅՈՒՐՉՅԱՆ Գաբրիել Միքայելի (1892 — 1987), նկարիչ, պրոֆեսոր, ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ: Ստեղծել է հազարից ավելի կտավ: 1939 թվականին կազմակերպել է ԽՍՀՄ-ում կերպարվեստի առաջին շրջիկ արվեստանոց-ցուցահանդեսը:

Ապրել է 95 տարի:

ԳՐԻԳ Գևորգ (Գևորգ Անանի Գրիգորյան, 1893 — 1987), բանաստեղծ, արձակագիր, տնտեսագիտական գիտությունների թեկնածու, մանկավարժ: Ապրել է Թբիլիսիում: Երկար տարիներ ուսուցչություն է արել Անդրկովկասի հայկական դպրոցներում: Լույս են տեսել Գրիգի տասից ավելի գրքեր:

Ապրել է 94 տարի:

ԴԱՎԹՅԱՆ Հովհաննես Արտեմի (1887, Վրաստանի Գորիի գավառի Սուրամ ավան — մայիս 1985, Թբիլիսի), թարգմանիչ, Վրացական ԽՍՀ վաստակավոր ուսուցիչ, լրագրող, երաժշտագետ: Հայերենից թարգմանել է վրացերեն, վրացերենից՝ հայերեն: Թարգմանությամբ են զբաղվել նաև նրա տղաները՝ Արտաշեսն ու Հրաչիկը, որի պատճառով Թբիլիսիում նրանց անվանել են թարգմանչաց ընտանիք:

Ապրել է 98 տարի:  
**ԹՈՐՈՅԱՆ Մանուկ Հարությունի**  
(Թորոյենց Մանուկ, 1864 —  
1958, Երևան), վիպասաց, «Սաս-  
նա ծռեր» հայ ժողովրդական  
էպոսի տասը լավագույն պատում-  
ներից մեկի ասացողն է:

Ապրել է 94 տարի:  
**ԽԱՆՋԱՏՅԱՆ Ջատիկ Հակոբի**  
(3.4.1886, Ջմյուռնիա — 1980,  
Փարիզ), ֆրանսահայ քարտեզա-  
գիր, ՀԽՍՀ գիտությունների ակա-  
դեմիայի արտասահմանյան ան-  
դամ: Կազմել է մի շարք ատ-  
լասներ, որոնց մի մասը նվիր-  
ված է Հայաստանին:

Ապրել է 99 տարի:  
**ԿԱՆԱՅԱՆ Խաչատուր Մկրտչի**  
[27.10(8.11).1881, Իգդիր —  
22.1.1976, Երևան], հայ ման-  
կավարժ, լեզվաբան, պրոֆեսոր:  
Դասախոսել է Երևանի բուհերում:

Ապրել է 94 տարի:  
**ԿԱՐԻՆՅԱՆ (Գաբրիելյան) Արտա-  
շես Բալասիի** (24.11.1886, Բա-  
քու — 29.5.1982, Երևան), խոր-  
հրդային կուսակցական ու պե-  
տական գործիչ, գրականագետ,  
պատմաբան, ՀԽՍՀ ԳԱ ակադե-  
միկոս, սոցիալիստական աշխա-  
տանքի հերոս: Նրա շուրջ չորս  
տասնյակի հասնող աշխատու-  
թյուններից ուշագրավ է «Ակ-  
նարկներ հայ պարբերական մա-  
մուլի պատմության» երկհատոր  
գիրքը (1956 — 60):

Ապրել է 96 տարի:  
**ՀԱԿՈՒԲ ԹՈՒՄԱԹՅԻ** [1563, ք. Եվ-

դոկիա (Թոխաթ) — 1657], հայ  
տաղասաց, թարգմանիչ, գրիչ:  
1593 — 95-ին ապրել է Օլա-  
խաց երկրի (Վալախիա) Յաշ քա-  
ղաքում, ապա հաստատվել Ջա-  
մոսցա հայաշատ քաղաքում  
(Արևմտյան Ուկրաինա): Հեղի-  
նակ է պատմական թեմայով մի  
շարք ողբերի, քնարական տաղե-  
րի: Լատիներենից հայերեն է  
թարգմանել հնդկական ծագում  
ունեցող «Եօթն իմաստասիրաց  
պատմութիւնը» (1614), որը հե-  
ղինակի մահից հետո հրատա-  
րակվել է 9 ասգամ (առաջինը՝  
1696-ին), հայերենից թարգման-  
վել է թուրքերեն, ռուսերեն, վրա-  
ցերեն, ֆրանսերեն: Նրա գրչու-  
թյամբ պահպանվել է 6 ձեռագիր:

Ապրել է 94 տարի:  
**ՄԱՔՍՈՒՊՅԱՆ Մաքս** [15(27).6.  
1881, Իգմիր — 1976, Փարիզ],  
ֆրանսիական թատրոնի և կինո-  
յի հայազգի դերասան: 1893-ից  
բնակվել է Ֆրանսիայում: Խաղա-  
ցել է Սառա Բեռնարի խմբում  
կատարելով գլխավոր դերեր:  
Նկարահանվել է մի քանի տասն-  
յակ կինոնկարներում: Մասնակցել  
է Փարիզի հայ մշակութային  
կյանքին:

Ապրել է 95 տարի:  
**ՄԵԼԻՔՅԱՆ Ալեքսանդր Նիկոլայի**  
(5.2.1877, Հաղրութ (այժմ  
ԼՂՄ-ում) — 16.3.1969, Երևան],  
հայ խորհրդային ինժեներ-տեխ-  
նոլոգ, մաթեմատիկոս, մանկա-  
վարժ, ՀԽՍՀ գիտության վաստա-

կավոր գործիչ: Նախագծել և կառուցել է Երևանի ջրմուղը (1908—1915): 1941 — 61-ին եղել է Երևանի համալսարանի պրոռեկտորը:

Ապրել է 92 տարի:

ՄԻՆԱՍ ԹՈՒԱԹՅԻ [Լովանդացի, Լեհացի, 1510, ք. Թոխաթ (Եվդոկիա) — 1621 կամ 1622], հայ միջնադարյան տաղասաց, գրիչ: Նրա «Ողբ ի վերայ Օլախանաց երկրի հայերուն» հայրենասիրական բանաստեղծության մեջ պատկերված են Մուղավիայի թագավոր Շտեֆան Ռարեշի հալածանքներն ընդդեմ հայերի: Այդ ողբը գրել է որպես դեպքերի ակա՛նատես:

Ապրել է 111 կամ 112 տարի: ՄԻՐՁՈՅԱՆ Վարդան Միրզոյի [10.7 (22.7).1877, գ. Երնջակ (այժմ՝ Նախիջևանի ԽՍՀ-ում) — 24.1.1968, Երևան], հայ խորհրդային դերասան, մանկավարժ, թատերական գործիչ, ՀԽՍՀ ժողովրդական արտիստ: Խաղացել է Բաքվի, Թբիլիսիի, Երևանի թատրոններում:

Ապրել է 91 տարի:

ՄԼՁՈՒՐԻ Հակոբ [Հակոբ Տեմիրճյան, 16.10.1886, գ. Արմտան (Էրզրումի նահանգում) — 1978, Ստամբուլ], հայ գրող: Իր պատմվածքներում վերակենդանացրել է ծննդավայր Արմտան գյուղը, հայրենի բնության հրաշալիքները: Հրատարակվել են նրա «Կապույտ լույս», «Արմտան»,

«Կռունկ, ուստի կուգաս» ժողովածուները:

Ապրել է 92 տարի:

ՇԱՀԱՋԻՋ Երվանդ. Հովակիմի (13.1.1856, Աշտարակ — 12.8.1951, Երևան), հայ խորհրդային գրականագետ, պատմաբան, ազգագրագետ, մանկավարժ, բանասիրական գիտությունների դոկտոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ: Բանաստեղծ Սմբատ Շահազիզի եղբորորդին: Պատմաբանասիրական բազմաթիվ աշխատությունների հեղինակ է: Նրա գործերից են «Հին Երեվանը», «Դիվան Խաչատուր Աբովյանի», «Դիվան Միքայել Նալբանդյանի», «Աշտարակի պատմությունը» աշխատությունները:

Ապրել է 95 տարի:

ՇԱՀԻՆՅԱՆ Մարիետա Սերգեյի [21.3(2.4).1888, Մոսկվա — 20.3.1982, Մոսկվա], արձակագիր, բանաստեղծուհի, հրապարակախոս, գրականագետ, հասարակական գործիչ, սոցիալիստական աշխատանքի հերոս, բանասիրական գիտությունների դոկտոր, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր (1951, «Ճանապարհորդություն Սովետական Հայաստանում» գրքի համար), լենինյան մրցանակի դափնեկիր (1972, «Ուլյանովների ընտանիքը», «Առաջին Համառուսակա՛նը», «Պատմության հարցառո՛մսը», «Չորս դաս Լենինից» գրքե՛-



րի համար), Հայկական ԽՍՀ աշխարհագրական ընկերության պատվավոր անդամ: «Հիդրոցենտրալ» վեպի համար պարգևատրվել է ՀԽՍՀ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով: Հայերենից ռուսերեն է թարգմանել Հովհաննես Թումանյանի, Հովհաննես Հովհաննիսյանի, Ալեքսանդր Ծատուրյանի, Սմբատ Շահագիզի գործերից:

Ապրել է 94 տարի: ՍԱՀԱ Ա ՊԱՐԹԵՎ (29.9.348, Կեսարիա — 7.9.439, գ. Բլուր, Բագրեվանդի գավառում), եկեղեցական, քաղաքական և մշակութային գործիչ, Հայոց կաթողիկոս 387-ից: Եղել է քաջահմուտ հայկաբան և հունաբան, տիրապետել է նաև ասորերենին և պարսկերենին: Օգնել է Մաշտոցին՝ ստեղծելու հայոց գրերը: Հայոց այբուբենի ստեղծումից (405 թ.) հետո նրա հրամանով արգելվել է օտար լեզուներով ու գրություններով ուսուցումը, և ամենուրեք կրթությունն սկսվել է հայերեն: Կարգավորել է հայկական տոնացույցը, գրել է պաշտոնյաներին, հայ ընտանիքին, ամուսնությանը և այլ հարցերին վերաբերող բազմաթիվ կանոններ, գրել և եղանակավորել է շարականներ, մեծ դեր խաղացել Աստվածաշնչի հայերեն թարգմանության գործում:

Ապրել է 91 տարի: ՍԱՐՅԱՆ Մարտիրոս Սարգսի [16(28).2.1880, Նոր Նախի-

ջևան — 5.5.1972, Երևան], հայ մեծ նկարիչ, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ, ԽՍՀՄ գեղարվեստի ակադեմիայի իսկական անդամ, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, սոցիալիստական աշխատանքի հերոս: Նրա կտավները համաշխարհային ճանաչում են ստացել: Ստեղծել է բարձրարվեստ դիմանկարներ, բնանկարներ, նատյուրմորտներ, պաննոներ, ձեվավորել գրքեր, կատարել բեմանկարչական գործեր: 1921-ին Հ. Կոջոյանի հետ ստեղծել է Խորհրդային Հայաստանի գերբը: Մարտիրոս Սարյանը նորագույն շրջանի հայ գեղանկարչության ազգային դպրոցի հիմնադիրն է: «Իմ հայրենիքը» նկարաշարի համար արժանացել է լեհիստան մրցանակի: 1967-ին Երևանում բացվել է Սարյանի տուն-թանգարանը, ուր գտնվում է նրա ստեղծագործական ժառանգության մի զգալի մասը:

Ապրել է 92 տարի: ՍԻՆԱՆ (9.5.1490, գ. Աղրնաս, Կեսարիայի գավառում — 8.6.1588, Կ. Պոլիս), հայազգի ճարտարապետ ու ինժեներ օսմանյան Թուրքիայում: Օսմանյան սուլթանության գլխավոր ճարտարապետը 1539 թվականից: Սինանի կառուցած Սելիմե մզկիթը համաշխարհային ճարտարապետությանը հայտնի է որպես օսմանյան ճարտարապետության գլուխգործոց: 1573-ին սուլթան Սելիմ Երկ-

որորի հրամանով Կեսարիայի հայերը ենթարկվել են զանգվածային տեղահանության և տարվել Կիպրոս կղզի: Իր ազգակիցների տեղահանությունը կանխելու համար Սինանը դիմել է սուլթանին, որը, ընդառաջելով, հրամայել է «արքունի ճարտարապետների գլխավորի» ազգակիցներին ներում շնորհել և Կիպրոս չաքսորել: Այդ վավերագիրը հրատարակվել է թուրքական մամուլում: Սինանը կառուցել է շուրջ 360 շինություն:

Ապրել է 98 տարի:

ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ Երվանդ Գալուստի [7(19).11.1879, Հառիճ (ՀԽՍՀ Արթիկի շրջանում) — 12.7.1974, Երևան], բանասեր, պատմաբան, բառարանագիր, թարգմանիչ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ: Հրատարակել է աղբյուրագիտական բնագրագիտական մի շարք գործեր: Մարքսիզմ-լենինիզմի կլասիկների շատ աշխատություններ բնագրերից թարգմանել է հայերեն:

Ապրել է 95 տարի:

ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆ Սիրարփի Միհրանի (5.9.1896, Կ. Պոլիս — 5.7.1989, Փարիզ), բյուզանդագետ, արվեստաբան, հայագետ, ՀԽՍՀ ԳԱ արտասահմանյան անդամ: Կոթողային է նրա «Հայկական արվեստ» (1977, ֆրան-

սերեն) երկը:

Ապրել է 93 տարի:

ՔՐԱԶՅԱՆ Միհրան Համբարձումի (1889, Վան — 16.3.1986), գրականագետ, մանկավարժ: Ուսուցչություն է արել տարբեր վայրերում: Գրել է արձակագիր Ծերուն Թորգոմյանի ստեղծագործությանը նվիրված մի գիրք, որը լույս է տեսել Թիֆլիսում, 1927 թվականին:

Ապրել է 97 տարի:

### ԱՍՈՒՅԹՆԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԱՍԻՆ

*Ա՛խ, լեզուն, լեզուն. լեզուն որ չըլի, մարդ ընչի՞ նման կըլի... Ձեզ եմ ասում, ձեզ, հայոց նորահաս երիտասարդք, ձեր անոամին մեռնիմ, ձեր արևին ղուրբան. տասը լեզու սովորեցեք, ձեր լեզուն, ձեր հավատը ղայիմ բռնեցեք:*

*Խաչատուր Աբովյան*

*... Մեր մայրենի լեզուն ազգային պարտեզի վարդն է, առանց նրան մենք չունենք հրապույր, առանց մայրենի լեզվի մենք համարյա մեռած ենք:*

*Սիրանույշ*

*Մեր հայրերեն մեզ ավանդված ժառանգությունները, որոնցմե ամեննն շքեղը, ամեննն իրականը ու ամեննն ճշմարիտը մեր գեղեցիկ, հարուստ և մեծավայելուչ լե-*

զուն է, պետք է պահպանենք  
հուզումով, հրայրքով և խանդա-  
վառությամբ, և վստահ եմ, որ  
կպահպանենք:

*Զապել Եսայան*

Զիս պահապան հրեշտակ հայ  
լեզվին կկոչեք. ուր էր թե ունենա-  
լի հրեշտակի մը թևերն ու թռիչ-  
քը, թռչեի հասնեի քաղաքե քա-  
ղաք, դռնե դուռ, և ամեն հայու

սրտին մեջ հրդեհներ հանեի, հայ  
լեզուն սիրելու, գգվելու, անոր  
վրա գուրգուրելու:

*Արսեն Ղազիկյան*

Հայոց վիշտը անհուն մի ծով,  
Խավար մի ծով ահագին,  
Էն սև ծովում տառապելով,  
Լող է տալիս իմ հոգին:

*Հովհաննես Թումանյան*

**Եթե բոլոր ազգերը բարեկա-  
մանան միմյանց հետ, ապա հա-  
մայն աշխարհը յոթ անգամ մեծ  
կերևա նրանց աչքին:**

*Հայկական ժողովրդական առած*



# ԱՊՐԻԼ

|            |   |    |    |    |    |
|------------|---|----|----|----|----|
| ԵՐԿՈՒՇԱԲԹԻ | 2 | 9  | 16 | 23 | 30 |
| ԵՐԵՔՇԱԲԹԻ  | 3 | 10 | 17 | 24 |    |
| ՉՈՐԵՔՇԱԲԹԻ | 4 | 11 | 18 | 25 |    |
| ՀԻՆԳՇԱԲԹԻ  | 5 | 12 | 19 | 26 |    |
| ՈՒՐԲԱԹ     | 6 | 13 | 20 | 27 |    |
| ՇԱԲԱԹ      | 7 | 14 | 21 | 28 |    |
| ԿԻՐԱԿԻ     | 1 | 8  | 15 | 22 | 29 |

Հայերենը հայուն խորհուրդն է:  
Ես հայ եմ, և դուք գիտեք,  
թե ինչ դժվարին և միանգամայն  
ինչ հրաշալի է այդ:

Հայ ժողովրդի ազնվությունը,  
քաջությունը, ուշիմությունը, հեզ-  
նանքն ու սրամտությունը ժա-  
ռանգությունն են բոլոր ճշմարիտ  
հայերի:

Ես չեմ կարող իմ ինքնության  
մասին մտածել հայությունից  
դուրս: Սա ինձ համար այնքան  
հիմնական է, որքան առաջին կայ-  
ծը կյանքի:

Դուք ինձի պես ուրիշ տեղ  
ծնած չեք, դուք հայրենիք ծնած  
եք: Ձեր բախտ հիմա չեք կրնա  
հասկնալ... Ձեզմե շատեր պիտի

այցելեն ամբողջ աշխարհի, պիտի  
տեսնեն շատ գեղեցիկ ու անուշ  
տեղեր ու պիտի հասկնան, որ  
ավելի գեղեցիկ ու անուշ տեղ  
չիկա, քան հայրենիք:

Վիլյամ Սարոյան

Հին աշխարհքը ամեն օր  
Հազար մարդ է մտնում նոր,  
Հազար տարվան փորձ ու գործ  
Ըսկսվում է ամեն օր:

Հովհաննես Թումանյան

Խաղերով լի այս աշխարհում  
Խաղդ եթե տանուլ տաս՝  
Ջվարթ եղիր, ու դրանով  
Բախտի վրա կխնդաս:

Ավետիք Իսահակյան



Վ. Ի. Լենին

**ԱՊՐԻԼԻ 21-ԻՆ ԼՐԱՆՈՒՄ Է  
ՎԱԿՄՈՒՐ ԻԼՅՈՒՆ ԼԵՆԻՆԻ  
ՇՆՆԴՅԱՆ 120-ԱՄՅԱԿԸ**

Գիտեք թե աշխարհի  
արգանդից  
Ինչքան հանճարեղ մարդիկ,  
Ինչքան, ինչքան Կրոմվել,  
Կամ հնդիկ Գանդի —  
Անթիվ  
Եղել են,  
Կան դեռ  
Ու կգան,  
Այնինչ Իսիշո — մեկ է,  
Ուրիշ Իսիշ — դժվար թե,  
Ուրիշ Իսիշ — չկա:  
Եղիշե Չարենց

**ՀԱՅԿԱԿԱՆ ԽՐԱՏԱՆԻ**

Հայի արյունը դարձել է հայոց  
պատմության շենքի շաղախը:  
Վարդգես Սուրենյանց

Կան երջանկություններ, որոնք  
միայն քսվում են մեզ ու անցնում:  
Մետաքսյա Սիմոնյան  
(ԽՍՀՄ ժողովրդական արտիստուհի)

Մեծ անվանց ներքև հաճախ  
պզտիկ բաներ կպահվին:  
Հակոբ Պարոնյան

Աշխարհքում հաստատ մի բան  
կա մենակ,  
Այն է, որ հաստատ ոչ մի բան չկա:  
Հովհաննես Թումանյան

Նախանձի զգացումը երևի կեն-  
դանական բնազդ է, որ մնացել  
է մարդու մեջ:

Վիկտոր Համբարձումյան

Կնոջ սերն էլ թե հյուլենների  
բաժանես՝ սիրո պայթյունն ավելի  
ուժգին կլինի:

Արտեմ Ալիխանյան  
(Ֆիզիկոս)

Կան երկու տեսակ ստախոսներ:  
Առաջինը չարամիտ ստախոսներն  
են, երկրորդը՝ ոգևորությունից  
չափի զգացումը խախտողները:  
Վերջիններիս կարելի է խղճալ,  
բայց ոչ ներել:

Արշակ Ալպոյաճյան

Աղքատությունը ձորձ է, պարտ-  
քը՝ կրակն շապիկ:

Փանոս Թերլեմեզյան

Աղթամարի Սուրբ խաչ տա-  
ճարի պատկերաքանդակները դի-  
տող բոլոր հայ նկարիչների ձեռ-  
քերը դողում են. դրանցից լավն էլ  
ինչպես արարես:

Եղիշե Թադևոսյան

Իսկական բանաստեղծական  
տաղանդը միշտ պարզ է ու բնա-  
կան, այնինչ անշնորհքությունը,  
որպես կանոն, դիմում է արհես-  
տական բարդացումների, հնա-  
րում կեղծ դրություններ ու զգաց-  
մունքներ: Ճիշտ է, դրա շնոր-  
հիվ անտաղանդ գրողը երբեմն  
որոշ մարդկանց գրավում է,  
շլացնում, բայց դա չի կարող  
երկար տևել, և ժամանակը այդ-

պիսի գործերը դատապարտում է  
մահվան:

Էդվարդ Ջրբաշյան

Եթե դիմենք պատկերի օգնու-  
թյան, ապա հին շրջանի գրական  
քննադատությունը շատ նման է  
այն ոսկի հատիկներին, որոնք  
որոշ քանակով, ձևականորեն,  
բայց ցրված երևան են գալիս  
ուրիշ հանքատեսակների հետ  
միասին, դառնալով ուրույն բա-  
ղադրիչ ընդհանուր նստվածքի  
մեջ:

Հրանտ Թամրազյան

Բառարանի մեջ արտացոլվում  
է ժողովրդի պատմությունը, քա-  
ղաքակրթության աստիճանը,  
ոգին, մտածողությունը, ճաշակը:

Պարույր Սևակ

Երբ ասում են Հայաստան՝  
ակամա ոտքի եմ կանգնում:  
Ռաֆայել Իսրայելյան  
(ճարտարապետ)

Վատ ուսուցիչը աշակերտի  
խորթ ծնողն է դպրոցում:

Իվան Աթայան

(ԽՍՀՄ ժողովրդական ուսուցիչ,

ԼՂՄ Ասկերանի շրջանի

Ավետարանոց գյուղի միջնակարգ  
դպրոցի դիրեկտոր)

## ՄԵՇ ԵՂԵՆՆԻ 75-ԱՄՅԱԸ

75 տարի առաջ օսմանյան  
Թուրքիայում սկսվեց արևմտահա-

յության զանգվածային կոստրածը, որը շարունակվեց մի քանի տարի: Հայերի ցեղասպանությունը կազմակերպել են թուրքական կառավարողները՝ կայզերական Գերմանիայի աջակցությամբ և արևմտյան տերությունների թողտվությամբ:

Թուրք բռնակալները, հրով ու սրով նվաճելով Արևմտյան Հայաստանը, հայերի նկատմամբ սկզբից ևեթ վարել են պետական քաղաքականության աստիճանի բարձրացրած բարբարոսական գիծ: Դավանելով պանթուրքիզմի ու պանիսլամիզմի հետադիմական գաղափարախոսությունը՝ թուրք իշխողները ձգտում էին ոչ միայն պահպանել Օսմանյան կայսրությունը և բռնությամբ ոչնչացնել կամ ձուլել-թուրքացնել հպատակ ժողովուրդներին, այլև ստեղծել համաթուրանական տերություն, որի մեջ կմտնեին բոլոր մահմեդականները: 1894 — 1896-ին Թուրքիայում կազմակերպվեց ավելի քան 300 հազար հայերի կոտորածը: 1909 թվականին Ադանայում և նրա շրջակայքում սպանվեցին 30 հազար հայեր:

Առաջին համաշխարհային պատերազմը արձակեց թուրք բարբարոսների ձեռքերը: 1915 թվականի թուրքական կառավարության հրահանգներից մեկում (որն ուղղված էր նահանգապետներին) գրված է. «Թեև հայկական տարրի

ոչնչացման հարցը... վաղուց էր վճռված, հանգամանքները թույլ չեն տվել իրականացնել այդ սրբազան գործը: Ներկայումս, երբ բոլոր խոչընդոտները վերացված են և վրա է հասել մեր հայրենիքը այդ վտանգավոր տարրից ազատելու ժամանակը, հաստատակամորեն հանձնարարվում է չենթարկվել խղճի խայթին՝ նրանց թշվառ դրությունը տեսնելով, այլ ոչնչացնել բոլորին և ամեն կերպ ձգտել վերացնելու «Հայաստան» իսկ անունը Թուրքիայում: Հետևեցեք, որպեսզի այդ խնդրի կատարումը վստահվի հայրենասերների ու հուսալի մարդկանց»:

Երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը բռնակալական Թուրքիայի մշտապես իրականացվող հայահալած գծի անմիջական ու կատաղի շարունակությունն էր: Այդ քաղաքականության հիմքում դրված էին այսպես կոչված շարժառիթ — «պատճառներ», յուրատեսակ տնտեսական ու քաղաքական նկատառումներ: Թուրք բռնակալ կառավարողները չէին հանդուրժում, որ Օսմանյան կայսրությունում, ինչպես նշել է Ֆ. Էնգելսը, հպատակ քրիստոնյա ժողովուրդները, այդ թվում նաև հայերը, հանդիսանում էին քաղաքակրթության, տնտեսական ու մշակութային առաջընթացի կրողները, որ նրանք չէին հաշտվում իրենց անլուր ճնշման հետ

և մղում էին ազատագրական պայքար, որ քրիստոնյա հայերը «սեպի» նման խրվել են այսպես կոչված «իսլամական համատարած գոտու» մեջ, ունեն ռուսական կողմնորոշում և խանգարում են իրենց համաթուրանական նկրտումների իրականացմանը, որ



Կոմիտաս. Պարույր Սևակի «Անլուելի զանգակատուն» պոեմի համար Գրքոգոր Խանջյանի նկարազարդումներից

Հայկական հարցը դարձել է Արևելյան հարցի բաղկացուցիչ մասը և միջազգային դիվանագիտության առարկա:

Երիտթուրքերի պարագլուխներն ու մյուս գործիչները, ահաբեկված ռուսների առաջխաղացումից և Անգլիայի ու Ֆրանսիայի հարձակումից, 1915 թվականի սկզբին գումարեցին գաղտնի խորհրդակցություն, որտեղ հատկապես քննարկեցին հայերի ոչնչացման հարցը: Խորհրդակցության ղեկավար, Թուրքիայի ներքին գործերի մինիստր Թալեթ փաշան կատաղի ատելությամբ ազդարարեց, որ «պետք է մաքրել հայերի հաշիվը» և խոս-

տացավ դրա համար ոչինչ չխնայել: 1915 թվականի ապրիլի 15-ին Թալեթի, Էնվեր փաշայի ու Լազըմի ստորագրությամբ տեղական իշխանություններին է ուղարկվում հայերի համատարած բռնագաղթի ու ջարդերի կազմակերպման հրաման, որտեղ նշված էր. «Իսլամ և թուրք ժողովուրդը ներկայացնող կառավարությունը և «Միություն և առաջադիմություն» կոմիտեն, միացած ուժերով, ինչ որ ալ պատահի, որևէ հաշտության սեղանի վրա, որևէ ձևով հայկական հարցի մը դրվելը կանխելու համար, օգտվելով պատերազմի մեզ բերած սա անկախութենեն, որոշեցինք վերջնական հաշվեհարդարի ենթարկել զայն, բնաջնջելով անհարազատ այդ տարրը, քշելով զանոնք դեպի Արաբիո անապատները, համաձայն տրված մեր գաղտնի հրահանգին... Արդ, կառավարությունն ու Իթթիհատի մեծ կոմիտեն կոչ կընենք ձեզ և ձեր հայրենասիրության և կիրամայենք, որ ձեր բոլոր տրամադրելի ուժերով աջակցեք «Միության և առաջադիմության» տեղական մարմիններու, որոնք 24 ապրիլի արևածագեն սկսյալ, գաղտնի ծրագրի մը համաձայն, գործադրության պիտի դնեն այս հրամանը: Որևէ պաշտոնատար ու անհատ, որ կհակառակի այս սրբազան ու հայրենասիրական գործին ու չի տրամադրվիր իրեն հանձնված



պարտականության և որևէ ձևով այս կամ այն հայը պաշտպանելու կամ պահելու փորձ կընե, հայրենիքին և կրոնքին թշնամի կնըկատվի և ըստ այնմ ալ կպատըծվի»:

Մահաբեր պահը 1915 թվականի ապրիլի 24-ն էր, երբ բանտ նետվեց հայ մտավորականների առաջին խումբը: Այնուհետև շարունակվեցին ձերբակալությունները: Կարճ ժամանակում բանտարկյալների թիվը հասավ շուրջ 800 հոգու, որոնց մեջ կային գրողներ, գիտնականներ, արվեստագետներ, մանկավարժներ, հրապարակախոսներ, դերասաններ, բժիշկներ, հոգևորականներ, հասարակական գործիչներ, այդ թվում թուրքական մեջլիսի հայ երեսփոխաններ: Նրանց բոլորին ըջեցին Անատոլիայի խորքերը և գազանաբար սպանեցին: Զոհվածների մեջ էին Գրիգոր Զոհրապը, Սիամանթոն, Դանիել Վարուժանը, Ռուբեն Սևակը, Ռուբեն Զարդարյանը, Երուխանը, Հովհաննես Թլկատինցին, Արտաշես Հարությունյանը, Տիգրան Չյուկյուրյանը:

Մեծ ոճիրը իր գագաթնակետին հասավ արևմտահայության զանգվածային տեղահանությամբ ու կոտորածով: Այդպես վարվեցին Թուրքիայի բոլոր հայկական նահանգներում ու հայաբնակ վայրերում: Թալեաթ փաշան 1915-ի սեպտեմբերի 9-ին կարգադրել էր.

«Թուրքական հողի վրա հայերի ապրելու և աշխատելու իրավունքը լիովին վերացված է: Դրան համապատասխան կառավարությունն իր վրա է վերցնում ամբողջ պատասխանատվությունը և հրամայում է չինսայել նույնիսկ օրորոցի մանուկներին»:

Հայերի բնաջնջումը տեղի ունեցավ ամենաբազմազան ու բիրտ եղանակներով:

Պատերազմն անակնկալի բերեց արևմտահայությանը, նա պատրաստ չէր ինքնապաշտպանության: Այնուամենայնիվ, նա չէր կարող անմոռուչ տանել թուրքական վայրագությունները և, որտեղ հնարավոր էր, դիմեց անձնվեր գոյամարտի: Այդպիսի կռիվներ տեղի ունեցան Վանի նահանգի մի քանի վայրերում Շատախում, Հայոց ձորում, Արձեշում, Թիմարում և այլուր: Առավել նշանավոր էր Վանի ինքնապաշտպանությունը, որը տևեց 1915 թվականի ապրիլի 7-ից մինչև մայիսի 6-ը: Դյուցազնական էին Մուշի, Սասունի, Շապին Գարահիսարի, Մուսա լեռան, Ուրֆայի հերոսամարտերը:

Թուրքական բռնակալության ցեղասպանության քաղաքականությունն ընդգրկեց Օսմանյան կայսրության բոլոր հայաբնակ վայրերը: Հայերի բնաջնջումը իրականացվեց թե՛ տեղերում, թե՛ բռնագաղթի ճանապարհներին և թե՛ աջոտրավայրերում Միջա-

գետքի անապատներում, հատկապես Դեյր էզ Ջորում: Եթե 1914-ին Օսմանյան կայսրությունում ապրում էր մոտ 3 միլիոն հայ, ապա նրանցից ավելի քան 1,5 միլիոնը բնաջնջվեց, իսկ մնացածը տառապելով գաղթեց աշխարհի այլևայլ կողմեր:

Ցեղասպանությունը ծայրագույն հանցագործություն է մարդկության դեմ, հետևապես նրա հանցավորների վրա չի կարող տարածվել վաղեմ ության իրավունքը:

Մեծ եղեռնի զոհերի հիշատակը հայ ժողովրդի չսպիացող վերքն

*Ինչպես չսիրեմ երկիր իմ կիզված,  
Դու յոթնապատիկ խոցված տիրամայր...*

*Ո՛ւր ես, ո՛ւր ես կորած ծննդավայր,  
Քարե անտաշ իմ տուն, հեռվում ի՞նչ ես անում:  
Տեսնես մեր հին բակում դալար եղրևանու  
Թուփը բուրճում է դեռ, թե կտրել են վաղուց:*

*Ո՛վ մարդկային արդարություն, թող որ թքնեմ քո ճակտին:*

Հայոց դեմ գործադրած ցեղասպանության ոճիրին իբրև արդյունք, Թուրքիա գրավեց ջարդված և տարագրված 3 միլիոն հայերու ահագին հարստությունը, — շեն քաղաքներ ու գյուղեր, առավել՝ ստացվածք, ապրանք, առևտուր, որոնք միայն կանխիկ ոսկիի արժեքը քանի մը տասնյակ միլիարդի կհասներ: Եվ թուրքերը ունեցան շուրջ

է: Ապրիլի 24-ը դարձել է հայոց անմեղ զոհերի հիշատակի օրը, որ ամեն տարի նշվում է մայր Հայաստանում և սփյուռքում: Երևանի Ծիծեռնակաբերդ բլրի վրա բարձրացող Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանը (հիմնադրվել և կառուցումն սկսվել է 1965-ին, ավարտվել և բացվել է 1967-ին) դարձել է ամենայն հայոց սրբավայրը: Ամեն տարվա ապրիլի 24-ին հուշարձանին այցելում և ծաղկեպսակներ է դնում կես միլիոնից ավելի մարդ:

*Վահան Տերյան*

*Վահագն Դավթյան*

*Սիամանթո*

300000 քառակուսի մղոն տարածությամբ հողամաս, 85 առ հարյուրը մշակելի, փարթամորեն արգավանդ հովիտներով ու դաշտերով:

*Անդրանիկ Անդրեասյան*

*(սփյուռքահայ մշակութային գործիչ)*

*Հայկական Սովետական  
Սոցիալիստական  
Հանրապետության օրենքը*



## ՕՍՏԱՆՅԱՆ ԹՈՒՐԵՄԱՅՈՈՒՄ ՀԱՅԵՐԻ 1915 ԹՎԱԿԱՆԻ ՅԵՂԱՍԴԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԴԱՐՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Գերագույն սովետը ՈՐՈՇՈՒՄ է.

1. Դատապարտելով 1915 թվականին օսմանյան Թուրքիայում հայերի ցեղասպանությունը, որպես մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն, ապրիլի 24-ը հայտարարել հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր:

2. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահություն առաջարկություն ներկայացնել հայերի 1915 թվականի ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու մասին:

3. Հանձնարարել Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին Հայաստանի արհմիությունների խորհրդի հետ համատեղ քննության առնել և լուծել ապրիլի 24-ը ոչ աշխատանքային օր հայտարարելու հարցը, հանգստյան օրերից մեկը տեղափոխելով այդ օրը:

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի  
Նախագահության նախագահ՝  
Զ. ՈՍԿԱՆՅԱՆ

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի  
Նախագահության քարտուղար՝  
Ն. ԱՏԵՓԱՆՅԱՆ

22 նոյեմբերի 1988 թվականի, քաղ.  
երևան

## ՄԱՆՏՈՆՅԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԻ ՀԱՎԵՐԺՈՂ ՈՂԻՆ

Փառք հայ տառերուն, որոնք  
անիմանալի խնամիությամբ մո-  
գական գրիչներու տակ հավաք-  
ված՝ եղիշեի լեզուն ոսկի ըրին,  
Բագրատունիինը՝ աղամանդ, և  
Ալիշանինն ու Հայրիկինը՝ մեղր  
քաղցրախոս: Հայ լեզուն այդ  
տառերու սանդիխամատերուն  
վրա ոտն առ ոտն բարձրացավ  
ամեն դարու ճակատին վրա, հոն  
փորագրելու համար անմահու-  
թյունը մեր ցեղին:

Դանիել Վարուժան

Հայկական գիրը աշխարհի  
հնագույն և ինքնատիպ այբուբեն-  
ներից է: Այն ստեղծել է Մաշ-  
տոցը 405 թվականին: Դա ժամա-  
նակի ու պատմության թելա-  
դրանքի արգասիք էր, գալիք ար-  
հավիրքներին դիմակայելու հայ  
ժողովրդի հոգևոր զրահը:

Հինգերորդ դարի սկզբին հայ  
Արշակունի թագավորների գահա-  
տոհմը մայրամուտ էր ապրում:  
Թագավորության վերացումից հե-  
տո Հայաստանը պիտի բզկտվեր  
ու դառնար ամեն տեսակ հրո-  
սակի ոտքի կոխան: Ընչհն կարող  
էր կառչել հայ ժողովուրդը,  
ինչ լուսավոր հենասյան պիտի  
կոթներ մեջքը: Ազգային դիմագի-  
ծը պահելու և իր գոյությունը  
հարատև դարձնելու ամենաու-  
սալի զենքը մայրենի լեզուն էր,  
իսկ մայրենի լեզուն հավերժա-



կան դարձնելու միակ միջոցը՝ ազգային գիրը: Եվ Մաշտոցը ստեղծեց հայոց այբուբենը: Հայն սկսեց կարդալ ու հասկանալ հային: Ոչինչ չէր կարող ազգն այնպես միավորել, ինչպես ազգային գիրը: Մաշտոցյան այբուբենը հնարավորություն տվեց պատմության դաժան ճամփաներով անցնող հայ ժողովրդին իր հոգեվոր գանձերը փոխանցել մի դարից մյուսը, անցյալը կապել ներկայի, ներկան՝ գալիքի հետ: Եվ 405 թվականից հետո գրագետ դարձան հայկական դարերը:

Հայոց այբուբենը հոգևոր ավիշ է, որով ներարկվել են բոլոր հայերը: Տառերի գյուտի ամենամեծ խորհուրդն այն էր, որ հայ երեխաները հաճախեցին հայկական դպրոց և Հայաստանում օտարալեզու (մասնավորապես՝ հունական ու ասորական) դպրոցները տարածում չգտան: Հայկական դպրոցը դարձավ նենգադավ ձուլումից հայությունը պահպանելու ամենավստահելի վահանը:

Հայերեն գրված առաջին նախադասությունը՝ «Ֆանաչել զիմաստություն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ», հավաստում է, որ հայ ժողովուրդը գրավոր խոսքի է անցել իմաստնաբար:

Մաշտոցը ստեղծել է 36 տառ, որոնք լրիվ համապատասխանում են հայ մարդու արտաբերած բոլոր հնչյուններին:

Հայկական այբուբենի մասին

Ֆրանսիացի ականավոր լեզվաբան Անտուան Մեյեն գրել է. «Հայտնի է, որ հայ այբուբենը գլուխգործոց մըն է: Հայ հնչաբանական հնչյուններեն յուրաքանչյուրը հատուկ նշանով մը նոթագրված է, և այդ համակարգը այնքան լավ հաստատված է, որ հայ ազգին հայթայթած է հնչաբանության վերջնական արտահայտություն մը, արտահայտություն, որ պահպանված է մինչև այսօր առանց փոփոխություն մը կրելու: Ատոր հետևանքով Հայաստան ունեցավ ճկուն գրական լեզու մը, որ հայուն բառապաշարին բոլոր արժեքները կարտաբերե: Այսպես կազմվեցավ գրական լեզու մը, որը ճոխ է և որ կրնար արտահայտելու ամեն ինչ, որ հույն լեզուն կարող էր բացատրել: Այդ լեզվին ճոխությունն ու ճկունությունը ուժ մը եղած է հայ ազգին համար»:

Գրավոր խոսքի անցնելուց հետո հայերենի «ճոխությունն ու ճկունությունը» երևաց հենց սկզբից՝ Աստվածաշնչի թարգմանության ժամանակ: Երևի քչերը գիտեն, որ Սուրբ գիրքը աշխարհի բոլոր լեզուներում կոչվում է Բիբլիա, և միայն հայերենն է, որ ի զորու է եղել ճշգրիտ թարգմանել այն՝ Աստվածաշունչ: Լեզվի գեղեցկության հետ հայերեն Աստվածաշունչն ունի մի այլ արժանիք ևս. այն, լինելով խիստ հայեցի, միաժամանակ զարմա-



նալիորեն ճիշտ է արտացոլում բնագրի միտքն ու ոգին: Այդ պատճառով էլ ֆրանսիացի նշանավոր գիտնական Լա Կրոզը Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը համարել է թագուհի բոլոր թարգմանությունների մեջ: Իսկ ռուսինացի նշանավոր բանասեր Լիկոլա Յորգան գրել է. «Աստվածաշնչի Ձեր թարգմանությունը ասկե 15 դար առաջ մեկն է ամենեն մեծ հոգեկան հաղթանակներեն, զորս երբևիցե ժողովուրդ մը կրնա տարած ըլլար պատմության մեջ»:

Մաշտոցյան այբուբենով միայն Աստվածաշունչը չէ, որ թարգմանվեց: Հին աշխարհի նշանավոր հեղինակների շատ գործեր էլ թարգմանվեցին հայերեն: Այժմ համաշխարհային մշակույթի մի շարք երկեր, որոնց բնագրերը կորել են, պահպանվել են միայն հայերեն թարգմանությամբ: Մաշտոցյան այբուբենով ստեղծվեց նաև ինքնուրույն հայկական գրականություն ու գիտություն: Հայ գրավոր խոսքի համամարդկային արժեքը ավելի դիպուկ է բնորոշել Անտուան Մեյեն. «Երբ կազմավորվել է հայ գրականությունը, ժամանակակից եվրոպայի մեծ ազգերից ոչ մեկը չկար դեռևս, ոչ Ֆրանսիայի մասին խոսք կար, ոչ էլ Անգլիայի: Հայ ազգային գրական հեղինակություններն այնպիսի հնություն ունեն, որ շատ դարերով գերազանցում են եվրո-

պական ազգերի մեծամասնության հեղինակություններին: Այն ժամանակ, երբ Ֆրանսիա անունը նույնիսկ գոյություն չուներ, Հայաստանը մեծ դեր է խաղացել պատմության մեջ, այն ժամանակներում, երբ ֆրանսերենը դեռևս չէր տարբերվում լատիներենից, գոյություն ուներ հայերեն կարեվոր գրականություն»:

Հազարազանձ հայերենով են գրվել մարդկային մտքի փառահեղ շատ կոթողներ, այդ թվում՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» հանձարեղ երկը, փիլիսոփաներ Եզնիկ Կողբացու և Դավիթ Անհաղթի երկերը, Գրիգոր Մագիստրոս Պահլավունու նշանավոր «Թղթերը», Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմը, Ներսես Շնորհալու, Կոստանդին Երզնկացու, Լահապետ Քուչակի անզուգական բանաստեղծությունները, Միքայել Նալբանդյանի, Մկրտիչ Պեշիկթաշյանի, Ռաֆայել Պատկանյանի հուրհրատող տողերը, մեծանուն Բաֆֆու հայրենաշունչ վեպերը, Պետրոս Դուրյանի, Հովհաննես Թումանյանի, Վահան Թեքեյանի, Շիրվանզադեի, Վահան Տերյանի, Միսաք Մեծարենցի, Սիամանթոյի, Դանիել Վարուժանի, Գրիգոր Ջոհրապի, Արշակ Չոպանյանի, Եղիշե Չարենցի, Ալսել Բակունցի, Դերենիկ Դեմիրճյանի, Ստեփան Ջորյանի, Ավետիք Իսահակյանի, Պարույր Սևակի, Հով-

հաննես Շիրազի գրական գոհարները, մեծ երգիծաբաններ Հակոբ Պարոնյանի և Գրիգոր Օտյանի դասական գործերը:

Երկայումս մարդկությունը խոսում է երկու հազարից ավելի լեզուներով: Համարյա չորսից մեկը խոսում է չինարեն: Մեծ թիվ են կազմում անգլերեն, ռուսերեն, իսպաներեն, արաբերեն, ճապոներեն, ֆրանսերեն խոսողները: Կենդանի բոլոր լեզուների մեջ խոսողների քանակով հայոց լեզուն գրավում է 38-րդ տեղը:

Հայերենը Խորհրդային Հայաստանի պետական լեզուն է:

Մաշտոցյան գրի ստեղծումից հետո հայերեն տառերն օգտագործվել են նաև իբրև թվարժեքներ: Այդ տառ-թվերով են ստեղծվել միջնադարյան Հայաստանի ճշգրիտ գիտություններին վերաբերող բոլոր գրքերը: Հայերեն 36 տառերը գրվել են 9-ական տառ պարունակող 4 շարքով, որոնք համապատասխանորեն նշանակում են՝ միավորներ, տասնավորներ, հարյուրավորներ և հազարավորներ:

|     |      |
|-----|------|
| ա=1 | ժ=10 |
| բ=2 | ի=20 |
| գ=3 | լ=30 |
| դ=4 | խ=40 |
| ե=5 | ծ=50 |
| զ=6 | կ=60 |
| է=7 | հ=70 |
| ը=8 | ձ=80 |
| թ=9 | ղ=90 |

|       |            |
|-------|------------|
| ճ=100 | ռ=1000     |
| մ=200 | ս=2000     |
| յ=300 | վ=3000     |
| ն=400 | տ=4000     |
| շ=500 | ր=5000     |
| ո=600 | ց=6000     |
| չ=700 | ւ(ու)=7000 |
| պ=800 | փ=8000     |
| զ=900 | ք=9000     |

Այս 36 տառերի զուգորդմամբ կարելի է գրել 1-ից մինչև 9999 բոլոր ամբողջ թվերը, օրինակ, ծա=51, ոջղ=1990, քջղթ=9999: Հետագայում հայկական այբուբենում ավելացված օ տառը նշանակել է 10000: Մեծ թվերի համար հայերն ունեցել են հատուկ անվանումներ և պայմանանշաններ: Օրինակ, 10000-ը անվանել են բյուր և նշանակել՝  $\wedge$ , որը դրվելով տառ-թվանշանի վրա, այն մեծացրել է 10000 անգամ: Այսպես՝  $\hat{a}=10000$ ,  $\hat{b}=20000$ ,  $\hat{d}=100000$ ,  $\hat{p}=9000000$ :

*Երբ ես տեսնում եմ աշկարա գողին  
 Կյանքին տիրացած՝ փարթամ  
 ապրելիս...  
 Իսկ ինձ ասում են՝ շիտակ  
 ապրողին  
 Կյանքը մեկի տեղ հազար է  
 տալիս,  
 Ծիծաղս է գալիս...  
 Ալեքսանդր Մատուրյան*

## ՄԻ ԴՐԱԿ ԱՆԴԿՈՒԿԱՍԻ ԺՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՎԱՍՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻՑ

1926 թվականի հունվարի 13-ին Թիֆլիսի Ռուսթավելու անվան թատրոնում նշվում էր Գաբրիել Սունդուկյանի ծննդյան 100-ամյակը: Հարություն Սուրխաթյանի և Իոսեֆ Գրիշաշվիլու ելույթներից հետո ներկայացվում է «Պեպո»-ի առաջին գործողու-

թյունը հայերեն, երկրորդը՝ վրացերեն, երրորդը՝ ադրբեջաներեն և հայերեն: Խաղում էին դերասաններ Վարդուհին, Կոտե Մարջանիշվիլին, Սանդրո Այմետելին, Վասո Աբաշիձեն, Նիկո Գոցիրիձեն, Միրզա Ալի Աբասովը և ուրիշներ:

### ԱՍՈՒՅԹՆԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Լեզուն է ամեն մի ժողովրդի ազգային գոյության ու էության ամենախոշոր փաստը, ինքնուրույնության ու հանճարի ամենախոշոր դրոշմը, պատմության ու հեռավոր անցյալի կախարդական բանալին, հոգեկան կարողությունների ամենաճոխ գանձարանը, հոգին ու հոգեբանությունը:

*Հովհաննես Թումանյան*

... Մեր նախնիները մեզ և աշխարհին փոքր ժառանգություն չեն կտակել: Բայց մենք պիտի հասկանանք և հասկանալով չմոռանանք երբեք, որ մեր ժառանգության մեծագույն գանձը մեր լեզունն է: Գալով անհիշելի ժամանակներից, անցնելով բազում դարերի միջով, շփվելով բազում ազգերի լեզուներին՝ հայոց լեզուն մի յուրատեսակ հանրագիտարան է անհիշելի ժամանակների, բազում դարերի և բազմաթիվ այլ ազգերի: Լլսպես դատելով՝ մեր լեզուն միայն մեզ չի

պատկանում, այլև աշխարհին. նա միայն մեր սրբությունը չէ, այլև մասունքը հանուր մարդկության... Այդ լեզվի խնամքը, նրա անաղարտությունն ու պաշտպանությունը դրված է մեզ վրա:

*Պարոպր Սևակ*

Մեր լեզուն մեր խիղճն է դա,  
Սուրբ հացը մեր սեղանի,  
Մեր հոգու կանչն է արդար  
Ու համը մեր բերանի:  
Մեր լեզուն ծովսն է մեր տան,  
Մեր կշիռն աշխարհի մեջ,  
Նա աղն է մեր ինքնության,  
Էության խորհուրդը մեծ:  
Մեր լեզուն արյունն է մեր,  
Արյունից ավելի թանկ,  
Մեր բուրմունքն ու գույնն է մեր  
Մեր լեզուն մենք ենք ու կանք:  
Նա պիտի մեր առաջին  
Ու վերջին սերը լինի,  
Ի՞նչ ունենք էլ աշխարհում,  
Որ այսքան մեր լինի:

*Համո Սահյան*



Լեզուն նաև պատմություն է՝  
վավերական և ստույգ: Մեր լեզ-  
վամտածելակերպի մեջ խտաց-  
ված է մեր ողջ պատմությունը:  
Սերո Խանզադյան

Ու տես որդիս, ուր էլ լինես,  
Այս լուսնի տակ ուր էլ գնաս,  
Թե մորդ անգամ մտքից հանես,  
Քո մայր լեզուն չմոռանաս:  
Սիլվա Կապուտիկյան

Մեր լեզվին նման ո՞ր գտնել սակայն  
Զգացումներու ճշմարիտ թարգման:

Հերանուշ Արշակյան  
(բանաստեղծուհի. 1887 1905)

Մեր շուրջը լեզուներ նոր ու հին,  
Մեր շուրջը խոսում են այլորեն,  
Եկ խոսենք, եղբայր իմ, հայերեն:  
Կուլ չերթանք այս ահեղ լափումին,  
Թույլ չտանք մեր լեզուն ավերեն,  
Եկ խոսենք, միշտ խոսենք հայերեն:

Խաչիկ Գաշտեց

Հայ լեզուն տունն է հայուն աշխարհի չորս ծագերուն,  
Ուր կմտնե ամեն հայ իբրև տանտեր հարազատ:

Մուշեղ Իշխան  
(սփյուռքահայ բանաստեղծ)

## ՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՆԳԵՐԸ

Զանգի գյուտը արվել է 4-րդ դարում, Իտալիայի Կամպանիա մարզի Նոլա քաղաքում: Այդ պատճառով էլ եվրոպական մի շարք լեզուներում զանգը կոչվեց Կամպանիա, իսկ լատիներեն՝ նոլա:

Հայաստանում զանգի մասին առաջին հիշատակությունը, կապված զանգն օրհնելու կանոնի հետ, արել է 5-րդ դարի Հայոց կաթողիկոս և իմաստասեր Հով-

հան Մանդակունին: Բայց դա եղել է ձեռքի զանգակ, որն ավելի շուտ բոժոժ էր, քան զանգ՝ բառի բուն նշանակությամբ ու իմաստով: Այդպիսի բոժոժները հեթանոս հայերն օգտագործում էին որպես հուռուք:

Իսկ մինչ այդ զանգի դեր է կատարել կոչնակը կամ ժամահարը: Այն քառակուսի, տաշած ու ողորկած փայտ էր, որին Գրիգոր Նարեկացին անվանում էր շերտ, այսինքն՝ փայտի կտոր: Չայն հանելու համար ժամահարին հար-





վածում էին մուրճով, որ կոչվում էր թակաղակ:

Կոչնակը ժամահար անունով են հիշում Հովհան Մամիկոնյանը, Հովհաննես Սարկավազը, Գրիգոր Նարեկացին, Ասողիկը, Արիստակես Լաստիվերցին, Ներսես Շնորհալին, Գրիգոր Դ Տղան: Ժամահար բառը կազմված է ժամ և հար արմատներից և նշանակում է կոչող ի ժամ, այսինքն՝ ժամերգության, պատարագի կամ որևէ այլ հավաքի կանչող: Սկսած Վանական Վարդապետից (13-րդ դար) ժամահարը տեղի է տալիս կոչնակ բառին:

Հովհան Մամիկոնյանը հավաստում է, որ 7-րդ դարում Գայլ Վահանի համանուն թոռը թշնամու դեմ կռվելիս իր հետ ուներ 38 կոչնակ: Մարտի ժամանակ, երբ հայերը նեղն են ընկնում, սկսում են զարկել կոչնակները: Դրանց զարմանալի համանվագից քաջալերված հայերը առաջ են նետվում և փայլուն հաղթանակ տանում: Այդպիսի դեպք տեղի է ունեցել նաև 11-րդ դարում, երբ սելջուկ զորապետ Տուղրիլը պաշարել էր հայոց Մանազկերտ քաղաքը:

Կոչնակին երկար դարեր հարևանել է զանգը: Վերջինիս մասին մեր մատենագիրները նվազ տեղեկություններ են հաղորդում: Չնայած զանգը Հայաստանում գործածական է 10-րդ դարի երկրորդ կեսից, բայց այն իր հաստա-

տուն տեղն է՝ գրավել միայն 12-րդ դարից սկսած: Զանգի մասին հիշատակում են Ներսես Շնորհալին, Գրիգոր Տաթևացին և ուրիշներ: Մեզ են հասել այդ ժամանակներում ձուլված և Տաթևի վանքում գործածված զանգեր: Պահպանված ամենահին հայկական զանգերը երկուսն են: Նրանցից մեկը ձուլվել է 1302, մյուսը՝ 1304 թվականին: Երկուսի վրա էլ կան հայերեն արձանագրություններ, ըստ որոնց դրանք ձուլել է տվել կամ գնել է Ստեփանոս Օրբելյան պատմիչը:

Հայաստանում զանգը պատրաստել են պղնձից, որը հնչուն մետաղ է: Գրիգոր Նարեկացին այդ մասին վկայում է. «զանգակ նիւթոյ պղնձոյ»: Իսկ Գրիգոր Տաթևացին հաղորդում է, որ հայկական զանգը ձուլելու ժամանակ պղնձին խառնել են արծաթ, որն ավելի հնչեղ էր դարձնում զանգի ձայնը: Անեցի արիեստավորները այնպիսի զանգեր են պատրաստել, որոնց ձայնը հասնում էր ոչ միայն Ծաղկոցաձորի ամենամթին խորշերը, այլև Շիրակի սահմաններից շատ հեռու:

Կոչնակի նման զանգը նույնպես հարկ եղած դեպքում ազդարարել է նաև վշտալի լուրեր: Բարսեղ Վարդապետը (12-րդ դար) գրում է, որ կռվի դաշտում ընկած և հուղարկավորության չարժանացած Պաղտին իշխանի մահը մարդիկ ողբում էին զանգահա-

րությամբ:

Ջանգի ձայնը զարմանալի ազդեցություն է թողնում մարդու վրա. ուրախության պահին այն սրտապարար է, տրտմության պահին՝ թախծածոր:

Ուշ միջնադարում զանգը կարևոր դեր էր խաղում քաղաքի կյանքում: Մի զանգով սկսվում էր աշխատանքային օրը, մյուսը ճաշի էր հրավիրում, երրորդը տոնախմբության էր կանչում և այլն:

Հնում զանգերն ունեին իրենց անունները: Անիի զանգերից մեկը կոչվել է Հացի զանգ, Ջուղայի զանգերից մեկը՝ Խաչքարի զանգ: Եվ պատահական չէ, որ խաչքարի զանգ են հնարել այն քաղաքում, ուր 17-րդ դարի սկզբում արդեն կար ավելի քան 10 հազար խաչքար:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից տարիներ անց պատերազմի մասնակից բոլոր երկրների թնդանոթներից Խտալիայում ձուլեցին մի զանգ և անվանեցին Մահվան զանգ, որն ընկածների հիշատակը հավերժացնելու համար զանգահարում էր միայն գիշերները:

Մարդիկ հնում հավատում էին զանգին: Նրանց թվում էր, թե զանգն ունակ է հրաշքներ գործելու: Ջանգահարությամբ կարելի էր, իբր, խափանել և համաճարակները, և երաշտն ու սովը, և բնական մյուս արհավիրքները:

Ջանգի հետ է կապված զանգակատան ծնունդը: Ջանգակատունը ճարտարապետական կառույց է զանգ կախելու համար: Հայաստանում առաջին զանգակատները կառուցվել են 10-րդ դարում: Նշանավոր են Գոշավանքի, Հաղպատի, Սանահինի զանգակատները: Էջմիածնի Մայր տաճարի զանգակատունը կառուցվել է 1653 — 58 թվականներին, Անտոն Չելեպի Ապրոյանի ծախքերով: Այս զանգակատանը երկար ժամանակ հնչել է Տիբեթյան կոչվող հռչակավոր զանգը: Այժմ Էջմիածնի Մայր տաճարում զանգահարումը կատարվում է էլեկտրականությամբ: Նշանավոր է եղել Կարին քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցու զանգակատունը: Այն 1869 թվականին կառուցել են Մանուկ Արաբյան և Ղևեն վարպետները: Այս զանգակատունն ուներ երեք զանգ, մեջտեղինը՝ մեծ, կողքերինը՝ անհամեմատ փոքր: Մեծ զանգի ձայնը լսվում էր մի քանի կիլոմետր հեռավորության վրա: Համաժողովրդական մեծ լուրերը Կարինի հայությանն ազդարարվում էին մեծ զանգի ղողանջներով: Կարնեցիները հիշում են արտասովոր զանգահարումները: Այդպիսիք էին Խրիմյան Հայրիկի մահվան գույժը 1907-ին և Սանասարյան վարժարանի գույքերի գաղտնի փոխադրության լուրը 1912 թվականին:

1918 թվականի մայիսի 22 — 28-ին, Սարդարապատի հերոսամարտի օրերին յոթ գիշեր ու ցերեկ անընդմեջ ղողանջում էին Արարատյան դաշտի և շրջակա վայրերի հայկական եկեղեցիների զանգերը, ազդարարում, որ հայ ժողովուրդը մահու և կենաց կռիվ է մղում: Դա ամենատևական զանգահարությունն էր Հայկական (եռնաշխարհում վաղնջագույն ժամանակներից մինչև մեր օրերը):

Ինքնատիպ է Երևանի Կառավարական տան ժամացույցը: Նրա ղողանջները լսվում են Երևանի բոլոր կողմերում:

Հայ ժողովուրդը զանգի մասին շատ զրույցներ է ստեղծել: Ահա դրանցից մեկը: Սյունյաց աշխարհի Խոտ գյուղի մոտակայքի վանքը մի մեծ զանգ ուներ: Ամեն անգամ հեռվում թշնամու հայտնը վելուն պես այդ զանգը ղողանջում էր, և Սյունյաց քաջերը զորք կապած ընդառաջ էին դուրս գալիս թշնամուն և հաղթում: Բայց ահա Հայաստան արշավեց Լենկթեմուրը: Այս ավազակապետը կաշառեց մի դավաճանի, որը կտրեց Սյունյաց աշխարհի նշանավոր զանգի լեզվակը: Թշնամին հարձակվեց Սյունիքի վրա: Մարդիկ փորձեցին զանգը հնչեցնել և մարտի կանչել հայոց քաջերին, բայց բան չստացվեց, զանգը չէր ղողանջում: Եվ իրար ասացին՝ զանգն իզուր է, զանգը զուր

է, որի պատճառով էլ այդ երկրամասը կոչվեց Զանգեզուր:

Զանգը ոգևորության աղբյուր է եղել գրողների, կերպարվեստագետների և երաժիշտների համար: Նշանավոր են Շիլլերի «Զանգակ» (այս պոեմը հայերեն առաջին անգամ թարգմանվել ու տպագրվել է «Բազմավեպ» հանդեսի 1871 թվականի հունիսի համարում), Էդգար Պոի «Զանգերը», Գյոթեի «Թափառական զանգ», Հաուպտմանի «Զրասույզ զանգը», Թ. Մուրի «Իրիկնային զանգ», Ի. Կոզլովի «Իրիկնային զանգ» գործերը: Իր «Ազատության զանգ», «Տիեզերական զանգ», «Ես մի նոր զանգ եմ» գործերում տիեզերական զանգի պատկերն է տվել Ավետիք Իսահակյանը: Մեծ Կոմիտասին նվիրված հոյակապ ստեղծագործություն է Պարույր Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմը: Զանգի խորհրդանշական պատկերն են արտացոլում հայ նկարիչ Վ. Պողպոսյանի «Ռեքվիեմ 1915» և «Եղեռներգություն» կտավները: Զանգերի ղողանջ կա հայ շատ կոմպոզիտորների գործերում:

### ՀԱՅԿԱԿԱՆ ԽՐԱՏԱՆԻ

*Ով ցանկանում է նայել արեգակի ճառագայթներին, պետք է սրբի ու հեռացնի աչքերի պղտորությունն առաջացնող կեղտն ու ճպուռը, որպեսզի այդ աղտոտությունները, որ երևում են բբե-*

րի շուրջ, պայծառ լուսին նայելու  
արգելք չլինեն:

Եզնիկ Կողբացի

Մահը մեռնում է մահով:

Եղիշե

Պատմությունն առանց ժա-  
մանակագրության ստույգ չէ:

Սուլեսե Խորենացի

— Ի՞նչ ազգ է, — հարցուց  
դատավորը, որ կրակե աչքեր ու-  
ներ ու խիստ դեմք մը:

— Հայ է, — պատասխանեց  
այն մեկը, որ ներս տարած էր  
մեր Երանոսը:

— Է՛հ, որ հայ է, շիտակ դը-  
րախտ դրկեցեք: Անոնք երկրի  
վրա շատ են տանջվեր...

Համաստեղ

## ԱՊՏԱԿ ԷԼ ԿԱ, ԱՊՏԱԿ ԷԼ

Մի անգամ Կիլիկիայի Հայոց  
Հեթում թագավորը իր թիկնա-  
պահի հետ ծպտյալ անցնում էր  
Իկոնիայի սուլթանության երկ-  
րով: Սուլթանի պաշտոնյաները  
ճանաչում են Հեթումին և քիչ էր  
մնում, թե բռնեն նրան: Այդ ժա-  
մանակ թիկնապահը մի ապտակ  
է հասցնում Հեթումին՝ հասկաց-  
նելու համար սուլթանի պաշտոն-  
յաներին, որ նա ոչ թե թագա-  
վոր է, այլ իր ծառան:

«Բազմապեպ», 1849 փետրվար, էջ 64

Մի խառնեք մեզ ձեր վայրի,  
արջի ցեղերին,  
Մեր երկիրը ավերված, բայց  
սուրբ է և հին:  
Որպես լեռն է մեր պայծառ տեսել  
հազար ձյուն,  
Այնպես նոր չեն մեզ համար դավ  
ու դառնություն:  
Բաբելոնն է եղել մեր ախոյանը,  
տես —  
Անհետ կորել, անցել է — չար  
մշուշի պես:  
Ասորիքն է եղել մեր թշնամին  
— ահա  
Դաշտ է տեղը հիմա և չկա քար  
քարի վրա:  
Ամրակուռ է մեր հոգին — դարերի  
զավակ՝  
Շատ է տեսել մեր սիրտը ավեր  
ու կրակ:  
Շատ է տեսել երկիրն իմ ցավ  
ու արհավիրք, —  
Լաց է այնտեղ ամեն երգ և ողբ —  
ամեն գիրք:  
Գերված ենք մենք, — ոչ ստրուկ —  
գերված մի արծիվ  
Չարության դեմ վեհսիրտ, վատի  
դեմ ազնիվ:  
Բարբարոսներ շատ կգան ու  
կանցնեն անհետ,  
Արքայական խոսքը մեր կմնա  
հավետ:  
Չի հասկանա ձեր հոգին և ծուլյ,  
և օտար,  
Տաճար է մեր երկիրը՝ սուրբ է  
ամեն քար:  
Եգիպտական բուրգերը փոշի  
կդառնան,

**ՀԱՅՎԱԿԱՆ ԳԻՔԻ  
ԱՄԵՆԱՄԵՇ ԵՂԵՈՒՆԸ**

Արևի պես, երկիր իմ, կվառավես  
վառաման:  
Որպես փյունիկ, կրակից կելնես,  
կելնես նոր  
Գեղեցկությամբ ու փառքով վառ  
ու լուսավոր:  
Արիացիր, սիրտ իմ, ել հավատով  
տոկուն,  
Կանգնիր հպարտ, որպես լույս,  
լեռն է մեր կանգուն:  
Վահան Տերյան

Մենք քիչ ենք, սակայն մեզ  
հայ են ասում:  
Մենք մեզ ոչ ոքից չենք  
գերադասում:  
Պարզապես մեր բախտն ուրիշ է  
եղել, —  
Պարզապես շատ ենք մենք  
արյուն հեղել.  
Պարզապես մենք մեր դարավոր  
կյանքում,  
Երբ եղել ենք շատ  
Ու եղել տոկուն,  
Դարձյալ չենք ճնշել մեկ ուրիշ  
ազգի,  
Ոչ ոք չի տուժել զարկից մեր  
բազկի:  
Եթե գերել ենք՝  
Լոկ մեր գրքերով.  
Եթե տիրել ենք՝  
Լոկ մեր ձիրքերով:

Պարույր Սևակ

Ղափան-Քաջարան ճանապարհի միջնամասում, Ողջի գետի ձախ ափին, Դավիթբեկ փոքրիկ բանավանի կողքին, այնտեղ, ուր ժայռերի պռունկները իրար մոտենալով կազմում են ահարկու կիրճը, երևում են Բաղաբերդ ամրոցի հնամենի պարիսպների մնացորդները: Պատմիչ Ստեփանոս Օրբելյանը հավաստում է, որ այս ամրոցը կառուցել է Հայկազարմ Սիսակ նահապետի զարմից Բաղակ անունով մի այր: Նրա անունով էլ ամրոցը կոչվել է Բաղաբերդ: Դեռևս չորրորդ դարում այն հայտնի էր որպես Հայաստանի անառիկ ամրոցներից մեկը: Սյունիքի Անդովկ Սյունի իշխանը այստեղ պարտության է մատնել Պարսից Շապուհ արքային: 1170 թվականին սելջուկ զորավար Ելտկուզի զորքը գրավում է Բաղաբերդը, սրի քաշում բնակիչներին և ավարի մատնում շրջակա վայրերից այստեղ հավաքված 10 հազար հայերեն գիրք: Դա եղել է հայ գրքի ամենամեծ եղեռնը պատմության մեջ:

Կյանքը նույնպես մի գնացք է, որ շարունակ շարժվում, սլանում է առաջ և չգիտես, թե նրա ո՞ր կայարանում ստիպված կլինիս կծկվիլ կամ իրերդ ամփոփել:

Մուրացան



Շուռ է գալիս ծանր քարը  
Մեր մոր կրծքից տենչավառ,  
Վեր է կենում մեր աշխարհը  
Ավերներից անհամար...

— Հեյ ջան. տղերք, ուս տվեք,  
նա,

Միահամուռ, միաբան,  
Հեյ ջան, տղերք, ուս տվեք, նա,  
Քարը մոտ է գլորման:

Հովհաննես Թումանյան

## ՄԱՏԵՆԱՊԱՐԱՆ

Մատենադարանը՝ Հայկական ԽՎՀ Մինիստրների խորհրդին առընթեր Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը, հիմնադրվել է 1959 թվականի մարտի 3-ին, Պետական ձեռագրատան (Մատենադարան) հիմքի վրա: 1962 թվականից՝ Մաշտոցի անվան: Ունի մատենագրության և մանրանկարչության, հին մատենագրության, միջնադարյան մատենագրության և վավերագրերի, բնագիտական հուշարձանների և ձեռագրերի պահպանության, նաև արխիվային, ձեռագրերի վերականգնման ու պատճենահանման բաժիններ, հայագիտական գրադարան:

Մատենադարանում հավաքված է աշխարհում ամկա ավելի քան 25 հազար հայերեն ձեռագրերի

կեսից ավելին: 1989 թվականի տվյալներով Մատենադարանի ձեռագրերի ընդհանուր թիվը մոտ 16,5 հազար միավոր է, որից շուրջ 14 հազարը՝ հայերեն, մնացածը՝ օտար լեզուներով: Դրանք 5—18-րդ դարերի հայ պատմիչների, փիլիսոփաների, աստվածաբանների, բանաստեղծների, մաթեմատիկոսների, բժիշկների երկեր են, ինչպես նաև հին աշխարհի և միջնադարի հույն, ասորի և այլ ազգությունների հեղինակների ստեղծագործությունների թարգմանությունները, այդ թվում նաև միայն հայերեն թարգմանությամբ պահպանված մի շարք կարևոր հուշարձաններ:

Մատենադարանում ձեռագրերի պահպանման համար պատրաստված են հաստատուն ջերմաստիճանի և խոնավության պահեստարաններ:



# ՄԱՅԻՍ

|            |   |    |    |    |    |
|------------|---|----|----|----|----|
| ԵՐԿՈՒՇԱԲԹԻ | 7 | 14 | 21 | 28 |    |
| ԵՐԵՔՇԱԲԹԻ  | 1 | 8  | 15 | 22 | 29 |
| ՉՈՐԵՔՇԱԲԹԻ | 2 | 9  | 16 | 23 | 30 |
| ՀԻՆԳՇԱԲԹԻ  | 3 | 10 | 17 | 24 | 31 |
| ՈՒՐԲԱԹ     | 4 | 11 | 18 | 25 |    |
| ՇԱԲԱԹ      | 5 | 12 | 19 | 26 |    |
| ԿԻՐԱԿԻ     | 6 | 13 | 20 | 27 |    |

## 1918 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 28-Ը ՀԱՅՈՑ ԴԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆԱՆ ՕՐՆ Է

543 տարվա ընդմիջումից հետո վերականգնվեց հայկական ազգային պետականությունը՝ 1918 թվականի մայիսի 28-ին ստեղծվեց Հայաստանի Հանրապետությունը:

## ՀԽՍՀ Գերագույն խորհրդի Նախագահության հրամանագիրը

### 1918 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 28-Ը ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆԱՆ ՕՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի Նախագահությունը որոշում է.

1. 1918 թվականի մայիսի 28-ը ճանաչել Հայկական պետականության վերականգնման օր:



2. Եռագույն (կարմիր-կապույտ-նարնջագույն) դրոշը համարել հայկական ազգային խորհրդանիշ:

**ՀԽՍՀ Գերագույն խորհրդի Նախագահության  
Նախագահ՝ Հ. Ոսկանյան  
ՀԽՍՀ Գերագույն խորհրդի Նախագահության  
քարտուղար՝ Ն. Ստեփանյան**

26 մայիսի 1989 թվականի, քաղ. Երևան



Հայկական ազգային եռագույն դրոշը

### **451 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅՄՍԻ 26-ՐՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԿ ԱՎԱՐԱՅՐԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ**

Ավելի քան հազար հինգ հարյուր տարի է բաժանում մեզ Տղմուտ գետի ափին տեղի ունեցած և միայն մեկ օր տևած այդ կռվից: Բայց, չնայած դրան, Ավարայրի հերոսամարտը հայ ժողովրդի հիշողության մեջ բացառիկ խոր հետք է ակոսել՝ ընկալվելով ոչ միայն իբրև իրական հույժ կարևոր իրադարձություն, այլև որպես ժողովրդի

հայրենասիրական մեծ խոյանքների, անօրինակ հերոսության, անձնուրաց խիզախության, ազգային պատվի պաշտպանության մի խորհրդանշան, որով դարեր շարունակ գերվել ու ոգեշնչվել են ազատաբաղձ հայ քաջորդիների բազում սերունդներ, ողջ մի ժողովուրդ:

Վաչե Նալբանդյան

(գրականագետ, ՀԽՍՀ ԳԱ բրթակից անդամ)

Չեմ ըմբռներ, թե ինչպես ոմանք կապրին երջանիկ Թշվառությանց մեջ այսչափ. կապրին անփուկթ խորհուրդին դեմ այս խորունկ. չարությանց, տխմարությանց այս մոտիկ՝ Կապրին խաղաղ, իբրև թե լոկ հայելի ըլլային...

Վահան Թեքեյան



1990 թվականին հանդիսավորապես նշվելու է Քերթոզահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմության» 1500-ամյակը: Այդ գիրքը հայ ժողովրդի ինքնության անձնագիրն է, նրա հնամյա պատմության մեծ վկայագիրը:

Մովսես Խորենացին հայ ամենամեծ պատմիչն է, իսկ նրա «Հայոց պատմությունը»՝ հայկական հանճարի անզուգական փայլատակումը: Նա է, որ ցույց տվեց աշխարհին, թե որտեղից է գալիս հայ ժողովուրդը, ոտքը պատմության որ սանդուղքին է հենել, ովքեր են նրա «մանկության ընկեր» ժողովուրդները:

Լեոն գրել է. «Մովսես Խորենացու պատմությունը մի առաջնակարգ մեծ երևույթ է եղել մեր գրականության մեջ սկզբից և եթ: Նրանով դաստիարակվել են ամբողջ դարեր, նրա հեղինակությունը մեծ ու անխախտելի է եղել մինչև վերջին ժամանակներս: Կարելի է ասել, թե այդ գիրքը եղել է հայոց ազգային սրբազան գիրքը, իսկ Խորենացին՝ ազգային մի առաքյալ, նվիրական մի հասկացողություն դարերի և սերունդների համար: Եվ ոչ մի տարօրինակություն չկա այս պաշտամունքի մեջ: Գրական տեսակետից Խորենացու գործը հայ մտքի կոթողն է:



Այսօր էլ զարմացնում են պատմագրողի կուն, ազդու, վերին աստիճանի ինքնատիպ ոճը, իրեն միայն հատուկ սեղմ արտահայտությունը, ճաշակը, քննական հայացքները, որոնումները: Այնպիսի խիզախ մեծագործություն, որ կատարել է Խորենացին, ոչ ոք չի կարողացել կատարել նրանից առաջ էլ, հետո էլ: Նա էր, որ հասկացավ, թե մի ազգ պիտի ունենա իր ամբողջական պատմությունը» (Լեո, Երկերի ժողովածու 10 հատորով, հ. 2, Ե., 1967, էջ 347): Իսկ Գալուստ Տեր-Մկրտչյանը (Միաբան) Քերթոզահորն այսպես է բնորոշել. «Մեր պատմահոր գրվածքը ընդունված էր և հարգված՝ իբրև սրբազան գիրք, իբրև հավատար-

մագույն աղբյուր ազգային պատմության, իբրև անպայման հեղինակություն, որի առաջ խոնարհվում էին բոլորը: Պատմություն՝ նշանակում էր Խորենացու Պատմությունը, Պատմաբան նշանակում էր Խորենացի, ինչպես Հերոդոտը Հունաստանում, ինչպես Արիստոտելը փիլիսոփայության մեջ, ինչպես Հռովմը քաղաքների մեջ» (Գալուստ Տեր-Սկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, Ե., 1979, էջ 69):

Մովսես Խորենացին ծնվել է մոտ 410 թվականին, Տարոնի Խորոնք գյուղում, որն այնքան էլ հեռու չէր Մաշտոցի ծննդավայր Հացեկացից: Հետագայում հայրենի գյուղի անունով էլ կոչվել է Խորենացի: Հավանաբար ուշիմ պատանուն առաջինը նկատել է Մաշտոցը և Մեղրագետի հովտից նրան բերել Վաղարշապատ: Հենց այստեղ էլ, ուսումնառության տարիներին, Մովսեսի ուսուցիչներն են դառնում Սահակ Պարթևն ու Մաշտոցը:

Քերթոզական արվեստի գիտակներ պատրաստելու նպատակով այդ տարիներին երիտասարդական խմբեր էին ուղարկում արտասահմանի ուսումնական նշանավոր կենտրոնները: Որպես բազմաշնորհ երիտասարդ այդ խմբերից մեկի հետ ուսումնառության է մեկնել նաև Մովսես Խորենացին: Ճանապար-

հին, ինչպես ինքն է վկայում, եղել է Եղեսիայում և ծանոթացել տեղի գրադարաններին: Ապա հասել է Ալեքսանդրիա և այստեղ ստացել բարձրագույն կրթություն: Հինգ-վեց տարի հետո վերադարձել է հայրենիք: Տունդարձի ճանապարհին եղել է Հռոմում ու Աթենքում: Նա Հայաստան է հասել մոտ 440 թվականին, այն ժամանակ, երբ արդեն մահացել էին նրա սիրելի ուսուցիչներ Սահակ Պարթևն ու Մաշտոցը:


Ըստ ամենայնի, հունական կրթություն ստացած Խորենացուն հաճությամբ չեն ընդունել հայրենիքում: Նա ենթարկվել է հալածանքների, որոնց ստույգ պատճառները դժվար է գուշակել մեր օրերի հեռավորությունից: 440 — 470 թվականներին, մոտ երեսուն տարի, նա վարել է կիսով չափ ծպտյալ կյանք: Եղել է որմնագիր, ջրաղացպան, երգիչ: Մի ավանդության համաձայն, խնջույքի ժամանակ ծերունի Մովսես Խորենացուն ճանաչում է Գյուտ կաթողիկոսը: Դա վկայում է, որ Գյուտի հետ նա միասին է ուսումնառության մեկնել Ալեքսանդրիա: Այս դեպքից հետո Խորենացին նշանակվում է Բագրեվանդի և Արշարունիքի եպիսկոպոս: Բայց Գյուտը չի բավարարվում միայն դրանով: Հենց այդ ժամանակ է, որ Խորենացին Սահակ Բագրատունուց պատ-

վեր է ստանում գրելու Հայոց պատմությունը: Հասկանալի է, որ այդ գործին խառնվել է Գյուտ կաթողիկոսը, նա է Սահակ Բագրատունու առջև բարեխոսել Խորենացու համար, որովհետև Խորենացին անձամբ չէր ճանաչում Բագրատունուն և մեկենասի ու պատվիրատուի փոխհարաբերությունները մինչև վերջ էլ եղել են գրավոր:

Մովսես Խորենացին «Հայոց պատմությունը» գրել է 10 — 12 տարում: Այն ավարտել է մինչև 482 թվականը: Դրանից հետո նա ապրել է տասը տարուց ավելի: Ուսումնասիրողները նրա մահվան հավանական թվական են համարում 495-ը:

Նրա կյանքը եղել է մի մեծ սխրագործություն: Ուշագրավ է այն հանգամանքը, որ հայոց եկեղեցին հին շրջանի հեղինակներից սրբացրել է միայն երեքին՝ Եղիշեին, Մովսես Խորենացուն և Դավիթ Անհաղթին:

Քերթողահայրը իր հանձարեղ երկով լուսաողող դարձրեց հայ ժողովրդի անցած պատմական ուղին: Հայտնի է, որ Հայաստանի մարզպան դարձած Սահակ Բագրատունին զոհվել է 482-ի ճարմանայնի ճակատամարտում: Իսկ «Հայոց պատմության» շարադրանքից ներևում է, որ գիրքը գրելու ժամանակ պատվիրատուն ողջ է եղել, որովհետև պատմության առանձին հատվածներ



Մովսես Խորենացու «Հայոց պատմության» երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող ամենահին ձեռագրի տիտղոսաթերթը (XIV դար, ձեռագիր №2865, գրիչ՝ Նովհաննես)

կրում են երկխոսության բնույթ:

Դժվար է ասել, թե 482 թվականից հետո ինչ ճակատագիր է ունեցել «Հայոց պատմությունը»: Մենք չգիտենք, թե երբ են սկսվել ձեռագրի առաջին և հետագա ընդօրինակությունները: Մեզ հասած ամենահին ձեռագիրը 14-րդ դարից է: Հասկանալի է, որ 5-րդ դարի վերջից մինչև 14-րդ դարի սկիզբը, մոտ 800 տարի, «Հայոց պատմությունը» ընդօրինակվել է բազմիցս: Այդ և հաջորդ դարերում ձեռագիրը ենթարկվել է փոփոխությունների, «Հայոց պատմությունն» անաղարտ վիճակում չի հասել մեզ: Նրա մեջ կան ընդմիջարկություններ, հետսամույժ հատվածներ, կրճատումներ: Այս ամենի

պատճառով Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» դարձել է վիճահարույց գիրք, հեղինակը «ենթարկվել է հետմահու հալածանքների»:

Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից» մեզ հասել է մոտ 50 ամբողջական ձեռագիր և մոտ 10 պատառիկ: Ըստ բանասիրական տվյալների, դրանցից ամենահինը գրվել է 1303 թվականին: Ամբողջական այդ ձեռագիրը պահվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում: Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է «Հայոց պատմության» 30 ամբողջական ձեռագիր և 8 պատառիկ: Մատենադարանի «Հայոց պատմության» ամենահին ձեռագիրը բաղկացած է երեք մասից: Այդ ձեռագրի առաջին և երկրորդ մասերի նորոգման մասին կոնկրետ թվականներ հայտնի չեն, մասնագետները գտնում են, որ դա 13—14-րդ դարերի գործ է, երրորդ մասը նորոգվել է 1567 թվականին: Մնացած ձեռագրերը գտնվում են Երուսաղեմի, Վիեննայի ձեռագրատներում, իսկ մի մասն էլ՝ աշխարհի տարբեր վայրերի հայկական ձեռագրերի մանր հավաքածուներում:

«Հայոց պատմության» ձեռագրերի բաղդատմամբ զբաղվել են հայ և օտար բազմաթիվ գիտնականներ: Պատմության առա-

ջին ընկալան հրատարակությունը պատրաստել են Մանուկ Աբեղյանն ու Սեթ Հարությունյանը: Այն լույս է տեսել 1913 թվականին, Թիֆլիսում: Անցած 77 տարում այդ հրատարակությունը կատարել է բնագրի դեր, չնայած ունի մի շարք անճշտություններ: Մաշտոցի անվան Մատենադարանը պատրաստում է «Հայոց պատմության» ընկալան նոր հրատարակություն:

Մովսես Խորենացին աշխարհի շատ գիտնականների միտք է զբաղեցրել: Շատերը փորձել են հակասություններ որոնել նրա պատմության մեջ: Գրեթե 200 տարի է, ինչ տեղի է ունենում մի թեժ պայքար, որի ավարտը դեռ չի երևում: Այդ երկարամյա պայքարի գագաթնակետն է եղել 1890-ական թվականներից մինչև 20-րդ դարի առաջին տասնամյակն ընկած ժամանակահատվածը: Դա մի շրջան էր, երբ շաչում էին թեր ու դեմ պայքարողների բոլոր սրերը, երբ համարյա քսան տարի ոչ մի սուր պատյան չէր մտնում: Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» ծանրութեթև անելով, առաջադրվում ու հերքվում էին հարյուրավոր տեսակետներ: Այդ պայքարին մասնակցում էին Բաումգարտները, Գելցերը, Գուտշմիդը, Լանգլուան, Կարիերը, Կիպերը, Հյուբշմանը, Մակլերը, Մառը, Մարկվարտը, Սեն-Մարտենը,

Տեթերը, հայ գիտնականներից՝ Մ. Աբեղյանը, Ն. Ադոնցը, Ղ. Ալի-շանը, Գ. Տեր-Մկրտչյանը (Միաբան), Ն. Բյուզանդացին, Զ. Պատկանյանը, Բ. Սարգիսյանը և ուրիշներ: Ֆրանսիացի գիտնական Լա Կրոզը դեռևս 18-րդ դարում այն կարծիքը հայտնեց, թե Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» գրվել է 9-րդ կամ 10-րդ դարում: Գերմանացի հայագետ Ալֆրեդ Գուտշմիդը ենթադրում էր, թե նա 5-րդ դ. պատմիչ Մովսես Խորենացին չէ, այլ նրա անվամբ հանդես եկած մեկը, որն իր «Հայոց պատմությունը» շարադրել է 634 — 642 թվականներին: Պատմաբան Գրիգոր Խալաթյանցը Խորենացուն համարել է 8-րդ դարի հեղինակ, իսկ ֆրանսիացի հայագետ Օգյուստ Կարիերը՝ 8 — 9-րդ դարերի հեղինակ: Մինչ այդ հայ քննական պատմագրության հիմնադիր Անտոն Գարագաշյանը անհիմն կերպով քննադատել է Խորենացու «Հայոց պատմությունը», ջանացել վարկաբեկել այն որպես սկզբնաղբյուր:

Ներսես Ալիսյանը գտնում է, որ «Հայոց պատմությունը» գրել է ոչ թե Մովսես Խորենացին, այլ 8-րդ դարի պատմագիր Ղևոնդը:

Անգլիացի հայագետ Կոնիբերը սկզբում գտնվում էր Ա. Կարիերի ուսումնասիրությունների ազդեցության տակ: Բայց ահա 1901 — 1902 թվականներին նա



Մովսես Խորենացին և «Հայոց պատմության» մեկնաս-պատվիրատու ասպետ Սահակ Բագրատունին (անանուն մանրանկարչի գործ, XIV դար, Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր № 2865):

գրեց մի հմտալից աշխատություն, որով ապացուցեց, թե Սեղբեստրոսի վարքի ընդարձակ թարգմանությունը 5-րդ դարի գործ է և ոչ թե 678 թվի, իսկ համառոտ վարքի խմբագրողն ինքն է օգտվել Մովսես Խորենացու պատմությունից: Մինչ այդ Ա. Կարիերը Խորենացու պատմության մեջ գտել էր այնպիսի հատվածներ, որոնք իբր փոխ են առնված Սեղբեստրոսի վարքի հայերեն թարգմանությունից, որ կատարվել է 7-րդ դարի 70-ական թվականներին: Կոնիբերի ելույթը ինչ-որ չափով սթափեցնող նշանակություն ունեցավ:

Մովսես Խորենացուն 8 — 9-րդ դարերի հեղինակ են համարել Նիկողայոս Մառն ու Հակոբ Մանանդյանը:

Պայքարի այդ թեժ շրջանում փորձում էին ապացուցել, թե Մար Աբաս անունով մարդ չի եղել, թե Մար Աբաս Կատինան ու Մովսես Խորենացին նույն մարդն են: Պայքարն, իհարկե, առանց անակնկալների չէր անցնում: 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի այդ պայքարի թատերաբեմ էին դարձել «Բազմավեպ» և «Հանդես ամսօրյա» ամսագրերը: «Բազմավեպի» 1896 թվականի դեկտեմբերի համարում մի ցնցող հաղորդում տրպագրվեց այն մասին, թե Փարիզում գտնվել է Մար Աբաս Կատինայի մատյանը և հաջորդ համարում ամսագիրը մանրամասն կգրի այդ մասին: Հաջորդ համարում, այսինքն 1897 թվականի հունվարի համարում (էջ 42 — 45) «Բազմավեպը» տպագրեց «Բացատրություն մը Մար Աբասայ գյուտի մասին» լուրը, որով հերքում էր նախորդ համարում տված հաղորդումը:

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» շուրջն ստեղծված պայքարի շնորհիվ շատ ջրեր պարզվեցին, շատ հարցեր լուծվեցին, բայց Խորենացու հեղինակությունից ոչ մի մազ էլ չպակասեց, ուսումնասիրողներից մեկի խոստովանությամբ՝ «ինչ

արեցին-չարեցին՝ մարգարիտը արծաթ չդարձավ»:

Քերթողահոր Պատմության գիտական քննությամբ երկար տարիներ զբաղվել է Ստեփան Մալխասյանցը: Նա Խորենացու ամենամեծ ու լրջմիտ ուսումնասիրողն է: 1940 թվականին նրա աշխարհաբար թարգմանությամբ, առաջաբանով ու ծանոթագրություններով լույս տեսավ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», որը բազմիցս վերահրատարակվել է: Վերջին տարիներին պատմիչի ժառանգության գիտական քննությամբ զբաղվում են Սուրեն Երեմյանը, Գագիկ Սարգսյանը, Լևոն Շահինյանը, Լևոն Միրիջանյանը և ուրիշներ:

Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» առաջին անգամ հրատարակվել է 1695 թվականին, Ամստերդամում: Դրանով հիմնավորվեց ու զարգացավ հայ աղբյուրագիտությունը: Պատմիչի երկերի հայերեն ամբողջական հրատարակությունը եղել է 1843-ին և 1865-ին, Վենետիկում:

Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» թարգմանվել և լույս է տեսել լատիներեն (1733, 1736), ֆրանսերեն (1836, 1841, 1845, 1869), իտալերեն (1841, երկրորդ անգամ նույն թվականին, 1850), ռուսերեն (1809, 1858, 1893), գերմաներեն (1869, 1881), հունգարերեն

(1892), անգլերեն (1890 և 1978), պարսկերեն (1984): Ըստ բանասիրական տվյալների, երեմիա Չելեպի Քյոմուրճյանը (1639 — 1695) Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» առաջինն է թարգմանել տաճկերեն: Այդ գրքի հրատարակության մասին ոչ մի տվյալ հայտնի չէ:

## ՀԻՆ ՀԱՅՈՑ

### ԳՂԴՐՈՒԹՅԱՆ ՏԻՐ ԱՍՏՎԱԾԸ

Տիր կամ Տյուր է կոչվել դըպրության, պերճախոսության, գիտությունների ու արվեստների աստվածը հին հայկական դիցարանում: Համարվել է հեթանոս հայերի աստվածների հոր՝ Արամազդի ատենադպիրն ու սուրհանդակը, մարդկանց ճակատագրի գուշակողն ու երազների մեկնողը, նրանց չար ու բարի գործերի գրանցողը, նընջեցյալների հոգիները «անդրշիրիմյան աշխարհ» ուղեկցողը: Տիրին նվիրված գլխավոր տաճարը կոչվել է Երազամույն (տեղը ճշտված չէ, գտնվել է Վաղարշապատ և Արտաշատ քաղաքների միջև, որոշ հնագետներ ենթադրում են, որ Երազամույն տաճարը գտնվելիս է եղել Զվարթնոց տաճարի տեղում): Տիրին նվիրված տոնահանդեսը կոչվել է Տիրական: 5-րդ դարի պատմիչ Ագաթանգեղոսը Երազամույնը անվանել է իմաս-

տության ուսուցման մեծիան: Հելլենիստական դարաշրջանում հայերը Տիրին նույնացրել են Ապոլլոնին ու Հերմեսին:

Տիրն ըստ էության եղել է հեթանոս հայերի գրականության, մասնավորապես՝ բանաստեղծության աստվածը: Մույն հին հայերենում նշանակում է սուզվել, ընկղմվել (օրինակ, ջրամույն — ջրի մեջ ընկղմված): Երազամույն նշանակում է երազների մեջ ընկղմված, երազներով տարված: Բայց երազների մեջ միայն գուշակները կամ աստվածային պատգամախոսները չէ, որ սուզվում էին: Երազն ու երազանքը հոգեհարազատ են նաև բոլոր ժամանակների բանաստեղծներին: Ապա պատկերացրեք մի այսպիսի սովորություն: Տարին մեկ անգամ Հայաստանի բոլոր կողմերից բանաստեղծները հավաքվում են Տիր աստծու տաճարը՝ Երազամույն: Քրմապետը նրանց տալիս է գրելու՝ բանաստեղծելու համար որոշակի թեմա և մեկ օր ժամանակ: Բանաստեղծները մեկ օրով երազամույն են լինում, հորինում որևէ բանաստեղծություն և ամենքի ներկայությամբ արտասանում: Լավագույն գործերը մրցանակ էին շահում (ինչպես լինում է մեր օրերում): Հաղթողների զուխին դնում էին ուռենու ոստերից հյուսած պսակ: Հաղթողներին անվանում էին պսակավոր-



ներ, այսինքն՝ մարդիկ, որոնց գլխներին հաղթողի պսակ են դրել: Մի քանի հազար տարեկան հայերեն պսակավոր բառը, որ օգտագործել են մեր պատմիչները, արդի ժամանակներում անիրավացիորեն մոռացության է տրվում: Միջազգային ճանաչման արժանացած լաուրեատ բառը լատիներեն է և նշանակում է դափնեկիր: Հին Հռոմում ու Հունաստանում այդպես էին կոչում հաղթողին, որովհետև նրա գլխին դնում էին դափնու տերևներից հյուսած պսակ: Բայց Հայաստանում դափնի չըկար, և հաղթողի գլխին ուռենու ոստերի պսակ էին դնում: Այդ պատճառով էլ ուռենին հնուց ի վեր Հայաստանում համարվել է երազանքի, բանաստեղծության ծառ: Արդար կլիներ, որ բոլոր մրցույթներում հաղթողներին կոչեինք պսակավորներ, ինչպես անում էին մեր հները:

Հին Հայաստանի հեթանոսական գլխավոր կենտրոնը Աշտիշատ ավանն էր, որ գտնվում էր Տարոնում, Արածանի գետի աջ ափին: Այստեղ էին հայոց յոթ բազիլները՝ Արամազդին, Ասահիտին, Միհրին, Նանեին, Ատղիկին, Տիրին և Վահագնին նըվիրված զոհասեղանները: Նավասարդյան տոնախմբությունների ժամանակ այստեղ կազմակերպվում էին մարզական խաղեր, բանաստեղծների ու երգիչների

մրցույթուններ, արհեստավորը ցուցադրում էր իր ձեռքի գործը, հողվորը՝ հողի բարիքները: Հաղթողների գլխին դնում էին վարդերից հյուսած պսակներ և օծում վարդաջրով: Նավասարդյան մրցույթուններում հաղթողները նույնպես պսակավորներ էին կոչվում, միևնույն է, թե հաղթողի գլխին ինչ են դնում՝ ուռենու ոստերից թե վարդերից հյուսած պսակ: Բոլոր դեպքերում պսակը մնում է պսակ և հաղթողին պիտի անվանել պսակավոր տարողունակ բառով:

Մնչևէ, երազամույն տաճարի մոտ տեղի ունեցող բանաստեղծություն արարելու տոնահանդեսը Տիր աստծու անունով կոչվել է Տիրական:

Հայոց հին տոմարի չորրորդ ամիսը Տիր աստծու անունով կոչվել է Տրե կամ Տրի, ծիածանը՝ Տիրական կամ Տրական գոտի: Հայաստանում Տիրի անունով ստեղծվել են մի քանի տեղանուններ և անձնանուններ: Ահավասիկ՝ Տիրինկատար (լեռ), Տիրակատար (քաղաք), Տիրառիձ (գյուղ), Տրի (գյուղ), անձնանուններ՝ Տիրան, Տիրատուր, Տիրայր, Տիրիբազ, Տիրոց, Տրդատ և այլն:

### ԱՄՈՒՅԹՆԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԱՄԻՆ

*Հունարենը մեղմ է, հռոմեական լեզուն՝ հզոր, հոներենը՝*



ահաբեկող, ասորերենը՝ աղերսական, պարսկերենը՝ պերճ, ալաներենը՝ գեղեցկազարդ, գոթերենը՝ հեզնական, եգիպտերենը՝ տափակախոս ու խավարաձայն, հնդկերենը՝ ճովողական, հայերենը՝ քաղցր, որը միաժամանակ կարող է մյուս բոլոր լեզուների հատկություններն ամփոփել իր մեջ:

Եղիշե

(աուլթը քաղված է երևոնի Մաշտոցի անվան Մատենադարանի № 1267 ձեռագրից)

Դպրոցի ազգությունը կախված չէ աշակերտների ու վարժապետների լոկ հայրութենից. լեզուն է, որ միմյանց կարող է այդ վերնագիրը դնել դպրոցի ճակատին... Թող ուրեմն հայ մանուկը նախ և հառաջ որպես հայի զավակ ուսանի յուր սեպհական լեզուն և ապա օտարինը: Ազգի հոգին և ազգի սիրտը կարող են յուրյանց հատկությունը և որակությունը մաքուր պահել միայն կերպարանագործվելով ազգային լեզվի ազդեցության տակ. այս ճշմարտությունը ուրացողը ուրացող է ազգության:

Միքայել Նալբանդյան

Հայերենն իր ճոխությամբ, ճկունությամբ, իմաստաբանական հազարերանգ առումներով փայլատակել է Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբեցողության» պոեմում, պոեմ, որ նման է փի-

լիսոփայական խորհրդածությունների մի փառահեղ տաճարի:

Ժան Պիեռ Մահե

(Գրասեղացի հայագետ)

Դրախտավայր ասացինք՝  
Իսկ դու՝ խուփ ու խանդակ, հող,  
Վիշապաքաղ ասացինք,  
Իսկ դու խեղճ ու կրակ, հող,  
Տեղից ելնողը խլեց,  
Խաբեց, բամփեց քո գլխին,  
Բարձրավանդակ ասացինք,  
Իսկ դու դարձար վանդակ, հող:  
Սիլվա Կապուտիկյան

## ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆԸ ԳՐԱԲԱՐԻ ՄԱՍԻՆ

Դա ոսկի է, դա լեզու չէ, այլ երկնային երաժշտություն է, շքեղություն, հարստություն, ուժ, ճկունություն: Այդ բոլորը ես հիմա եմ սկսել զգալ: Ես պատրաստ եմ ամեն բանի, միայն թե իրագործեմ իմ երազանքը: Ուսումնասիրել կատարելապես, տիրապետել այդ արքայական լեզվին և միայն այն ժամանակ ես կհանգըստանամ:

## ՀԱՅՎԱԿԱՆ ԶԱՐԸ

Հազարամյակներ առաջ հայ կինը իր կրծքի կաթը հեղել է քարի վրա, ապա նորածնին կերակրել քարին թափված կաթով: Դա մեծ խորհուրդ է ունեցել: Մայրն իր որդուն կապել է հայ-



րենի տան, հայրենիքի հետ, սիրելի դարձրել նրան քարակերտ օրրանը:

Այդ պատճառով էլ քարը են գլխից սրբազան է եղել հայի համար: Ժողովրդական ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանը գրել է. «Քարի վրա է ծնվել հայը, քարի վրա ապրել, քարով ապրել, քարը քարին դրել, քարի վրա բարձրացել: Քարերի մեջ է աճել մանուկը, քարով խաղ արել, քարն իմացել, քարի պես ամրացել»:

Հայկական լեռնաշխարհը քարանյութերի տեսակներով ու պաշարներով երկրագնդի հազվագյուտ շրջաններից է: Խորհրդային Հայաստանի տարածքը համարյա ամբողջապես ծածկված է հրաբխային քարանյութերի համատարած շերտերով:

Խորհրդային Հայաստանի տարածքում պահպանվել են հնագույն ժամանակներից մեզ հասած ավելի քան 4000 քարակերտ հուշարձաններ: Քառասուն հազարից ավելի քարակերտ հայկական հուշարձաններ կան Արևմտյան Հայաստանում և Կիլիկյան Հայաստանում: Դրանց մի մասը կանգուն է, մեծ մասը՝ քանդված կամ ավերված: Այդ հուշարձանները վավերագրեր են, որոնք հավաստում են, որ այդ երկրի իրավական տերը հայ ժողովուրդն է, որը հնագույն ժամանակներից ապրել է իր բնօր-

րանում և քարակերտ կառույցներով գեղեցկացրել այն:

Մեր նախնիները քարի վրա են գրել իրենց պատմությունը, արձանագրել կարևորագույն դեպքերն ու իրադարձությունները: Մեր ժամանակներում Հայաստանը դարձել է ԽՍՀՄ-ում բնական բարձրորակ շինանյութերի արտադրության և մատակարարման գլխավոր շրջաններից մեկը: Ամբողջ աշխարհում հռչակ են վայելում հայկական վարդագույն տուֆերը, գունավոր մարմարները, կոնգլոմերատները, գրանիտները, հրաբխային խարամները, պեմզան, պեռլիտները: Հայկական քարը միայն շինանյութ չէ, նրանից կարելի է ստանալ 110 արտադրատեսակ:

Եթե նախկինում Հայաստանի տարածքի համատարած քարաշերտերով ծածկված լինելը այդ լեռնաշխարհի բնակչի աղքատության պատճառ էր, ապա այժմ քարը դարձել է հայ ժողովրդի ազգային հարստության աղբյուրներից մեկը:

Ուշագրավ է այն փաստը, որ Խորհրդային Միության տուֆաքարի ամբողջ պաշարների 90 տոկոսը գտնվում է Խորհրդային Հայաստանի տարածքում: Պեռլիտների պաշարով Խորհրդային Հայաստանը ԽՍՀՄ-ում առաջին տեղն է գրավում: Առավել խոշոր պաշարներ հայտնաբերվել են Թալինի, Հրազդանի և Աբով-

յանի շրջաններում: Հաշվումները ցույց են տալիս, որ ԽՍՀՄ-ում պեռլիտի պաշարների կեսից ավելին բաժին է ընկնում Խորհրդային Հայաստանին:

Բայց, իհարկե, հայկական քարերի թագուհին տուֆն է:

Քառորդ դարից ավելի է, ինչ խորհրդա-իտալական պայմանագրի համաձայն Իտալիայի զտող և մաքրող նյութեր արտադրող «Դեկալայտ սատ» ֆիրման զգալի քանակությամբ հայկական պեռլիտ է գնում: Իտալիան Արագածի պեռլիտից արտադրում է բարձրորակ զտող նյութեր, որոնք արտահանվում են տասնյակ երկրներ և օգտագործվում արդյունաբերության բազմաթիվ բնագավառներում: Երբ Իտալիայի ներկայացուցիչը այցելել է Արագածի պեռլիտի հանքավայր և նայել պեռլիտի բացված հզոր շերտին, զարմանքից ձեռքերը բարձրացրել է վեր և բացականչել. «Աստված, ինչո՞ւ հարըստությունը անհավասար ես բաշխել ժողովուրդների միջև»:

Հայկական քարը համաշխարհային հռչակ է ձեռք բերում: ԽՍՀՄ նկարիչների միության անդամներ, հայր և որդի Խաչիկ և Աշոտ Աղամյանները Հոկտեմբերյանի կարմիր տուֆաքարից Մոսկվայի մոտ գտնվող Աստղավանում խորհրդային տիեզերագնացների խնդրանքով կառուցել են «Կոսմոս» հուշարձան-

աղբյուրը՝ հայկական ճարտարապետության և քանդակագործության դասական ավանդույթներով: Այդ տուֆակերտ հուշարձանը Աստղավանի կենտրոնի զարդն է:

1966 թվականին Ամերիկայի Միացյալ Նահանգներից Խաչիկ անունով մի զբոսաշրջիկ է գալիս Երևան և իր հետ Ամերիկա տանում ճամպրուկի մեջ դրված հայկական տուֆի մի սալիկ:

— Հոն ես շենք մը պիտի շինեմ, — ասաց Խաչիկը, — որուն ճակատը պիտի զարդարե աս տուֆը: Դրանով ես ինքզինքս պիտի հավատացնեմ, թե կարիմ Հայաստանի հետ կապ ունեցող շենքի մը մեջ:

## ՄԵՐ ՆԱԽՆԻՆԵՐԸ ԳԻՐԲԸ ԳԱՆՁ ԵՆ ՀԱՍՄԱՐԵԼ

*Մար Աբաս Կատինան այս մատյանից հանելով միայն մեր ազգի հավաստի պատմությունը հույն և ասորի գրերով՝ բերում է Մծբին, Վաղարշակ թագապորին: Եվ բարեկամ ու քաջ աղեղնավոր, արի Վաղարշակը, կորովախոսն ու հանճարեղը, ընդունելով այն՝ համարելով առաջինն իր գանձերի մեջ՝ հրամայում է մեծ զգուշությամբ պահել արքունիքում և մի մասը նրանից հրամայում է արձանի վրա դրոշմել:*

Սովսես Խորենացի




Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում,  
Մեր հին սագի ողբանվագ, լացակոմած լարն եմ սիրում,  
Արևանման ծաղիկների ու վարդերի բուկրը վառման,  
Ու նաիրյան աղջիկների հեզաճկուն պարն եմ սիրում:

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե,  
Արևն ամռան ու ձմեռվա վիշապաձայն բուբը վսեմ,  
Մթնում կորած խրճիթների անհյուլընկալ պատերը սև  
Ու հնամյա քաղաքների հազարամյա քարն եմ սիրում:

Ուր էլ լինեմ — չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր,  
Չեմ մոռանա աղոթք դարձած երկաթագիր գրքերը մեր,  
Խշքան էլ սուր սիրտս խոցեն արյունաքամ վերքերը մեր —  
Էլի ես որբ ու արնավառ իմ Հայաստան-յարն եմ սիրում:

Իմ կարոտած սրտի համար ոչ մի ուրիշ հեքիաթ չկա.  
Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.  
Աշխարհ անցիր՝ Արարատի նման ճերմակ գագաթ չկա.  
Խշպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սարն եմ սիրում:

Եղիշե Չարենց



Արարատ լեռը

## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՐԱՏԱՆԻ

Մարդիկ ավելի շատ օրինա-  
կին են հետևում, քան ճշմար-  
տությունը:

Համբավն ուրիշ է, ճշմարտու-  
թյունն ուրիշ:

Եղիշե

Չբավարարված տենչանքները  
ծնում են մեծ թախիծ:

Եզնիկ Կողբացի

Դավիթ Անհաղթ



**Չմռան ժամանակ ամպերը ստերջ են լինում:**

*Անանիա Շիրակացի*

**Հազար բարբարոսի ժանիք է խրվել դարաբաղցու մարմինը, բայց ոչ ոքի չի հաջողվել ծռել նրա կողը:**

*Սարգիս Աբրահամյան*

*(գրող, մանկավարժ, 1915 - 1969)*

**ՀԱՂՊԱՏ ԱՆՎԱՆ**

**ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Հաղպատը 10 — 13-րդ դարերի հայկական ճարտարապետական նշանավոր հուշարձան է:

Եղել է հոգևոր մշակութային խոշոր կենտրոն: Գտնվում է ՀԽՍՀ Թումանյանի շրջանում:

Վանքի իսկական անունը Հաղբատ է, հետագայում ընդհանրական է դարձել Հաղպատ ձևը: Անունը կազմված է երկու բաղադրամասերից. հաղբ և ատեմ: Հաղբ նշանակում է որոգայթ: Հաղբատ նշանակում է ատեմ գհաղբ, այսինքն՝ ատում եմ կամ խույս եմ տալիս որոգայթից: Այս անունը վանքին տվել են առաջին միաբանները, որոնք աշխարհը, աշխարհիկ կյանքը որոգայթ համարելով, փախել են նրա ունայնությունից և մտել վանք:



# ՀՈՒՆԻՍ

|            |   |    |    |    |
|------------|---|----|----|----|
| ԵՐԿՈՒՇԱԲԹԻ | 4 | 11 | 18 | 25 |
| ԵՐԵՔՇԱԲԹԻ  | 5 | 12 | 19 | 26 |
| ՉՈՐԵՔՇԱԲԹԻ | 6 | 13 | 20 | 27 |
| ՀԻՆԳՇԱԲԹԻ  | 7 | 14 | 21 | 28 |
| ՈՒՐԲԱԹ     | 1 | 8  | 15 | 22 |
| ՇԱԲԱԹ      | 2 | 9  | 16 | 23 |
| ԿԻՐԱԿԻ     | 3 | 10 | 17 | 24 |

## ԳՐԱԿԱՆ ՄԱԿԱՆՈՒՆԵՐ

Ծածկանունը մականուն է, որով հանդես են գալիս գրողները, պատմաբանները, արվեստագետները, պետական, ռազմական ու հեղափոխական գործիչները և ուրիշներ:

Ծածկանունը, կեղծանունը և գրական անունը նորաթուխ բառեր են: Մեր հները այս բուլորի փոխարեն օգտագործել են մականունը, որ նշանակում է մարդուն տրված վերադիր անուն, փոթ անուն: Մականուն բառացի նշանակում է անվան վրա դրված անուն:

Մեր ժողովրդի անվանադիր Հայկը եղել է քաջ նետաձիգ, որի պատճառով էլ ստացել է

Աղեղնավոր Հայկ մականունը: Մականուն են ունեցել նաև Հայկի սերունդները: Նրանցից Անուշավանը կոչվել է Սոսանվեր, որովհետև նվիրված է եղել Արմավիրի Սոսյաց անտառին: Հնչեղ մականուն է Արա Գեղեցիկը: Այդպես է կոչվել իր գեղեցիկ ու վսեմաշուք տեսքի համար: Ի հակակշիռ Արա Գեղեցիկի, հայկյան զարմի մեջ իր տգեղ արտաքինով աչքի է ընկել Տորքը և կոչվել Տորք Անգեղ:

Հնում մարդուն ճանաչում էին միայն անունով: Ազգանունները հանդես են եկել հետո: Նախապես ասենք, որ բոլոր ազգանունները ինչ-որ չափով մականուններ են: Ի տարբերություն անձնանունների, մականունը ուշ է տրվում

մարդուն: Մականվան մեջ ի հայտ է գալիս մարդու կենսագրության, նրա վարքի ու գործունեության, զբաղմունքի ինչ-որ կողմ:

Մականունների մի մասը դարձել է ազգանուն և հաստատել տվյալ տոհմի ինքնությունը, իսկ մյուս մասը մնացել է որպես մականուն և վերաբերել միայն տվյալ գործչին: Այսպես, կռվի ժամանակ Արտաշես Առաջին թագավորի ծնմոր որդի Գիսակի երեսի կեսը կտրում են սըրով: Արտաշեսը ըստ արժանվույն է գնահատում մարտի ժամանակ Գիսակի ցուցաբերած քաջությունը, նրա տոհմանդամներին նախարարական ցեղի կարգն է դասում և նրանց կոչում Դիմակիսյան (դիմակիս՝ այսինքն դեմքը կես եղած), որը հետագայում հնչյունափոխվում է ու դառնում Դիմաքայան: Այս մականունը դառնում է ազգանուն և ահա 2000 տարուց ավելի է, ինչ հարատևում է: Բայց ահա մեր ամենամեծ պատմիչի մականունները մնացին որպես մականուններ և ազգանուններ չդարձան: Քերթողահոր անունը Մովսես է: Լա ծնվել է 410 թվականին, Տարոնի Խորոնք գյուղում: Հայրենի գյուղի անունով կոչվել է Խորենացի, որ կարելի է համարել նրա առաջին մականունը: Այդ ժամանակներում ընդունված էր մարդկանց կոչել իրենց ծննդա-

վայրի անուններով: Մովսես Խորենացուն կոչել են Քերթողահայր, որ նշանակում է քերականների, պատմիչների, բանաստեղծների, գրիչների հայր: Դա Մովսես Խորենացու մեծությանն արժանի պատվանուն է: Ի դեպ, տարբեր ժողովուրդներ հայր մակդիրով կամ մականունով են կոչել այն նշանավոր մարդկանց, որոնք որևէ բնագավառի հիմնադիր են համարվել: Օրինակ, հույները Հերոդոտոսին համարել են իրենց պատմահայրը, Հոմերոսին՝ դյուցազներգության հայրը, երգիծաբան Արիստոֆանին՝ կատակերգության հայրը, Հիպոկրատին՝ բժշկության հայրը և այլն: Մեր հներն էլ չեն բավարարվել Մովսես Խորենացուն Քերթողահայր կոչելով: Նրան անվանել են նաև Պատմահայր: Սրանք պատվանուններ են կամ ժամանակակից ըմբռնմամբ՝ գերական անուններ: Մականուն է ունեցել նաև Մովսես Խորենացու հարազատ եղբայր Մամբրեն: Նա այնքան հմուտ թարգմանիչ է եղել, որ ստացել է Վերծանող (հնում վերծանել նշանակել է թարգմանել) մականունը: Ուշագրավ է Մովսես Խորենացու քոռո տղայի՝ 5 — 6-րդ դարերի հանձարեղ փիլիսոփա Դավիթ Անհաղթի մականունը: Անհաղթ է կոչվել իմաստասիրական վեճերում, մտքի ճակատամարտերում տարած հաղթանակների համար:

5 — 6-րդ դարերի պատմիչ է Ղազար Փարպեցին: Լա ծնվել է Աշտարակի շրջանի Փարպի գյուղում, որի համար էլ ստացել է Փարպեցի մականունը: 7-րդ դարի հայ նշանավոր գիտնական Անանիան, որն առաջինն է կայուն հիմքերի վրա դրել ճշգրիտ գիտությունների ուսումնասիրությունը Հայաստանում, ծնվել է Շիրակում և ստացել Շիրակացի մականունը:

7-րդ դարի հայ անվանի պատմիչ Մովսես Կաղանկատվացին ծնվել է Ռևտիքի Կաղանկատույք գյուղում, որի համար էլ ստացել է Կաղանկատվացի մականունը: Հայ հանճարեղ բանաստեղծ Գրիգոր Լարեկացին (951 — 1003) ծնվել է Վանա լճի հարավային ափերին գտնվող գյուղերից մեկում: Փոքրուց կապվել է Ռշտունիքի Լարեկ գյուղի վանքի հետ, որի համար էլ ստացել է Լարեկացի մականունը:

Միջնադարի մեծ մտածողներից է Գրիգոր Մագիստրոս Պահլավունին (990 — 1058): Լա սերում է Պահլավունիների տոհմից և կոչվել է Գրիգոր Պահլավունի: Բջին եղել է նրա տոհմական կալվածքը, որի համար կոչվել է նաև Գրիգոր Բջնեցի: Կյանքի վերջին տարիներին ծառայության է անցել բյուզանդացիների մոտ և կոչվել Գրիգոր Մագիստրոս: Մագիստրոսը պատվավոր տիտղոս էր Բյու-

զանդիայում, որ տրվել է բարձրաստիճան պաշտոնյաներին: Այսպիսով, մարդը միանգամից կրել է երեք մականուն՝ Գրիգոր Պահլավունի Բջնեցի Մագիստրոս:

11-րդ դարի պատմիչ Արիստակես Լաստիվերցին ծնվել է Արծն քաղաքի մոտերքում գտնվող Լաստիվեր գյուղում և ստացել Լաստիվերցի մականունը:

Բանաստեղծ, մատենագիր, երաժիշտ-երգահան Լերսես Ընորհալին Գրիգոր Մագիստրոս Պահլավունու ծոռն էր: Լա ծնվել է մոտ 1100 թվականին, Մոփաց նահանգի Անձիտ գավառի Մովք դղյակում, մահացել է 1173 թվականի օգոստոսի 13-ին, Հռոմկլայում: Ընորհալի մականունն է ստացել իր շքեղ քերթվածների համար: Նրան կոչել են նաև Լերսես երգեցող: Երբ ծանոթանում ես Ընորհալու գործունեությանն ու ստեղծագործությանը, ակամայից զարմանում ես, թե այս հանճարեղ մարդուն ինչու են այդպիսի համեստ պատվանուն տվել: Բանն այն է, որ շնորհք բառը մեր ժամանակներում ինչ-որ չափով խեղճացել է: Միջնադարում շնորհքն ունեցել է քանքարաշատ, տաղանդավոր, հանճարեղ իմաստը: Ընորհալի նշանակել է աստծու կողմից շնորհներով օժտված մարդ, այսինքն՝ բնածին տաղանդ, բնածին հանճար: Այնպես





որ Լերսես Ընորհալին գոհ է եղել իր պատվանունից: Մեր օրերի գրական շրջանակներում տարածված է մի այսպիսի խոսք. «Այսօրվա որոշ համբավատենչ հայ գրողների չի բավարարում տաղանդավոր անվանումը, մինչդեռ Լերսես Ընորհալին բավարարվել է միայն Ընորհալի տիտղոսով»: Այսպիսի զուգահեռը անգիտության արդյունք է: Ղևոնդ Ալիշանը իր «Ընորհալի և պարագայ իւր» երկի մեջ (լույս է տեսել 1873-ին, Վենետիկում) գրում է, որ հայկական պատվանունների մեջ ամենափայլունն ու ամենապատշաճը Լուսավորիչը (Գրիգոր Լուսավորիչ) և Ընորհալին (Լերսես Ընորհալի) են և ավելացնում, որ հազիվ թե հնարավոր լիներ ուրիշ համապատշաճ ու գեղեցկահարմար անուն գտնել մեր երկու մեծերի համար: Ալիշանը նշում է, որ Լերսես Ընորհալի մականունը «ավելի հայտանիշ ու պանծալի եղավ, քան իր երկու ուրիշ կոչումներն ալ, Կլայեցի, Երգեցող»: Ընորհալի պատվանունն այնքան ընտիր է համարվել, որ հայերը մեծ ցավ կհամարեին, եթե նրան կոչեին ուրիշ անունով: Ալիշանն ասում է, որ ըստ ավանդության, մի հրեշտակ է իջել երկրի վրա և պատվիրել հայերին, որ Լերսեսին կոչեն Ընորհալի: Այսպիսով, իր ժամանակին Ընորհալին

համարվել է աստվածապարզ անվանակոչում:

Հայկական Կիլիկիայի Այգեկ վանքը հիմնադրվել է 1166 թվականին, մի այգեշատ վայրում, որի համար էլ ստացել է Այգեկ անունը: Այս վանքում 1206 թվականին հաստատվել է առակագիր Վարդանը, որտեղ և 1212 թվականին գրել է իր հրաշալի առակները: Վանքի անունով էլ նա կոչվել է Վարդան Այգեկցի:

17-րդ դարի պատմիչ Առաքելը ստացել է Դավրիժեցի մականունը, որովհետև ծնվել է Դավրեժ (Քավրիզ) քաղաքում: Հայ ժողովրդի մեծանուն զավակներից է 18-րդ դարի բանաստեղծերգիչ Սայաթ-Նովան: Երգչի անունը Հարություն է, իսկ Սայաթ-Նովան մականուն է, որ որոշ բանասերների կարծիքով նշանակում է երգի արքա կամ երգի որսկան: Առավել հավանական է բանաստեղծ, Հայկական ԽԱՀ ԳԱ թղթակից անդամ Վահագն Դավթյանի տեսակետը, ըստ որի Սայաթ-ը աշուղի ազգանվան Սայադյանի կրճատված, մի փոքր հնչյունափոխված ձևն է, իսկ Նովան հնդեվրոպական նախալեզվի բառ է, որ նշանակում է նոր:

Եթե հնագույն ժամանակներից մինչև 18-րդ դարի վերջը եղած հայկական մականունները փորձենք համակարգել, ապա կստանանք հետևյալ բնութա-

գիրը: Մականուններ են ունեցել հասարակության տարբեր խավերը: Ազգանունների ի հայտ գալուց հետո մականունների թիվը նվազել է: 19-րդ դարի վերջում և հատկապես 20-րդ դարում մականունները հիմնականում պահպանում են գրողները և արվեստի մի քանի բնագավառների գործիչները:

19-րդ դարի անվանի բանաստեղծ Ռաֆայել Պատկանյանը 1852-ին ընդունվել է Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետը: 1854-ին համալսարանի մի խումբ ուսանողների հետ նա հիմնադրել է Գամառ-Քաթիպա գրական ընկերությունը: Այդ անունը կազմված է ընկերության երեք հիմնադիր անդամների՝ պատմության ֆակուլտետի ուսանող Գևորգ Քանանյանի և բժշկական ֆակուլտետի ուսանողներ Մնացական Թմուրյանի և Ռաֆայել Պատկանյանի անունների սկզբնատառերից, ա հողակապից և ազգանունների առաջին վանկերից: Ընկերության նպատակն էր մըշակել նոր ձևավորվող աշխարհաբարը, հայ ժողովրդին մղել ազգային ինքնագիտակցության: Գամառ-Քաթիպա ընկերությունը որոշում է հրատարակել իր պարբերականը: Այդ նպատակին հասնելու համար Ռաֆայել Պատկանյանը 1854-ին թողնում է Մոսկվայի համալսարանը և

մեկնում Պետերբուրգ: Այստեղ նրա ջանքերով սկսում են տպագրվել «Գամառ-Քաթիպայի արձակ և չափաբերական աշխատությունները» (լույս է տեսել ընդամենը 5 տետրակ): «Գամառ-Քաթիպան» իբրև օրագիր երկար կյանք չունեցավ: 1857-ին նրա հրատարակությունը դադարեց, ընկերությունը ցրվեց, և Գամառ-Քաթիպան մնաց որպես Ռաֆայել Պատկանյանի գրական անունը:

Հետաքրքրական է ականավոր վիպասան Պերճ Պռոշյանի (1837 — 1907) գրական անվան պատմությունը: Վիպասանի իսկական անունը Հովհաննես է, հայրանունը՝ Ստեփան, ազգանունը՝ Տեր-Առաքելյան: Բայց ինչպես եղավ, որ Հովհաննես Ստեփանի Տեր-Առաքելյանը դարձավ Պերճ Պռոշյան:

Վիպասանը «Հուշիկներ» գիրքը (Թիֆլիս, 1894) սկսում է իր տոհմի ճյուղագրության պատմությամբ: Պռոշյանը գրում է, որ իր հայրը և մայրը Աշտարակի ծնունդ են, «Մորս նախնիների մասին, — ասում է նա, — ոչինչ չգիտեմ, իսկ հայրական պապերս բնիկ աշտարակեցի չեն եղած. պատմական Գառնի ավանից (արդիս Բաշ-Գառնի գյուղից) են գաղթել Աշտարակ՝ անցյալ դարու սկզբներում: Հայրս դերձակ է եղել, և մայրս՝ նրա օգնականը: Իմ ամենախոր հիշողու-

թյունը հասնում է մինչև հորս լայնաբերան մկրատը... Խեղճ հայրս անդադար կրկնում էր յուր ազնվական ծագման մասին, ինչ որ լսել է Գեորգ վարժապետ Խուբովյանից, պատմում էր Խուբովյան բառի ծագումն ու նշանակությունը, ասում էր, որ յուր նախնին եղել է Պռոշ թագավորը, որ նստել է Գառնիումը և շինել է Գեղարդա հռչակավոր վանքը. ասում էր՝ Պռոշ ռուսերեն բառով թարգմանվում է դուբ (ryba) և թե դուբով բառը քաղցրահնչյուն չլինելու համար Գեորգ վարժապետ բարվոք է համարել Պռոշյանց բառը վերածել Խուբովի կամ Խուբովյանցի»:

Այնուհետև գրողը մեջբերում է իր տոհմածառի մասին Գեորգ վարժապետի հաղորդած տեղեկությունները և ավելացնում. «Հայտնի չէ՝ ինչ աղբյուրներից է քաղել Գեորգ վարժապետն յուր տեղեկագիրը, որ շատ ու շատ անհատներ Պռոշի սերնդից մոռացության են տրվել, բայց մեր ազգի Պռոշի սերնդից շարունակությունն անտարակուսելի է»:

Արդ, ո՞վ է Պռոշ թագավորը, որին վիպասանը համարում է իր տոհմի նախնին: 13-րդ դարի բանաստեղծ Խաչատուր Կեչառեցին գովերգել է միջնադարյան հայկական իշխանական տոհմի ներկայացուցիչ Վասակի որ-

դու՝ Պռոշի (1223 — 84) շինարարական մեծագործություններն ու ռազմի դաշտերում ցուցաբերած սխրագործությունները: Պռոշի հովանավորությամբ են կառուցվել Գեղարդի վիմափոր տաճարները: Պռոշի դերն ու ծառայություններն այնքան մեծ են եղել Խաղբակյանների իշխանության քաղաքական ու մշակութային կյանքում, որ նրանունը ընդելուզվել է Խաղբակյան տոհմանվանը՝ Խաղբակյան-Պռոշյան, հաճախ էլ փոխարինել է նրան միայնակ՝ Պռոշյան, և դարձել իշխանական տոհմանուն:

Վիպասանը իր ազգանունը փոխարինել է հերոսազարմ այս Պռոշյան ազգանունով, լիովին համոզված, թե դրանով մոտենում է իր արմատներին: Այլընդանուր դա եղել է միայն ազգանվան ճշտում, վերահաստատում: Հետագայում է այն դարձել նաև գրական անուն:

Վիպասանը փոխել է նաև Հովհաննեսը, ընդունել առավել հայեցի ու բարեհնչյուն Պերճ անձնանունը և դարձել Պերճ Պռոշյան:

Ի հավելումն այս ամենի, ասենք, որ Պերճ Պռոշյանը իր որոշ հոգվածներ ստորագրել է այլևայլ ծածկանուններով: Այսպես, 1872 թվականին «Մշակ» թերթում հանդես է եկել «Նամակներ Երևանից» հոդվածաշարով,

որ ստորագրել է Պահլավունի ծածկանունով:

Մեծանուն վիպասան Բաֆֆին (Հակոբ Միրզայի Մելիք-Հակոբյան, 1835 — 88) չի ստուգաբանել իր գրական անունը: Ինչ է նշանակում Բաֆֆի, ինչո՞ւ է գրողն այդպիսի կեղծանուն ընտրել:

Բաֆֆի անունը կարելի է ստուգաբանել երկու կերպ: Առաջին: Բաֆֆին ռաբբի բառի հնչյունափոխված ձևն է: Բաբբի բառի արմատը սեմական է և նախնական իմաստով նշանակել է մեծ, մեծավոր, տեր: Հետագայում բառի իմաստն ավելի է ընդարձակվել. այն է՝ ռաբբի նշանակում է վարդապետ, ուսուցիչ, առաջնորդ: Բաբբի բառից են հայերենի մեջ հազարամյա արմատներ ձգած ռաբբուն, ռաբունապետ, ռաբունի բառերը, որոնք ունեն նույն իմաստը, ինչ ռաբբին:

Դեռևս երիտասարդ տարիքում Հակոբ Մելիք-Հակոբյանը երազում էր դառնալ իր ժողովրդի գաղափարական առաջնորդը, ուսուցիչը, իր գրվածքներով բորբոքել արյունակիցների ազգային-ազատագրական զգացումները: Այս ամենի համար գրողն իրեն անվանել է Բաֆֆի (ռաբբի բառի բարեհնչյուն ձևով), որ լիովին պատշաճում է նրա հոգեվոր կերտվածքին:

Երկրորդ: Հայտնի է, որ 1852—56 թվականներին ապագա վի-

պասանը սովորել է Թիֆլիսի ռուսական գիմնազիայում: Այդ տարիներին Բաֆֆի անունով իտալացի մի երգիչ հյուրախաղերի է եկել Թիֆլիս: Հնարավոր է, որ Հակոբ Մելիք-Հակոբյանը հրապուրվել է այդ երգչով և վերցրել նրա անունը:

Հայ անվանի վիպասան Մուրացանի (1854 — 1908) իսկական անունը Գրիգոր է, հայրանունը՝ Աստվածատուր, ազգանունը՝ Տեր-Հովհաննիսյան:

Մուրացանի գլուխգործոցը «Գևորգ Մարգպետունի» պատմավեպն է: Բայց մինչ այդ նա գրական ճանաչման է արժանացել «Ռուզան կամ Հայրենասեր օրիորդ» դրամայով: Այդ պիեսը նա գրել է Թիֆլիսում, 1881 թվականի դեկտեմբերին: Դա բախտավոր ստեղծագործություն էր: Դրաման ավարտելուց մի քանի օր անց, 1882 թվականի հունվարին մի կողմնակի անձի միջոցով Գրիգոր Տեր-Հովհաննիսյանը Մուրացան ծածկանունով այն հանձնում է թատերական հանձնաժողովին: Դրաման հավանության արժանանալուց հետո էլ հեղինակը չի ցանկացել «հայտնվել» և անհայտ է մնացել մինչև ներկայացման գիշերը: Պիեսի հանդեպ, սակայն, սկսել են հետաքրքրություն ցուցաբերել մինչև բեմադրությունը: «Կավկազ» թերթը գրել է, թե «Ռուզանը» անհայտ

հեղինակի գործ է, հեղինակ, որն իր անունը համեստորեն ծածկում է հասարակությունից: Ապա թերթն ավելացնում է, որ նա մի հասարակ գործակատար է: Հենց առաջին ներկայացումը մեծ հաջողություն է ունեցել: Յուրաքանչյուր գործողությունից հետո բեմ են կանչել երիտասարդ հեղինակին:

«Ռուզան» դրամայի այդ բեմադրությամբ էլ նոր-նոր գրչափորձեր անող հեղինակը միանգամից ճանաչված գրողի անուն է հանել, և Գրիգոր Տեր-Հովհաննիսյանը դարձել է Մուրացան:

Բայց ինչո՞ւ է գրողն այդ անունն ընտրել, ինչ է նշանակում Մուրացան: Հին Հայաստանում նախարարական մի տոհմ է եղել Մուրացյան, Մարացյան կամ Մուրացան անունով: Մովսես Խորենացին հավաստում է, որ երվանդ Վերջինի դեմ Արտաշես Առաջինի պայքարի ժամանակ Մուրացան տոհմի նահապետ Արգամը (Արգավան) լքում է երվանդին և իր գործով անցնում Արտաշեսի կողմը: Հետագայում Արտաշես արքան նրան շնորհում է երկրորդական գահ: Այս տոհմը ընդարձակ կալվածքներ է ունեցել Երասխի գետահովտում, Նախճավանում, Մարաց կողմերում:

Ահա այս Մուրացան տոհմի անունն էլ Գրիգոր Տեր-Հովհաննիսյանը դարձրել է իր գրա-

կան մականունը: Վիպասանը բնիկ շուշեցի էր և Մուրացան տոհմի հետ ազգակցական ոչ մի կապ չուներ: «Ռուզան» դրաման գրելու ժամանակ նա սկսել էր հրապուրվել հայ ժողովրդի պատմությամբ, նրան պարզապես դուր էր եկել Մուրացան տոհմանունը, որը և դարձավ գրողի մականունը:

Մեծանուն բանաստեղծ Վահան Սուքիասի Տերյանը (Տեր-Գրիգորյան) սկզբում ստորագրել է Վահան Տեր-Գրիգորյան կամ կրճատ՝ Վահան Տ. Գր.: Ուսանողական տարիներին կրել է Շվին, Վոլո և ուրիշ կեղծանուններ: 1907 թվականի վերջերից ստորագրել է Տերյան: 1910 թվականի մայիսի 10-ին Յուլյակ Խանզադյանին գրած նամակում կատակով ստորագրել է Վահանու Տերյանուս:

Հայոց մեծերից մեկի՝ Սիամանթոյի (Ատոմ Հովհաննեսի Յարճանյան, 1878 — 1915, Մեծ եղեռնի զոհ) գրական մականվան մասին: Բանաստեղծը ծնվել է Արևմտյան Հայաստանի Ակն քաղաքում, օգոստոսի 15-ին, որը կիրակի էր, Աստվածածնի օրը, և քանի որ ծնողների անդրանիկ զավակն էր, մկրտվում է Աստվածատուր (Ասատուր) անունով: Հետագայում բանաստեղծը հրաժարվում է Աստվածատուրից և իրեն կոչում Ատոմ: Սիամանթո գրական անունն Ատոմն ստա-

նում է Ակնի Լերսեսյան դպրոցում սովորելու տարիներին: Այս դպրոցում տեսչի պաշտոն էր վարում Նշանավոր բանահավաք Գարեգին Արվանձտյանը: Վերջինիս հավաքած բանահյուսական նյութերի մեջ եղել է մի պոեմ «Սարե Սիփանե» կամ «Սիամանդոն և Խըջե-Ջարե» վերնագրով: Այդ պոեմի հերոսների անունների նմանությամբ Արվանձտյանը փաղաքուշ անուններ է տալիս սաներին՝ Ատոմին կոչում է Սիամանթո, իսկ Ատոմի քրոջը՝ Արմենուհուն՝ Խջեգարե:

Բանաստեղծ, քննադատ ու տեսաբան Տիրան Գասպարի Չըրաքյանի (1875 — 1921) գրական անունը Խնտրա է: Այս ծածկանունը Տիրան անվան ձևափոխված ձևն է:

Լար-Դոս գրական անունն ունի այսպիսի պատմություն: Լարդոսը մեղրատու ծաղիկ է, որ աճում է նաև Անդրկովկասում: Մի անգամ վիպասանի բրդավաճառ հայրը հիվանդանում է: Տատի խորհրդով գորգավաճառը Լարդոսից պատրաստած հյութ է խմում և ապաքինվում: Դա զարմացնում է փոքրիկ Միքայել Հովհաննիսյանին, և նա սկսում է արտակարգ սեր տածել Լարդոս ծաղկի հանդեպ: Հետագայում այդ ծաղկի անունը նա դարձնում է իր գրական անունը: Վիպասանը ծաղկի անունը բա-

ժանել է երկու մասի և դրանք միացրել միության գծիկով: Երազում էր երկու տղա ունենալ, մեկի անունը դնել Լար, մյուսինը՝ Դոս: Իր այս երազանքն իրականանալուց հետո նա պետք է դեն գցեր միության գծիկը և իր անունը գրեր այնպես, ինչպես ծաղկի անունն է գրվում: Բայց գրողն ունեցավ միայն մի տղա (երգիչ, ԽԱՀՄ ժողովրդական արտիստ Լար Հովհաննիսյան) և միության գծիկով երկատված անունը ժառանգություն թողեց ընթերցողներին:

Իսկ ինչպես է բանաստեղծ եղիշե Աբգարի Սողոմոնյանը ընտրել Չարենց գրական անունը: Տարածված երկու տեսակետի մասին էլ պատմել է ինքը՝ բանաստեղծը: Առաջինը գրի է առել Գուրգեն Մահարին. «Դեռ Դարսում մի քանի ստիխ տպեցի Սողոմոնյան ազգանունով: Մի բժիշկ եկավ մեր քաղաքը, տուն վարձեց, դռան վրա կայրեց «Բժիշկ Չարենց, ներքին հիվանդություններ»: «Չարենց»-ը հավանեցի ու վերցրի: Ես մի օր կանմահացնեմ բժշկին էլ, իր ազգանունն էլ»:

Երկրորդի մասին նա հայտնել է իր մտերիմ ընկերոջը՝ Վիվանին: Դա պատահել է այսպես: «Երեք երգ տխրադալուկ աղջկան» խորագրով առաջին գիրքը տպարանում էր, երբ բանաստեղծի ձեռքն է ընկնում Պուշկինի

բանաստեղծությունների գիրքը: Պատահմամբ բացված էջի վրա նրա աչքին է ընկնում «Անշար» բանաստեղծությունը: Եղիշեն Անշարը դարձնում է Չարենց և այդ անունով էլ մտնում գրական ասպարեզ:

Ակսել Բակունցի (Ալեքսանդր Ստեփանի Թևոսյան) տոհմական մականունը Բեգունց էր, որի նմանությամբ էլ գրողը ստեղծել է իր Բակունց գրական անունը: Երբ ծնվում է Բակունցը, հոր ալեքսանդրապոլցի ընկերներն ընծաներ են ուղարկում, հետև էլ խնդրում, որ որդու անունը Ալեքսանդր դնի ի պատիվ իրենց քաղաքի՝ Ալեքսանդրապոլի (այժմ Լենինական): Գրողի հայրն այդպես էլ անում է: Սակայն Ալեքսանդր անձնանունը կեսձանապարհին է մնում: Պատանեկան տարիներին Բակունցը խաղում է նորվեգացի դրամատուրգ Բ. Բյոռնսոնի «Նորապսակները» պիեսի հերոսներից մեկի՝ Ակսելի դերը, և ընկերները Ալեքսանդրի փոխարեն սկսում են նրան Ակսել կոչել այնքան ժամանակ, մինչև Ալեքսանդր անունը մոռացության է տրվում, և գրողն ընդունում է Ակսել անձնանունը:

Հովհաննես Շիրազը (Օնիկ Թադևոսի Կարապետյան) իր գրական անվան մասին գրել է. «Շիրազ անունն ինձ տվել է Ատրպետը: 1935-ին լույս տեսավ

անդրանիկ ժողովածուն՝ «Գարնանամուտը», Վահրամ Ալազանի խմբագրությամբ, որին երախտապարտ եմ: Գրքիս ճակատին արդեն առք-փառք թառել էր Հովհաննես Շիրազ անունը: Ատրպետն ասում էր, որ այս պատանու բանաստեղծությունները վարդաբույր են, թարմ ու ցողապատ, ինչպես Շիրազի վարդերը: Այդպես էլ կընթացի Շիրազ: Ընթերցողներս կշտամբում են հաճախ գրել ես «Մեր մարդկանց անունները», բայց ինքդ պարսկական անուն ես վերցրել: Նույնիսկ սփյուռքահայ մի թերթ առաջարկել է այսուհետև կոչվել Հովհաննես Շիրակ, քանի որ Շիրակի ծնունդ եմ: Ռեշ է, կարծում եմ, անվանափոխվելը»:

Հետաքրքիր սկզբունքով է գրական մականունն ընտրել սփյուռքահայ անվանի գրող Համաստեղը (Համբարձում Հովհաննեսի Կելենյան, 1895 — 1966): Համաստեղ անունը կազմված է իր (ՀԱՄբարձում) և իր երկու եղբայրների (ԱՍՏուր, ԵՂԻա) անունների առաջին վանկերից:

Մեր ժամանակներում հայ գրողներից շատերն ունեն դիպուկ մականուններ: Հնում մականուններն էին ազգանուններ դառնում, այժմ ազգանուններից են արտածում գրական անուններ: Այսպես, Կարապետյան ազ-

գանունից՝ Կարայան և Կարենց մականունները, Խաչատրյանից՝ Խաչունց և այլն:

Ձախորդ օրերը ձմռան նման կուգան ու կերթան, Վհատելու չէ, վերջ կունենան, կուգան ու կերթան. Դառն ցավերը մարդու վրա չեն մնա երկար, Որպես հաճախորդ՝ շարվե- շարան, կուգան ու կերթան: Զիվանի

## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՐԱՏԱՆԻ

Նախանձն է չարիքի սկիզբը: Եզնիկ Կողբացի

Ոչ կարծիքներով եմ վեր թռել, ոչ էլ լուրերից եմ արթնացել: Եղիշե

Փիլիսոփայությունը սեր է դեպի իմաստությունը:

Դավիթ Անհաղթ

## ՊԱՏԱՆԻ ԶՎԱՐՃԱԽՈՍԸ

Ամեն մարդու մեջ էլ զվարճախոսելու շնորհք կա: Տարբերությունն այն է, որ մեկն ավելի է օժտված լինում, մյուսը՝ քիչ: Ոմանք վախից ու ամաչելուց կուլ են տալիս իրենց սրամտությունները: Այդ պատճառով էլ հին հայկական առածն ասում

է. «Առանց համարձակության զվարճախոս չես դառնա»:

Բայց չկարծեք, թե զվարճախոսությունը մեծերի մենաշնորհն է: Մարդն սկսում է զվարճախոսել երեք-չորս տարեկանից: Ափսոս որ ոչ ոք գրի չի առնում փոքրերի զվարճախոսությունները:

Հիմա պատմենք մի տղայի մասին, որի անունը Ջան է: Նա ապրել է մեզնից 150 տարի առաջ, Վան քաղաքում: Ջանի կենսագրությունը չի պահպանվել, նույնիսկ ազգանունը հայտնի չէ: Պատանի հասակում նա զվարճախոսի անուն է հանել: Հետո չգիտենք, թե ինչ եղավ նրան: Սրամտությունները, որ ներկայացնում ենք ընթերցողի ուշադրությանը, Ջանն արել է այն ժամանակ, երբ 15—16 տերեկան էր:

## 1. ՊՃՆԱՄՈԸ ՎԱՆ ՉՍՏԱԿ

Մի պճնամուլ երզնկացի բռնորի ուշադրությանն արժանանալու համար սիրում է իր գանգուր մազերը ամեն օր հարդարել նոր ձևով: Լսելով, որ Վանում մի վարսահարդար մազերը խոպոպելու նոր ձև է հնարել, այս պճնամուլը վեր է կենում և երզնկայից գալիս, հասնում է Վան: Քաղաքի մուտքի մոտ հանդիպում է Ջանին և հարցնում.

— Էյ, տղա, չես կարող ասել, թե ձեր քաղաքում ով է խոպոպ



սարքում: Զանը ոտից գլուխ չափում է պճնամուլին ու ասում.

— Քեռի ջան, ավելի լավ է քեզ մի խորհուրդ տամ, քան հարցիդ պատասխանեմ: Տարեց վանեցիներին այդպիսի հարց չտաս: Նրանք քո վզակոթին կտան՝ կարծելով, թե իրենց աքլորի տեղ ես դնում:

Պճնամուլը կանգ է առնում, մի պահ խորհում և, վան չմտած, շուռ գալիս ու բռնում է տունդարձի ճամփան:

## 2. ՈՎ ԻՆՉՊԵՍ Է ՅԱՏԿՈՈՄ

— Այս տարվա գարունը գարնան նման չէր, — ասացին մեծերը:

Զանը շարունակեց.

— Հա, տարին շտապեց ու գարունը կոնատակին առած փետրվարից մինչև հունիս մի ցատկ արեց: Մեր թաղի քահանայի օրն է ընկել: Հենց որ եկեղեցու գանձատուփը լցվում է՝ իսկույն թևի տակ է առնում ու տուն հասնում մի քանի ոստյունով:

## 3. ԾՈՒՅԼԻ ՉԵՌՔԻՑ ԲԱՆ ՉԵՆ ՎԵՐՅՆԻ

Տեսնելով, որ Զանը քնի մեջ անկապ-անկապ բաներ է խոսում, մայրը բոթում և արթնացնում է նրան:

— Ուշքի եկ, տղաս, — ասում է մայրը: — Այդ ճամ հետ էիր վիճում:

— Երազում մեր հարևան Թաթոսն էր կպել ինձ:

— Այդ ծուլն ինչ էր ուզում քեզնից:

— Մի տոպրակ ոսկի էր տալիս՝ չէի վերցնում:

— Ինչո՞ւ:

— Ինչպե՞ս թե ինչու, մայրիկ: Երազում լինի, թե արթմնի՝ եթե ծուլի ձեռքից բան վերցնես՝ ինքդ էլ ծուլ կդառնաս: Ավելի լավ է մարդ ոսկի չունենա, բայց աշխատասեր մնա, քան ոսկի ձեռք բերի և ծուլի ու անբանի անուն հանի:

## 4. ԱՄԵՆԱՀԱՄԵՂ ՉՈՒԿԸ

Զանին հարցրին.

— Ո՞րն է աշխարհի ամենահամեղ ձուկը:

— Վանա տառեխը:

— Բայց ասում են ուրիշ տեղերում ավելի համեղ ձկներ կան:

— Նրանցից ոչ մեկը մեր տառեխին չի հասնի:

— Ինչո՞ւ:

— Ամենաքաղցրը քո ամենօրյա կերածն է և ոչ թե ականջիդ ընկած, բայց քիմքիդ չհասած համա այն ձկների, որոնք իրենց համար լողում են հեռավոր ջրերում, — իր խոսքն ավարտեց Զանը:

## 5. ԻՆՉՊԵՍ ՎԵՐՋ ՏԱԼ ՇԱՏԱԽՈՍՈՒԹՅԱՆԸ

Մի մարդ գալիս է Զանի մոտ և ասում.



— Լսել եմ, որ դու շատ խելոք  
ես, դրա համար էլ եկել եմ քեզ  
մոտ, որ մի խորհուրդ տաս:  
Հա, ինչ էի ասում: Կինս շա-  
տախոս է: Քիչ է մնում, թե նրա  
շատախոսությունից խենթանամ:  
Առավոտից մինչև երեկո խոսում  
է, մի բան էլ որ ասում ես՝ ավե-  
լի է ոգևորվում:

— Մի արձագանքիր նրան, —  
պատասխանեց Ջանը և ավելաց-  
րեց, — ձևացրու թե խուլ ու համր  
ես:

— Իսկ եթե շարունակի խոսել:

— Չի շարունակի: Առանց  
աղունի ոչ մի ջրաղացքար եր-  
կար չի պտտվում:

Ճաք է տվել ապակին —  
Դրսից դեռ չի երևում,  
Ճաք է տվել իմ հոգին —  
Դրսից դեռ չի երևում:

Սիլվա Կապուտիկյան

Դու խելոք, հաշվով

վաճառական ես,  
Սյուլք, փող ու ապրանք, կասեն  
շատ ունես —  
Բայց թե փողեդ շահ չունի

Հայաստան,  
Թըքել ենք քու ալ, փողիդ ալ  
վըրան:

Ռաֆայել Պատկանյան

Սանձել է ուզում հողմերին  
Այս... ողորմելին:

Եղիշե Չարենց

Քուն թե արթուն՝ օրիս շատը  
երազ եղավ, անցկացավ,  
երազն էլ, նուրբ ու խաբուհիկ,  
վըռազ եղավ, անցկացավ.  
Վըռազ անցան, երազ, մուրազ,  
ու չհասա ոչ մեկին,  
Կյանքս թեթև տանուլ տված  
գրազ եղավ, անցկացավ:

Հովհաննես Թումանյան



# ՀՈՒԼԻՍ

|            |   |    |    |    |    |
|------------|---|----|----|----|----|
| ԵՐԿՈՒՇԱԲԹԻ | 2 | 9  | 16 | 23 | 30 |
| ԵՐԵՔՇԱԲԹԻ  | 3 | 10 | 17 | 24 | 31 |
| ՉՈՐԵՔՇԱԲԹԻ | 4 | 11 | 18 | 25 |    |
| ՀԻՆԳՇԱԲԹԻ  | 5 | 12 | 19 | 26 |    |
| ՈՒՐԲԱԹ     | 6 | 13 | 20 | 27 |    |
| ՇԱԲԱԹ      | 7 | 14 | 21 | 28 |    |
| ԿԻՐԱԿԻ     | 1 | 8  | 15 | 22 | 29 |

## ԱՈՒՅԹՆԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Հայերենը 5 հազար տարեկան է, բայց հայերեն առանձին բաներ հանդիպում են ավելի հնագույն լեզվաշերտերի մեջ: Եվ, այնուամենայնիվ, մեր հնաբուն լեզուն այսօր այնքան թարմ, հարուստ ու ճկուն է, որ նրանով կարելի է առանց մի մազի չափ պակասեցնելու արտահայտել ժամանակակից աշխարհի բոլոր գլխապտույտ վերելքները:

ժիրայր Տետյան  
(Ֆրանսահայ հայագետ)

Ե՛վ մեր ժամանակներում, և՛ գալիք հարյուրամյակներում ու հազարամյակներում ինչքան էլ մարդկային միտքը զարգանա, հոգևոր, գիտական ու տեխնիկական ինչպիսի առաջընթացներ էլ լինեն՝ հայերենն ընդունակ կլինի կատարելապես արտահայտելու ամեն բան: Միաժամանակ հայերենը նպաստում է համաշխարհային քաղաքակրթության առաջընթացին:

Ֆրեդերիկ Ֆելդի  
(Ֆրանսիացի հայագետ)


## ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ԱՍՏՈՂԱԴԻՏԱՐԱՆԸ

Հայերենը հիասքանչ, չծերացող ու չհնացող, անեզր հնարավորություններ ունեցող լեզու է:

Բյուրականի աստղադիտարանը հիմնադրվել է 1946 թվա-



կանին (պաշտոնական բացումը՝ 1956-ին), Երևանի աստղադիտարանի հիման վրա: Գտնվում է Արագած լեռան հարավային լանջին, Բյուրական գյուղի մոտ, ծովի մակերևույթից մոտ 1500 մետր բարձրության վրա: ԽԱՀՄ աստղագիտական խոշոր կենտրոններից է: Հիմնադրման օրից մինչև 1988 թվականը նրա անփոփոխ դիրեկտորն էր ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը: Գիտական հետազոտությունների հիմնական ուղղություններն են Գալակտիկայի և նրա բաղադրիչների (աստղակույտեր, աստղասփյուռներ, միջաստղային կլանող նյութ) կառուցվածքը, անկայուն աստղերի և միգամածությունների սպեկտրալուսաչափական, գունաչափական և բևեռաչափական հետազոտությունները, ռադիոաստղագիտությունը, աստղային կոսմոգոնիան, գերխիտ աստղային գոյաձևերի տեսությունը և ճառագայթման տեղափոխման տեսությունը: Դրանց համապատասխան Բյուրականի աստղադիտարանում ստեղծվել են բաժիններ (հետազայում խմբեր), իսկ մեծ աստղադիտակների, աստղագիտական դիտումների մշակման և մեթոդական հարցերի գծով առանձին լաբորատորիաներ: Նոր գործիքների և դրանց օժանդակ սարքերի ստեղծմամբ զբաղվում է Բյուրականի աստղա-



*Բյուրականի աստղադիտարանի 2,6 մ տրամագծով աստղադիտակի աշտարակը*

դիտարանի հատուկ կոնստրուկտորական տեխնոլոգիական բյուրոն: Հիմնական դիտողական գործիքներն են 2,6 մետր տրամագծով դասական աստղադիտակը (խոշորագույններից մեկը Եվրոպայում)՝ սպեկտրային և լուսաչափական լուսաընդունիչներով, 1 մետր տրամագծով մուտքի բացվածքով և նույն չափի օբյեկտիվային պրիզմաներ ունեցող Շմիդի դիտակը (խոշորագույնը ԽԱՀՄ-ում), 53 սանտիմետր տրամագծով Շմիդի դիտակը, 50 սանտիմետր և 40 սանտիմետր տրամագծերով դիտակները՝ էլեկտրալուսաչափական և բևեռաչափական սարքերով:

Բյուրականի աստղադիտարանում կատարված հետազոտությունների արդյունքներից են, մասնավորապես, աստղասփյուռների հայտնագործումը (1947), աստղերի էվոլյուցիոն վաղ փուլերի համար անկայունության

բազմազան դրսևորումների վերաբերյալ սկզբունքորեն նոր տեսակետը: Աստղերում և գալակտիկաներում անկայուն երեվոլյուցիաների ուսումնասիրման աշխատանքները կարևոր դեր են խաղացել գալակտիկաների կորիզների ակտիվության գաղափարի ձևավորման ու զարգացման գործում: Հայտնաբերվել են շուրջ 10 գերնոր, հարյուրավոր անկանոն փոփոխական աստղեր, 100-ից ավելի գիսավորաձև միգամածություններ ու Հերբիգ Արոյի օբյեկտներ, շուրջ 100 առաջումային աստղեր, մի քանի տասնյակ մոլորակաձև միգամածություններ և բաց աստղակույտեր, տարբեր բնույթի կապույտ օբյեկտներ և այլն:

Բյուրականի աստղադիտարանը որոշակի ներդրում ունի ԽՍՀՄ-ում արտամթնոլորտային աստղագիտության զարգացման գործում: Բյուրականի աստղադիտարանի մասնագետների անմիջական մասնակցությամբ են ստեղծվել «Օրիոն» և «Աստրոն» աստղագիտական համալիրները, ինչպես նաև աստղերի և գալակտիկաների հեռավոր ուլտրամանուշակագույն ճառագայթման ուսումնասիրմանը ծառայող «Գլազար» կայանը: Բյուրականի աստղադիտարանում աշխատանքներ են տարվել նաև աստղաֆիզիկայի հարակից գիտությունների գծով, որոնք հիմք են

դարձել նոր հիմնարկների (ՀԽՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ, Բյուրականի աստղադիտարանի հատուկ կոնստրուկտորական տեխնոլոգիական բյուրո, Ռադիոֆիզիկական չափումների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտ) ստեղծման համար: Աստղադիտարանը համագործակցում է խորհրդային և արտասահմանյան (ԱՄՆ, Անգլիա, Բուլղարիա, ԳՂՀ, Իտալիա, Հունգարիա, Մեքսիկա, Ֆրանսիա, Շվեյցարիա և այլն) աստղագիտական մի շարք հիմնարկների հետ:

Աստղագիտական դիտումներն առավել բարենպաստ պայմաններում կատարելու նպատակով նոր աստղադիտարանի համար տեղ է ընտրվել Եղեգնաձորի շրջանի Քարագուլս գյուղի մոտ (ծովի մակերևույթից մոտ 2800 մետր բարձրության վրա), որտեղ կտեղակայվեն մի շարք նոր աստղադիտակներ: 1967 թվականին Բյուրականի աստղադիտարանը պարգևատրվել է Լենինի շքանշանով, իսկ 1973-ին հաստատվել է որպես ԽՍՀՄ-ում արտագալակտիկական հետազոտությունների կոորդինացման կենտրոն:

1946 թվականից Բյուրականի աստղադիտարանում հրատարակվում է «Բյուրականի աստ-

ղաղիտարանի հաղորդումներ»  
հանդեսը:

*Ես ընկել եմ պագշոտ*

*Շամիրամի նետից,*

*Հին Հռոմն է զարկել ինձ*

*մահացու խոցով,*

*Իմ արյունն են ոթել, խառնել*

*Տղմուտ գետին,*

*Իմ լեզուն են այրել ատրուշանի*

*բոցով:*

*Խաչ են դաջել կրծքիս մի*

*բարբարոս զենքով,*

*Արաբական ձիու սմբակի տակ*

*գցել,*

*Ինձ խարուկ են հանել*

*մոնղոլների ձեռքով,*

*Սիրոս օսմանական սվիններին*

*գցել:*

*Ինձ հայրենի մեր տան թխկենուց*

*են կախել,*

*Եվ հոգիս են բանտել*

*շղթաներով երկաթ:*

*Ինձ զարկել են, խարկել ու*

*կենդանի թաղել...*

*Բայց ես դեռ կամ:*

*Հրաչյա Հովհաննիսյան*

## **ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ**

### **ՄՐՅԱՆԱԿՆԵՐ**

Հայ իրականության մեջ գրական մրցանակներն ունեն ընդամենը 100 տարվա պատմություն: Գրողներին խրախուսելու, նրանց նյութական ու բարոյական օգ-

նություն ցույց տալու նպատակով առաջին լուրջ քայլը կատարել է ղզլարեցի մեծահարուստ Հովսեփ Իզմիրյանը: 1874 թվականի ապրիլի 15-ին կտակագրով նա 20 հազար ռուբլի է հանձնում Կ. Պոլսի ազգային պատրիարքարանին, որը պիտի բաշխվեր հայերեն լավագույն գրական երկերի հեղինակներին: Ատեղծվում է «Հովսեփ Իզմիրյան գրական հանձնաժողով», որի մեջ մտնում էին պոլսահայ մշակույթի ականավոր դեմքերից շատերը: Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի անունով մրցանակը կոչվել է Սահակ-Մեսրոպյան: Այն ունեցել է նաև իր երկրորդ անունը՝ Իզմիրյան գրական մրցանակ:

Սահակ-Մեսրոպյան գրական մրցանակի գործադրությունը սկսվել է դեռևս Հովսեփ Իզմիրյանի կենդանության օրոք: 1879-ին այդ մրցանակին առաջինն արժանանում է Վահան Բաստամյանը, որը «Մխիթար Գոշի Դատաստանագիրք հայոց. իրավաբանական հետազոտությունք հանդերձ ծանոթությամբ» ձեռագիր երկի համար ստանում է 500 ռուբլի պարգև: Գիրքը տպագրվում է 1880-ին: Այնուհետև Սահակ-Մեսրոպյան գրական մրցանակին են արժանանում Նորայր Բյուզանդացու «Հայկական բառաքնությունք» (Կ. Պոլիս, 1880), Ալիշանի «Շի-

րակ» (Վենետիկ, 1881), Մանուել Միրախորյանի «Եկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս» (ձեռագիր), Հակոբ Ավվերդյանի «Ռւլնիա կամ Զեյթուն. լեռնային ավան ի Կիլիկիա» (Կ. Պոլիս, 1884), Իսահակ Հարությունյանի «Հայոց գիրը» (այս գիրքը շահում է 1888 թվականի համար նախատեսված ամբողջ գումարը՝ 600 ռուբլի), Գարեգին Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը» (Ալեքսանդրապոլ, 1895), Մակար Բարխուդարյանի «Աղվանից երկիր և դրացիք» (Թիֆլիս, 1893) և «Արցախ» (Բաքու, 1895), Լազար Գորոյանցի «Պարսկաստանի հայերը» (մրցանակ է ստացել 1901 թվականին, գիրքը տպագրվել է 1968-ին, Թեհրանում), Երվանդ Լալայանի «Գանձակի գավառը» ուսումնասիրությունը և այլն:

1883 թվականին Սարգիս եպիսկոպոս Հասան Զալալյանը գրական գործերի հրատարակության նպատակով թողնում է 100 հազար ռուբլի, որը 1907-ին արդեն հասել էր 150.550 ռուբլու: Հասան Զալալյանի կտակի համաձայն, այդ գումարի գործածությունը պիտի սկսել միայն 2008 թվականին, երբ այն հասած կլինի 12 միլիոն ռուբլու: Լման կարգի մի կտակ էլ թողել է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը» աշխարհա-

բարի վերածող Խորեն Ստեփանեն: Լա կտակել է 25 հազար ռուբլի՝ պայմանով, որ այն անձեռնմխելի պիտի մնա 130 տարի:

1888-ին պետական խորհրդական Դանիել Քանանյանը Մոսկվայի Լազարյան ձեմարանին է հանձնում մի գումար, որի տոկոսներով պիտի պարգևատրվեին գրական և գիտական լավագույն երկերի հեղինակները: 1894-ին Դանիել Քանանյանի մրցանակին է արժանանում և 440 ռուբլի ստանում Հարություն Դաղբաշյանը իր «Հայ Բագրատունիների պատմություն» երկի համար: 1905-ին այդ մրցանակին է արժանանում Հրաչյա Աճառյանը «Հայոց այբուբենը և Ս. Մեսրոպ» գործի համար: Լազարյան ձեմարանի Քանանյան մրցանակին է արժանացել նաև Երվանդ Լալայանի կազմած հայերեն վիմագիր արձանագրությունների ժողովածուն:

Ուշագրավ պատմություն ունի «Աբովյան-Լազարյան» գրական ֆոնդը: 1892 թվականին բանաստեղծ Սմբատ Շահագիզի գրական հորելյանը նշելու ժամանակ Մոսկվայի հայ հասարակությունը հանգանակություն է կատարում և հավաքում 7 հազար ռուբլի: Լվիրատուների նպատակն էր մի դրամագլուխ ստեղծել աղքատ հայ գրողներին օգնելու համար: Սմբատ Շահագիզը փորձում է Մոսկվայում մի առանձին

ընկերությունն ստեղծել և հավաքված գումարը հանձնել նրա տնօրինությանը: Սակայն կառավարությունը չի ընդառաջում գրողին: 1896 թվականի դեկտեմբերի 11-ին Կովկասի Հայոց բարեգործական ընկերությունը դիմում է Շահագիզին և առաջարկում, որ այդ գումարը հանձնելի բարեգործական ընկերությանը նույն նպատակով օգտագործելու պայմանով: Շահագիզը, որ սկզբունքորեն դեմ չէր այդ առաջարկին, նրա գործադրությունը հետաձգում է մի տարով հուսալով, որ այդ ժամանակամիջոցում Մոսկվայում կստեղծվի գումարը տնօրինող գրական մի ընկերություն: Սակայն ոչինչ չի ստացվում, և Շահագիզը 1898-ի փետրվարի 10-ին իր համաձայնությունն է տալիս Կովկասի Հայոց բարեգործական ընկերությանը և իր մոտ եղած գումարին, որ տոկոսներով հասել էր 7949 ռուբլու, ավելացնում է 51 ռուբլի ու կլորացրած 8 հազար ռուբլու դրամագույնը ուղարկում Թիֆլիս: Մի քանի ամիս հետո Շահագիզը նորից է մտնում և հաշվի առնելով, որ 1897-ին այդ դրամագույնը իզուր պահել է իր տանը, որոշում է նրա մի տարվա տոկոսը, որ կազմում էր 350 ռուբլի, և ուղարկել Թիֆլիս:

Բարեգործական ընկերությունը ի պատիվ հոբելյարի որո-

շում է ֆոնդը կոչել Ամբատ Շահագիզի անունով: Սակայն բանաստեղծը հրաժարվում է այդ պատվից և խնդրում, որ այն անվանվի «Աբովյան-Նազարյան» գրական ֆոնդ: Ա. Շահագիզի ցանկությունը կատարվում է: 1899-ից էլ հայ գրողներն սկսում են օգտվել այդ ֆոնդից: Այդ մըրցանակի համար նախատեսված դրամագույնը հաստատուն պահելու համար արվում են նոր նվիրատվություններ: Հետագայում Ամբատ Շահագիզի մահից (1907) հետո, նրա կտակի համաձայն, բանաստեղծի զավակները «Աբովյան-Նազարյան» ֆոնդին են հանձնում ևս 10 հազար ռուբլի:

Իր ունեցած կարողությունների մեծ մասը գրական մըրցանակների է հատկացրել նաև հայագետ Սկրտիչ Էմինը: Նրա կտակած միջոցներով է տպագրվել «Էմինյան ազգագրական ժողովածուն» (9 հատոր): Էմինը որոշակի մի գումար է կտակել Վենետիկի Մխիթարյան միաբանությանը՝ գրական զանազան գործեր տպագրելու նպատակով: Սակայն Էմինի կտակի մեջ ամենահուզիչն ու ինքնատիպը եկետն է, ըստ որի, Էմինը 200 ռուբլի է հատկացնում Թիֆլիսում ապրող Հովհ. Ախվերդյանին, որը պետք է այդ գումարով Գ. Ախվերդյանի գերեզմանը զարդարեր ծաղիկներով:



1894 թվականի փետրվարի 17-ին Տազանրոզի նահանգական դատարանը հաստատում է հասարակական գործիչ Գևորգ Տիգրանյանցի կտակը, որի համաձայն սահմանվում է երկու գրական մրցանակ՝ յուրաքանչյուրին երկուհազարական ռուբլի, առաջինը հայերենի արմատական բառարան, երկրորդը՝ հայոց լեզվի հոմանիշների բառարան ստեղծողին: Սակայն հաշվի առնելով, որ այդպիսի բառարանների ստեղծումը երկար տարիներ է պահանջում, կտակի գործադրությունը հետաձգվում է:

1897-ին Կ. Պոլսի գրավաճառներից մեկը՝ Աշճյանը, իր համեստ խնայողություններից մի գումար է հատկացնում այն հողվածագրի համար, որը լավագույն գրական հողվածով հանդես կգա «Բյուզանդիոնի» կամ ուրիշ պարբերականի էջերում: Աշճյան գրական մրցանակը ժամանակի պոլսահայ կյանքի նշանակալից իրադարձություններից էր:

1901 թվականին գրական մրցանակ է հիմնադրել շուշեցի մեծահարուստ Ավետիս Ղուկասյանը (1837 — 1902): Իր կտակում նա գրել է. «Սիրահար լինելով հայ գրականության և նորա բարգավաճումը իմ սըրտին մոտ համարելով ես իմ կտակի մեջ նշանակել եմ տասն հազար ռուբլի իբրև անձեռնմխելի գումար, որի տոկոսները

յուրաքանչյուր տարի պիտի հատկացվի հայերեն լավագույն երկասիրությանց իբրև մրցանակ: Կտակս պիտի կատարվի իմ մահից հետո և այդ որոշման իրագործումը ես հանձնել եմ հարգելի վարչության տնօրինությանը: 1901 թվականի հունիսի 2, Թիֆլիս»: Հետագայում այն կոչվում է Ղուկասյան մրցանակ, որը տրվում էր ամեն տարվա ապրիլի 7-ին: Ղուկասյան մրցանակի գումարներով են լույս տեսել Ղազար Փարպեցու, Կիրակոս Գանձակեցու երկերը և ուրիշ գործեր: Ղուկասյան մրցանակի է արժանացել երվանդ Լալայանի «Նոր Բայազետի գավառ» աշխատությունը:

20-րդ դարի սկզբին հայ թատերական կյանքն աշխուժացնող ազդակ եղավ Մակարյան մրցանակը: Մեծահարուստ տիկին Մակարյանը մի մեծ գումար է տրամադրում Թիֆլիսի դրամատիկական ընկերությանը, որը հատկացվում էր լավագույն պիեսներին: Մակարյան մրցանակի հանձնաժողովի մեջ մըտնում էին հայազետ Ստ. Լիսիցյանը, ռեժիսոր Ստ. Քափանակյանը և ուրիշներ: Այդ մրցանակին են արժանացել Նար-Դոսի «Սպանված աղավնի» և Միքայել Մանվելյանի «Հրաբուխ» պիեսները:

Հայաստանում խորհրդային

իշխանության առաջին տարիներին գրական մրցանակների համար շարունակել են գումարներ տրամադրել մասնավոր անձինք: Արևմտահայ գրող Տիգրան Կամսարականը, ողջունելով Հայաստանում խորհրդային իշխանության հաղթանակը, ձգտում է իր մասնակցությունը բերել երկրում ծավալված սոցիալիստական շինարարությանը: 1924 թվականի հոկտեմբերի 25-ին Կամսարականը պայմանագիր է կնքում Խորհրդային Հայաստանի կառավարության հետ և նրա տնօրինությանը հանձնում երկու հազար անգլիական ոսկի: Դրանով ՀԽՍՀ լուսժողովատը ամեն տարի մրցանակաբաշխություն է հայտարարել և գրական երկերի համար միջոցներ տրամադրել հայ հեղինակներին: Տիգրան Կամսարականի մրցանակի հանձնաժողովի մեջ մտնում էին Մամիկոն Գևորգյանը, Յուլյակ Խանզադյանը, Աշոտ Հովհաննիսյանը, Սիմեոն Հակոբյանը, Հայկ Գյուլիքչյանը: 1925-ին ներկայացված 8 գործերից ոչ մեկին մրցանակ չի տրվել: Մրցանակ չի տրվել նաև 1928-ին ներկայացված 12 գործերից որևէ մեկին: Հետագայում այդ մրցանակին արժանացել են Դերենիկ Դեմիրճյանը՝ «Ծանոթներ» պատմվածքի համար, Ստեփան Ջորյանը՝ «Գրադարանի աղջիկը» վիպակի համար, Արաքսը՝ «Նար-

գո» և «Ավանը» պատմվածքների համար, Ակսել Բակունցը՝ «Իվան Բեյ» և «Օրանժիա» պատմվածքների, Վահրամ Ազգանը՝ «Դասալիքը» վիպակի և Վաղարշակ Լորենցը՝ «Բանաստեղծություններ» ժողովածուի համար:

1935 թվականի օգոստոսի 1-ին ՀԽՍՀ ժողովմխորիը հայտարարում է «լավագույն արձակ և չափածո նոր երկերի Խորհրդային Հայաստանի 15-րդ տարեդարձի անվան մրցանակաբաշխություն»: Նույն թվականի դեկտեմբերին երկրորդ կարգի մրցանակի են արժանանում Դերենիկ Դեմիրճյանի «Ընկերներ» պատմվածքը, Հովհաննես Շիրազի «Արևի երկիրը», Հռիփսիմե Պողոսյանի «Մայրական» պոեմները: Երրորդ կարգի մրցանակի են արժանանում արձակից Ս. Տեր-Գրիգորյանի «Հիսնամյա կռիվը» վեպը և Լյուսի Թարգյուլի «Հսկաների շարքում» վեպը:

1938-ին ՀԽՍՀ ժողովմխորիին կից արվեստի գործերի վարչության հայտարարած լավագույն պիեսների մրցանակաբաշխության ժամանակ երկրորդ կարգի մրցանակի են արժանանում Արմեն Գուլակյանի «Անմոռանալին» («Սուրեն Ապանդարյան») և Դերենիկ Դեմիրճյանի «Երկիր հայրենի» պիեսները (յուրաքանչյուրին՝ 7000-ական ռուբլի): Երրորդ կարգի մրցանակ

են ստանում եղիշե Պետրոսյանը՝ «Ամբատ Զարեհավանցին», Մուշեղ Ղազարյանը՝ «Ռուշան», Վասակ Խուդավերդյանն ու Զավեն Հացագործյանը՝ «Թող բացվեն վարդերը» և Գուրգեն Սարյանը՝ «Իժը» պիեսների համար (յուրաքանչյուրին՝ 5000-ական ռուբլի):

1940-ին ՀԼԿԵՄ Կենտկոմը, ՀԽՍՀ լուսժողովուրդը հայտարարում են մանկապատանեկան լավագույն երկերի մրցանակաբաշխություն: Երկրորդ կարգի մրցանակի է արժանանում Աշոտ Շայբուսի «Գիշերային ծիածան» վեպը: Երրորդ կարգի մրցանակ է ստանում Մկրտիչ Խերանյանը իր «Հազարան բլբուլ» պոեմի համար:

Հետպատերազմյան տարիներին, գրական կյանքի աշխուժացման հետ, Խորհրդային Հայաստանում սահմանվեցին մի շարք գրական մրցանակներ: Տարվա լավագույն ստեղծագործության, առանձին երկերի, լավագույն պիեսների ու պոեմների, բարձրորակ թարգմանությունների համար մրցանակներ սահմանեցին Հայաստանի գրողների միությունը, ՀԼԿԵՄ Կենտկոմը, Հայհրատպետկոմը և ուրիշ կազմակերպություններ:

Հայաստանում գրական բարձրագույն արժեքավորումը Հայկական ԽՍՀ պետական մրցանակն է, որը տրվում է 1965

թվականից: Այդ մրցանակին արժանացել են բազմաթիվ գրողներ ու գրականագետներ, որոնց թվում Հրաչյա Քոչարը, Հովհաննես Շիրազը, Պարույր Սևակը, Վախթանգ Անանյանը, Խաժակ Գյուլնազարյանը, Ռուբեն Զարյանը, Հրանտ Թամրազյանը, Արամ Ռնճիկյանը, Սերո Խանգադյանը, Լևոն Հախվերդյանը, Ժորա Հարությունյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Հրանտ Մաթևոսյանը, Էդվարդ Զրբաշյանը, Անահիտ Սահինյանը, Համո Սահյանը, Գեղամ Սարյանը, Խաչիկ Դաշտենցը, Սիլվա Կապուտիկյանը, Վահագն Դավթյանը:

1980 թվականին ՀԿԿ Կենտկոմը և ՀԽՍՀ Մինիստրների խորհուրդը սահմանեցին Հայաստանի գրողների միության ամենամյա մրցանակներ, որոնք կրում են հայ դասական և ժամանակակից գրականության մեծ երախտավորների անունները: Ժողովուրդների բարեկամությունը մարմնավորող՝ բոլոր ժանրերի բարձրարժեք ստեղծագործությունների համար սահմանվել է Հովհաննես Թումանյանի անվան հատուկ մրցանակ: Սահմանվել են նաև բանաստեղծական ստեղծագործությունների համար Ավետիք Իսահակյանի անվան, արձակի համար՝ Դերենիկ Դեմիրճյանի անվան, դրամատիկական երկերի համար՝ Գաբրիել Սունդուկյանի անվան, հրա-



պարակախոսական գործերի համար՝ Միքայել Նալբանդյանի անվան, թարգմանության համար՝ Ստեփան Ջորյանի անվան մրցանակներ: Հետագայում հաշվի առնելով, որ թարգմանության համար փաստորեն երկու մրցանակներ են ստեղծվել (եղիշե Չարենցի անվան և Ստեփան Ջորյանի անվան), որոշվեց, որ 1983 թվականից սկսած Ստեփան Ջորյանի անվան մրցանակը շնորհվելու է մանուկներին և պատանիներին հասցեագրվող ստեղծագործություններին (արձակ, պոեզիա, դրամատուրգիա, գեղարվեստական հրապարակախոսություն):

Խորհրդային Հայաստանում թարգմանության համար բարձրագույն արժեքավորումը եղիշե Չարենցի անվան մրցանակն է, որին արժանացել են Վահագն Դավթյանը, Գևորգ Էմինը, Միխայիլ Դուդինը, Էդուարդաս Մեծելայտիսը, Մարիա Պետրովիխը, Հարոլդ Ռեգիստանը, Սերգեյ Շերվինսկին, Էրժեբեթ Կատոնան և ուրիշներ:

Սփյուռքահայ առաջադեմ գրողներին պարգևատրելու համար 1980-ին Հայաստանի գրողների միությունը և ժուռնալիստների միությունը սահմանել են Խաչատուր Աբովյանի անվան մրցանակ գրական և հրապարակախոսական երկերի համար: 1981-ին այդ մրցանակին արժա-

նացել է Գառնիկ Ադդարյանը (Լիբանան), 1987-ին՝ Լյուդվիգ Թաբակյանը (ԱՄՆ):

Գրական մրցանակներ կան նաև սփյուռքում: Առավել նշանավոր են Թեքեյան մշակութային միության և Հայկաշեն-Ուզունյան մրցանակները: Վերջին տարիներին Թեքեյան մշակութային միության մրցանակի են արժանացել Վահագն Դավթյանը, Լևոն Միրիջանյանը, Մելիք Քոչարյանը, Բենիկ Սեյրանյանը, սփյուռքահայ գրողներից՝ Գառնիկ Ադդարյանը, Սմբատ Փանոսյանը և ուրիշներ:

### ՓՈՔԻ ԱՇՈՒ

*Թեպետ մենք փոքր ածու ենք  
և շատ սահմանափակ թվով  
և շատ անգամ օտար թագավորության  
տակ նվաճված, բայց և  
այնպես մեր աշխարհում էլ քաջության  
շատ գործեր կան գործված,  
գրելու և հիշատակելու  
արժանի:*

*Սովետս Խորենացի*

### ԱՍՈՒՅՔՆԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Իր պատմական ճանապարհին հաջ ժողովուրդը շատ բան է կորցրել, շատ բան էլ պահպանել է: Պահածների մեջ ամենաթանկարժեքը, անփոխարինելին ու անզուգականը մայրենի լեզուն է: Հայերենն իր մեջ պահպանում է նաև մեր կոռուստ-

ները (օրինակ, հայկական հազարավոր քաղցրանուն տեղանուններ): Միաժամանակ հայերենն այսօր դասական մակարդակի հասած մեծազոր լեզու է:

Ավետիս Սանջյան  
(ամերիկահայ հայագետ)

Հայերենը որպես խոսակցական լեզու, որպես հաղորդակցման միջոց կատարյալ է եղել ի սկզբանե: Իբրև գրական լեզու նա մրցել է հունարենի ու լատիներենի հետ: Հայերենով ստեղծվել են թարգմանական, իմաստասիրական, ճարտասանական, պատմական, քերականական երկեր, որոնք դասվում են գրավոր հնագույն խոսքի համաշխարհային հուշարձանների շարքը: Հայերենը պահպանել է հնդեվրոպական լեզվի նախնական բառապաշարի շատ շերտեր, ինչպես և ավելի վաղնջական լեզուների հիմնահետքեր: Օրինակ, հին իրաներենից անհետացած շատ բառեր պահպանվել են միայն հայերենում:

Զանկարյո Բոլոնեզի  
(իտալացի հայագետ)

## ՀԱՅՐ

Արդյոք մի բան հասկանում եք հայից: Որքան տարօրինակ, հանելուկային արարած: Որքան խաբուսիկ: Երևույթը, ոչ ինքը, բայց ինչ է ինքը, իր նկարագիրը:

Զուր աշխատանք, որոնում ես իր ինքնությունը և իսկույն տեսնում ես, որ դա էլ նորից երևույթ է: Անհանգիստ դեմք ունի, չի թողնում՝ նկարես: Իր ցեղային պատկերն էլ տարօրինակ է: Թվով ամենափոքրն է, տառապանքով՝ ամենամեծը, ժամանակով ամենահինն է, վիճակով՝ ամենից անփոփոխը: Ամենից աննպաստը իր երկրի դիրքն է, ինքը ամենից համառ կառչեց նրան: Որքան անհույս է թվում իր ապագան, բայց որքան հուսացող է նա: Ասենք իր կյանքում երկու բան բնավ չտեսավ, մեկ՝ բախտ, մեկ էլ հուսահատություն: Ինչպես ճանաչես նրան, ինչպես չափես: Իր չափը չափազանց է. զարմանալի հավասարակշռություն, որ ծայրահեղության մեջ է: Ապա նայիր՝ սա է հայը. այս չարչին, այս բուրժուան, արարածներից ամենագծուծը և անասուններից ամենակուշտը: Կարո՞ղ է սա չափել աշխարհիս բարձր բաները իր գրվածքով և արշինով: Հանրագուտ գործի և ոչ մեկ գորշ: Բայց մի օր էլ տեսար՝ մեռավ ու ողջ կարողությունը կտակեց հասարակության: Դե, զնա իմացիր՝ ինչ մարդ էր:

Տեսել եք նրա բնակարանը, խլուրդի ծակուռ: Բայց անցիր նրա երկիրը, — ինչ հիասքանչ վանքեր, հոյակապ աշտարակներ, գողտրիկ խաչքարեր: Հավատալ

կարելի է, թե ինքն է շինել այդ բոլորը:

Խոսակցությունն ես լսում՝ հայիոյանքների կեսը եկեղեցի ու աստված է: Լցրել է իր երկիրը եկեղեցիներով, բայց տարին մի անգամ չի մտնում մեջը աղոթելու: Աղոթք էլ չի անում առօրյա կյանքում, իր կրոնը երբեք չի քարոզել ուրիշներին: Եվ հավատալի բան է, որ իր պատմությունը ամենամեծ կրոնական պատերազմների պատմությունն է, և այս չաղոթող ցեղի Նարեկացու շուրթերից թռավ աղոթքի ամենաբարձր թռիչքն առ Աստված...

Դերենիկ Դեմիրճյան

### ՀԱՅԿԱԿԱՆ ԽՐԱՏԱՆԻ

Մարդկային էությունը բարիքների ձգտող է և ոչ թե չարիքների:

Եզնիկ Կողբացի

Զարմանքը փիլիսոփայության սկիզբն է:

Դավիթ Անհաղթ

Աշխարհս թեկուզ քոնն ըլի, ինչ պիտի տանիս:

Սայաթ-Նովա

Մարդիկ հավասար կժնանին, անհավասար կապրին և հավասար կմեռնեն:

Նորմյան Հայրիկ

Տաղանդներն ապրում են մի որոշ ժամանակաշրջանում, իսկ հանճարները՝ բոլոր ժամանակներում:

Հովհաննես Թումանյան

Կանայք ատելության մեջ ավելի հաստատամիտ են, քան թե սիրո մեջ:

Հակոբ Պարոնյան

Արքաներն իրենց խոսքը ետ չեն վերցնում:

Ստեփան Զորյան

Ուսուցիչը վճռական դեր ունի աշակերտին դեպի այս ու այն բնագավառը կողմնորոշելու գործում: Եվ հաճախ հենց նրա վառած կայծը կարող է ջահ դառնալ ու լուսավորել աշակերտի ամբողջ կյանքի ուղին:

Մխիթար Զրբաշյան

(մաթեմատիկոս, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս)

Շախմատը ըստ ձևի խաղ է, ըստ բովանդակության՝ արվեստ, իսկ խաղին տիրապետելու առումով՝ գիտություն:

Տիգրան Պետրոսյան

Ես հայ եմ, հին, ինչպես լեռան այս բիրլիական, Թաց են ոտքերս դեռ ջրհեղեղի ջրից,



Իմ սուրբ հողն է տեսել Նոյն  
առաջին անգամ,  
Բաբելոնյան Բելը խորտակվել  
իմ սրից:

Իմ մատների հետքն է կրում կողի  
վրա,  
Քարն առաջին մամռոտ, որ իմ  
ձեռքով տաշված,  
Եվ միացած հողին շաղախով  
իմ արյան,  
Արարատյան դաշտում մեհյանի  
վեմ դարձավ:

Իմ նահատակ որդոց արյունով է  
ոռոգ

Ամեն ծաղիկ ու ծառ հողում  
հայրենական,  
Ամեն բլուր՝ քաջի մի շիրիմ է  
նորոգ,

Եվ կոթողի բեկոր՝ ամեն  
սանդուղք ու քար:

Ես հայ եմ, հին, ինչպես լեռն  
այս Արարատյան,

Հազար սուր է բախվել իմ  
վահանին ահեղ,

Բայց փշրել եմ նրանց ես  
ցասումով արդար

Եվ լեռներիս նման գլուխս վեր  
պահել:

Գևորգ Էմին



# ՕԳՈՍՏՈՍ

|            |   |    |    |    |
|------------|---|----|----|----|
| ԵՐԿՈՒՇԱԲԹԻ | 6 | 13 | 20 | 27 |
| ԵՐԵՔՇԱԲԹԻ  | 7 | 14 | 21 | 28 |
| ՉՈՐԵՔՇԱԲԹԻ | 1 | 8  | 15 | 22 |
| ՀԻՆԳՇԱԲԹԻ  | 2 | 9  | 16 | 23 |
| ՈՒՐԲԱԹ     | 3 | 10 | 17 | 24 |
| ՇԱԲԱԹ      | 4 | 11 | 18 | 25 |
| ԿԻՐԱԿԻ     | 5 | 12 | 19 | 26 |

## ԻՆՉ ՏՊԱՔԱՆԱԿՈՎ ԵՆ ԼՈՒՅՍ ՏԵՍՆՈՒՄ ԳՐՔԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՏԱՆՈՒՄ

Հայերեն առաջին տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրքը», լույս է տեսել 1512 թվականին, Վենետիկում: Անցած 478 տարում աշխարհի այլևայլ կողմերում լույս է տեսել ավելի քան 100 հազար անուն հայերեն գիրք: 1512 թվականից մինչև 1800 թվականը լույս է տեսել հազարից ավելի գիրք: Այդ գրքերը կոչվում են հնատիպ: 1801 թվականից մինչև 1920 թվականը լույս է տեսել 19 հազար անուն հայերեն գիրք: 1921 — 89 թվականներին Խորհրդային Հայաստանում տպագրվել է 55 հազար անուն հայերեն գիրք մի քանի

հարյուր միլիոն տպաքանակով: Այդ նույն ժամանակաշրջանում, այսինքն՝ 1921 — 89-ին, սփյուռքում լույս է տեսել 25 հազար անուն հայերեն գիրք: Այսպիսով, մինչև այժմ լույս տեսած հայերեն բոլոր գրքերի թիվը անցնում է 100 հազար անուն գրքից, որի կեսից ավելին և տպաքանակի 80 տոկոսը տպագրվել է Խորհրդային Հայաստանում:

Մենք ստույգ չգիտենք, թե ինչ տպաքանակ է ունեցել հայերեն առաջին տպագիր գիրքը՝ «Ուրբաթագիրքը»: Հավանաբար այն լույս է տեսել մի քանի հարյուր օրինակով: Մինչև 1920 թվա-



կանը լույս տեսած հայերեն գրքերը մեծ տպաքանակներ չեն ունեցել: Այդ թիվը Վենետիկում ու Վիեննայում տատանվել է 300-ից 2000-ի միջև: Համարյա նույնն էր նաև նախահեղափոխական շրջանի հայ տպագրության մյուս կենտրոններում՝ Կոստանդնուպոլսում, Քիֆլիսում, Երևանում, Բաքվում, Մոսկվայում: Սփյուռքում էլ հայերեն գրքի միջին տպաքանակը չի անցնում 500-ից: Նախահեղափոխական շրջանում բացառիկ դեպքեր են եղել, երբ որևէ հայերեն գիրք տպագրվում էր 5 հազար կամ ավելի տպաքանակով: Ցուցադրական է Րաֆֆու երկերի տպաքանակը նախահեղափոխական շրջանում և խորհրդային իշխանության տարիներին: Նրա կենդանության օրոք լույս են տեսել.

«Փունջ» գրքի առաջին հատորը լույս է տեսել 1874 թվականին, 1500 տպաքանակով:

«Փունջ գրքի Բ հատորը՝ նույն տարում, 1500 տպաքանակով:

«Խենթը» վեպը՝ 1880-ին, 1200 տպաքանակով:

«Դավիթ Բեկ» գրքի առաջին հատորը՝ 1881-ին, 1200 տպաքանակով:

«Դավիթ Բեկ» գրքի Բ հատորը՝ 1882-ին, 1200 տպաքանակով:

«Խամսայի մեղիքությունները» գիրքը՝ 1882-ին, 1200 տպա-

քանակով:

«Ոսկի աքաղաղ» գիրքը՝ 1882-ին, 1200 տպաքանակով:

«Ղարաբաղի աստղագետը» գիրքը՝ 1882-ին, 1200 տպաքանակով:

«Կայծեր» գրքի առաջին հատորը՝ 1883-ին, 1200 տպաքանակով:

«Խաչագողի հիշատակարանը» գրքի Ա և Բ մասերը մեկ գրքով՝ 1883-ին, 1200 տպաքանակով:

«Խաչագողի հիշատակարանը» գրքի Գ և Դ մասերը մեկ գրքով՝ 1883-ին, 1200 տպաքանակով:

«Ջալալեդդին» գիրքը՝ 1884-ին, 2000 տպաքանակով:

«Կայենի կտակը» գիրքը՝ 1884-ին, 1200 տպաքանակով:

«Պսակ» ժողովածուն՝ 1884-ին, 1200 տպաքանակով:

«Կայծեր» գրքի Բ հատորը՝ 1887-ին, 1200 տպաքանակով:

«Սամվել» վեպի Ա, Բ և Գ հատորները՝ 1888-ին, 1800 տպաքանակով:

Այսպիսով, Րաֆֆին իր կենդանության օրոք հրատարակել է 11 անուն գիրք՝ 16 հատորով և 21 հազար 200 տպաքանակով: Այդ գրքերից երկուսը թարգմանություններ են, ինը՝ ինքնուրույն գործեր: 14 տարվա ընթացքում Րաֆֆու գործերից միջին հաշվով տարեկան լույս է տեսել 1500 գիրք: Բայց չկարծեք, թե լույս տեսած գրքերն անմիջապես ըսպառվում էին: Միջին հաշվով

Բաֆֆու գրքերից սպառվում էին տարեկան 120—200 օրինակ: 1903 թվականին «Դավիթ Բեկ» վեպը լույս է տեսել 2400 օրինակ, որը սպառվել է 12 տարում: «Սամվել» վեպը տպագրվելուց հետո սպառվել է 10 տարում:

Խորհրդային իշխանության տարիներին Հայաստանում Բաֆֆու երկերը լույս են տեսել 65 անգամ 2 միլիոն 326 հազար տպաքանակով:

Խորհրդային Հայաստանում տպագրված 55 հազար անուն հայերեն գիրքը վիթխարի հարըստություն է: Հայաստանում մեծ տպաքանակներով մի քանի անգամ տպագրվել են մարքսիզմ-լենինիզմի կլասիկների գործերը: Մեծ բաժին է կազմում հայ ինքնուրույն և թարգմանական գրականությունը: Անցած տարիներին մի քանի անգամ լույս են տեսել Կորյունի, Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի, Եղիշեի, Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Մովսես Կաղանկատվացու, Սեբեոսի, Ղևոնդ Պատմագրի, Մեսրոպ Մաշտոցի, Եզնիկ Կողբացու, Դավիթ Անհաղթի, Անանիա Շիրակացու, Թովմա Արծրունու, Արիստակես Լաստիվերցու, Մաթթեոս Ուռհայեցու, Կիրակոս Գանձակեցու, Ստեփանոս Օրբելյանի և ուրիշ պատմիչների, պատմագիրների ու գիտնականների երկերը: Տասնյակ և հարյուր հազար տպաքանակներով լույս են

տեսել Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Սայաթ-Նովայի, Խաչատուր Աբովյանի, Միքայել Նալբանդյանի, Պերճ Պոռոշյանի, Մուրացանի, Ղազարոս Աղայանի, Հովհաննես Հովհաննիսյանի, Ռաֆայել Պատկանյանի, Հակոբ Պարոնյանի, Մկրտիչ Պեշիկթաշյանի, Պետրոս Դուրյանի, Ծերենցի, Միսաք Մեծարենցի, Սիմանթոսի, Դանիել Վարուժանի, Երվանդ Օտյանի, Տիգրան Չյուկուրյանի երկերը: Երեք տարի առաջ ավարտվեց մեծանուն հայագետ ու գրականագետ Մանուկ Աբեղյանի երկերի 8 հատորյակի ակադեմիական հրատարակությունը: Աբեղյանական մեծադիր հատորներից յուրաքանչյուրը լույս է տեսել 7 հազար տպաքանակով: Վախթանգ Անանյանի հրատարակած երկերի ընդհանուր տպաքանակը անցնում է կես միլիոնից: Ատրպետի «Տըծվըծիկը» լույս է տեսել մի քանի անգամ, համարյա 100 հազար տպաքանակով: ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը լույս է ընծայել Ակսել Բակունցի երկերի չորսհատորյակը՝ յուրաքանչյուրը 20 հազար տպաքանակով: Վաղամեռիկ գրող, տաղանդավոր արձակագիր Մուշեղ Գալշոյանի միայն «Մարութա սարի ամպերը» գիրքը 1980 թվականին լույս է տեսել 25 հազար տպաքանակով: Խաչիկ Դաշտենցի «Ռանչպար-

ների կանչը» վիպասը երկրորդ անգամ լույս տեսավ 1984 թվականին՝ 50 հազար տպաքանակով: Ավարտին է մոտենում Դերենիկ Դեմիրճյանի երկերի ժողովածուի 14 հատորյակի հրատարակությունը (յուրաքանչյուր հատորը լույս է տեսնում 25 հազար տպաքանակով):

Ստեփան Զորյանի միայն ինքնուրույն երկերը լույս են տեսել 1 միլիոն տպաքանակով, որից «Հայոց բերդը» վեպը 1959 թվականին լույս է տեսել 40 հազար տպաքանակով, «Վարազդատ» վեպը 1969-ին՝ 30 հազար տպաքանակով, «Ճանապարհորդ «Ջելկոն» պատմվածքը 1978-ին՝ 100 հազար տպաքանակով: Ավարտվում է Զորյանի երկերի 12 հատորյակի տպագրությունը (յուրաքանչյուր հատորը լույս է տեսնում 20 հազար տպաքանակով): Մեկ միլիոնից անցնում են Ստեփան Զորյանի թարգմանությամբ լույս տեսած հայերեն գրքերը: Նրա թարգմանած՝ Հենրիկ Սենկևիչի «Երաժիշտ Յանկոն» գիրքը լույս է տեսել 50 հազար, Լև Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» քառահատոր վեպը՝ 50 հազար օրինակով:

Մեծ տպաքանակներով են լույս տեսնում Գևորգ Էմրնի գրքերը: Միայն «Սասունցիների պարը» պատկերազարդ գիրքը լույս է տեսել 50 հազար տպաքանակով:

Խորհրդային Հայաստանում ամենից շատ տպագրվող հայ հեղինակը Հովհաննես Թումանյանն է: Անցած 70 տարում Թումանյանի գրքերը լույս են տեսել մի քանի միլիոն տպաքանակով: Սկսվել է նրա երկերի ակադեմիական 10 հատորյա հրատարակությունը: Հսկայական տպաքանակներով են լույս տեսնում Ավետիք Իսահայանի գրքերը: Նրա երկերի ժողովածուի 6 հատորյակը լույս է տեսել 60 հազար տպաքանակով, իսկ «Լույս» հրատարակչությունը նրա «Երկերը» 1980-ին հրատարակել է 50 հազար տպաքանակով:

Անվանի գրող, սոցիալիստական աշխատանքի հերոս Սերո Խանզադյանի գրքերը լույս են տեսել գրեթե 50 անգամ: Խանզադյանի գրքերի ընդհանուր տպաքանակը հասնում է մեկ միլիոնի: Մեկ միլիոնի է մոտենում նաև ճանաչված մանկագիր Խնկո Ապոր երկերի տպաքանակը: Միայն «Մկների ժողովը» գրքույկը 1983 թվականին լույս է տեսել 100 հազար տպաքանակով:

Մեծ տպաքանակներով են լույս տեսնում Սիլվա Կապուտիկյանի չափածո ու արձակ երկերի ժողովածուները:

Վերջին 20 տարում Հովհաննես Շիրազի երկերը լույս են տեսել տասնյակ հազարավոր տպաքանակներով: Ահավասիկ, «Քնար Հայաստանի» ժողովածուի եր-

որոր գիրքը 1974-ին լույս է տեսել 50 հազար տպաքանակով, «Յոթնապատում» գիրքը՝ 1977-ին՝ 50 հազար տպաքանակով, «Առակս զինչ ցուցանե» գիրքը 1978-ին՝ 50 հազար տպաքանակով, «Սիամանթո և Խշեզարե» գիրքը 1979-ին՝ 50 հազար տպաքանակով, «Հուշարձան մայրիկիս» գիրքը 1980-ին՝ 60 հազար տպաքանակով:

Մեկ միլիոնի է մոտենում Շիրվանզադեի երկերի ընդհանուր տպաքանակը: Միայն «Քաոս» վեպը 1975-ին լույս է տեսել 50 հազար տպաքանակով:

Վիթխարի տպաքանակներ ունեն եղիշե Չարենցի գրքերը: «Հայ դասականների գրադարան» մատենաշարով լույս տեսած նրա երկերի տպաքանակը 51 հազար է: 1985 թվականին «Լույս» հրատարակչությունը լույս ընծայեց Չարենցի «երկերը» 50 հազար տպաքանակով:

Վերջին տարիներին Պարույր Սևակի բոլոր գրքերը լույս են տեսել 50 հազար տպաքանակով:

50 հազար տպաքանակով են լույս տեսնում նաև համաշխարհային դասականներից հայերեն թարգմանված գրքերը:

Հայաստանում բանաստեղծությունների ժողովածուները սովորաբար լույս են տեսնում 3—5 հազար տպաքանակով, իսկ անվանի բանաստեղծներ Համո Սահյանի, Վահագն Դավթյանի, Հրա-

չյա Հովհաննիսյանի և ուրիշների գործերը տպագրվում են 10—25 հազար տպաքանակներով:

Մանուկների համար նախատեսված գրքերը լույս են տեսնում 20 — 100 հազար տպաքանակներով: Միայն վերջին 10 տարում 100 հազար տպաքանակով լույս է տեսել 70 անուն գիրք: «Արևիկ» հրատարակչությունը 1988 թվականին սկսեց «Համաշխարհային գրականությունն պատանիների համար» 50 հատորյա մատենաշարը, յուրաքանչյուր հատորը՝ 100 հազար տպաքանակով: Այդպիսի ծավալուն մատենաշարի այդքան վիթխարի տպաքանակով հրատարակելը աննախադեպ երևույթ է հայ տպագիր գրքի պատմության մեջ: Մատենաշարի առաջին հատորում տեղ են գտել Դանիել Դեֆոյի «Ռոբինզոն Կրուզո» և Չարլզ Դիկենսի «Օլիվեր Թվիստի արկածները» վեպերը:

Հայ գրքի տպագրության լուսապսակ կարելի է համարել Հայկական սովետական հանրագիտարանը (13 հատորով), որի յուրաքանչյուր հատորը լույս է տեսել 100 հազար տպաքանակով:

Մեր ժամանակներում 100 հազար տպաքանակը մեծ թիվ է նույնիսկ այնպիսի պետությունների համար, ինչպիսիք են Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան կամ Իտալիան: Բայց արի ու տես, որ փոքրիկ Հայաստանում երբեմն

դժվար է լինում ձեռք բերել այն գրքից, որը լույս է տեսել 100 հազար տպաքանակով:

Գրքասեր է հայ ժողովուրդը, գրքի հանդեպ շարունակում է տածել հնամյա պաշտամունքը: 100 հազար գիրքը միայն երեւանում սպառվում է մի քանի ժամում: 1962 թվականին ամերիկյան նշանավոր նկարիչ ու հասարակական գործիչ Ռոջուել Քենտը տեսնելով, թե երևանի կենտրոնական գրախանութում երևանցիներն ինչպես են գնում նոր լույս տեսած գրքերը, ասաց. «Հայերի գրքասիրությունը չափ ու սահման չունի: Խորհրդային Հայաստանի մեծագույն հրաշալիքներից մեկն էլ սա է»:

*Մեր արևները պահած մեկուսի՝  
Անհաղորդ եղանք ճշմարիտ*

*լույսի:*

*Մեր երազները մնացին անկյանք,  
Մեր կյանքը ծափ էր, իսկ ծափը՝  
պատրանք:*

*Թե մեզ խաբեցինք և թե օտարին...  
Երթա հետ չգա էն տարվան  
տարին:*

*Լևոն Միրիջանյան*

## «ԱՐՇԱԿ Բ»

Տիգրան Չուխաճյանի մեծակտավ անդրանիկ ստեղծագործությունը «Արշակ Բ» հայկական ազգային դասական առաջին օ-

պերան է: Կոմպոզիտորն այդ օպերան ավարտել է 1868 թվականին, Կոստանդնուպոլսում, ըստ Թ. Թերզյանի երկլեզվյան (հայերեն, իտալերեն) լիբրետոյի: Օպերայի գործողությունը կատարվում է 365—367 թվականներին, Արմավիրում: Գործողության կենտրոնում են Հայոց Արշակ Բ-ի և թագուհի Օլիմպիայի, իշխանուհի Փառանձեմի և իշխաններ Գնելի ու Տիրիթի, ինչպես նաև Հայաստանի, Պարսկաստանի և Բյուզանդիայի փոխհարաբերությունները:

Նախախորհրդային տարիներին կատարվել են օպերայի առանձին հատվածներ: Օպերան ամբողջությամբ բեմադրվել է երեւանի Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական կադեմիական թատրոնում, 1945 թվականին: Մշակվել է օպերայի նոր լիբրետո (հեղինակ՝ Արմեն Գուլակյան): «Արշակ Բ» երկով Տիգրան Չուխաճյանը դարձավ հայկական օպերային արվեստի հիմնադիրը:

*Ոչինչ ավելի թանկագին է  
երկրի վրա, քան հայրենի հողը:  
Կանցնին բոլոր փառքերն և բո-  
լոր որոտընդոստ երգերը, երբ  
անոնք չեն բխիր հայրենի երկ-  
րին ընդերքներեն: Կանցնին բո-  
լոր պերճանքներն ու բոլոր պա-  
լատները, երբ իրենց շուքը չեն*



ձգեր հայրենի ջրերուն վրա: Կանցնին մարդիկը իրենք, հեռագնաց հովերու պես, կանցնին փոշիի ամպերու և թեթև եղանակներու պես, եթե իրենց մազարմատներով չեն խրած երկրին բուսահողին մեջ:

Կանցնին օտար եզերքներու վրա՝ մեր բոլոր կարոտներն իսկ, վասնզի բեղմնավոր չեն: Ինչ որ կմնա՝ մեր բիձաներուն բնիկ բարբառն է, որուն հնչյուններուն մեջեն մարդ ականջը լարելով կրնա լսել հին հայոց տոհմիկ շեշտը: Թող Սեն-Լուեն մինչև Ֆրեզնո, Բեյրութեն մինչև Շանհայ մեր շինած տուներեն ոչ մեկ պատ քար քարի վրա մնար՝ միայն թե մեր անդերեն ու մեր ճամբաներեն նոր հորդաներ քառասմբակ չարշավեին, անգամ մը ևս կոխկրտելով մեր սրբությունը:

Եթե նույնիսկ բազուկներդ չկրնան հրացան բռնել, մագիլներովդ ճանկե արդարությունդ, եթե նույնիսկ ստիպված ըլլաս, անգամ մը ևս, ողնաշարդ ծռել, ողջ հասակովդ ընկիր մեր կարմիր հողերուն վրա: Ավելի լավ է սողալ այնտեղ, քան թե գլուխ ցցել ուրիշին սահմաններուն վրա:

Վազգեն Շուշանյան

## ՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԸՄՊԵԼԻՔԵՐԸ

Հին Հայաստանը հռչակված է եղել ընտիր ըմպելիքներով:

Դա պայմանավորված էր Հայկական լեռնաշխարհի հարուստ ու բազմազան բուսականությամբ:

Հայկական ըմպելիքների մասին ամենահին տվյալները հարդորդում են օտարազգի պատմիչները: Հույն պատմիչ Քսենոփոնը, որը մեր թվականությունից առաջ 401 թվականին եղել է Հայաստանում, հայկական գարեջրի մասին գրել է. «Տեսնում էին այծերը, ոչխարները, եզները և թռչունները՝ իրենց ձագերով: Այնտեղ կար նաև ցորեն, գարի, ընդեղեն և կարասների մեջ գարուց պատրաստված գինի, որի երեսին լողում էին գարու հատիկներ: Կարասների մեջ կային նաև եղեգներ՝ մեծ ու փոքր, առանց ծնկի: Ծարավելու դեպքում մարդ պետք է այդ եղեգի ծայրը բերանին դներ ու ծծեր: Եվ այն շատ թունդ էր՝ եթե ջուր չխառնեին, իսկ սովոր մարդու համար շատ ախորժեղի ըմպելիք է»:

Այդ խոսքերը վկայում են, որ Հայաստանը գարեջրի հնագույն հայրենիքներից է:

Բայց, իհարկե, հայկական ըմպելիքների նահապետը գինին է, որն ստանում են պտուղների թագուհի խաղողից: Հույն պատմիչ Ստրաբոնը հավաստում է, որ Հայաստանի այգիները ընտիր գինիներ էին տալիս:

Հնում խաղող աճեցրել են Հայկական լեռնաշխարհի համարյա բոլոր կողմերում: Ավան-

ությունն ասում է, որ խաղողի սռաջին որթը տնկվել է Մասիսի լանջին՝ Ակոռի գյուղում: Ակոռի գյուղի կողքի գետակներից մեկը կոչվել է Գինա գետ, այսինքն՝ գինեվետ գետ: Գինեվետը, որ հայերենի սքանչելի բառերից է, նշանակում է գինեբեր, գինով սռատ: Գողթն գավառի գուսանները խաղողի այգիներով հրճակված իրենց գավառը անվանել են գինեվետ Գողթն: Հինգերորդ դարում գինեվետ են կոչվել նաև Վաղարշապատի այգիները: Աշխարհի հնագույն բնակավայրերից մեկը գտնվում է Արցախ-Ղարաբաղի Հաղրութի շրջանում և կոչվում է Ազոխ, այսինքն՝ խակ խաղող: Գինու ու խաղողի հետ կապված շատ տեղանուններ կան Հայկական լեռնաշխարհի ուրիշ կողմերում: Այդ պատճառով գինեվետ կարելի է կոչել ոչ թե Հայաստանի մի գյուղը, մի գավառը կամ նույնիսկ մի նահանգը, այլև՝ ամբողջ երկիրը: Մեր նախնիները գինին օգտագործում էին տարբեր նպատակներով: Սկզբում այն եղել է որոշ հիվանդություններ բուժելու միջոց, ապա՝ տրամադրությունը բարձրացնող, մարդուն զվարթացնող ըմպելիք: Ազաթանգեղոսը հայկական գինին համարում է «ըմպելիք քաղցր ու անուշ»: Վաղնջագույն ժամանակներից հայ ժողովրդի բոլոր խավերն օգտագործել են զվարթացնող այդ ըմպելիքը: Այլ կերպ

լինել չէր կարող .որովհետև Հայաստանը խաղողագործության դասական երկիր էր: Հայերը գինին կոչել են ըմպելիքների թագուհի, խաղողի արյուն, ողկույզի դուստր: Անհամեմատ շատ գինի են խմել տոնախմբությունների ժամանակ:

Հաշվի առնելով, որ գինաբույսը, այնուամենայնիվ, գայթակղեցուցիչ է, և արքունականները շատ են հրապուրվում նրանով, Վաղարշակ թագավորը «Իր թագավորական տանը օրենքներ է հաստատում, ժամեր է սահմանում արքունիք մտնելու և իջնելու, խորհրդի, կերուխումի և զբոսանքների համար»:

Հասկանալի է, որ, չնայած այդ օրենքին, Հայոց արքունիքում խախտվել է հենց կերուխումի ժամը: Խրախճանասեր է եղել հայ արքաների մեծ մասը: Նրանք նույնիսկ հպարտացել են դրանով և աշխատել հաջորդ սերունդներին տեղյակ պահել իրենց գինեմոլության մասին: Թովմա Արծրունին գրում է, որ Վասպուրականի Գագիկ Արծրունի արքան ձվաշոտ գավառի Գետն կոչվող ավանում կառուցել է մի վայելուչ խրախճանատեղի-որսարան, որի շրջակայքը լիքն էր վայրի խոզերի հոտերով և ցիռերի երամակներով: Աղթամարի Սուրբ խաչ եկեղեցու ոսկեգեթեթ տաճարի որմերի վրա հանձարեղ ճարտարապետ Մանուելը պատ-

կերել է խրախճանական տեսարաններ, ուր նույն Գագիկ Արծրունին, բազմած ոսկեզարդ գահերի վրա, շրջապատել է իրեն մատռվակներով ու գուսաններով, խմբապարի մեջ մտած հիացքի արժանի աղջիկներով: Տաճարի արևելյան պատի վրա Մանուելը քանդակել է խաղողի մի այգի: Գագիկ թագավորը ծալապատիկ նստել է բարձի վրա, աջ ձեռքին՝ մի բաժակ, իսկ ձախը մեկնել է դեպի խաղողի ողկույզը: Ուր որ է այդ ողկույզը նա կճմլի բաժակի մեջ և կըմբռնի քաղցրահամ խաղողախյութը:

Հին Հայաստանում գինուց բացի պատրաստել են թունդ խմիչք, որը կոչել են ցքի կամ օղի: Իրավ է, հիմա գործածությունից դուրս է եկել ցքի բառը: Մեր նախնիները օղուն ցքի են ասել, որ նշանակում է, թե այն օգտագործողի սիրտը կծակծկվի ցաքի փշի նման: Եվ ծաղրել են այդ խմիչքն օգտագործողներին: Չգրված մի օրենքով ցքի խմողները հալածվել են: Հարբեցողին կապել են ձիերի գավակներին և տարել գյուղից գյուղ ու պըտտեցրել այն տների առջևով, որտեղ ապրում էին հարբեցողի ազգականներն ու բարեկամները: Ցքի խմողների հանդեպ արգահատանք է ունեցել 5-րդ դարի իմաստասեր, Հայոց կաթողիկոս Հովհան Մանդակունին:

Մովսես Խորենացին, խոսելով

Տիգրան Երվանդյանի բազմաթիվ արժանիքների մասին, նշում է, որ նա «Կերակուրների և ըմպելիքների մեջ պարկեշտ էր, ուրախությունների մեջ օրինավոր»: Պատմահայրը իր մեկենասին՝ ասպետ Սահակ Բագրատունուն հղած նամակում գրում է. «Եվ որովհետև մեզ հաճելի թվաց թո հրամանով մեր հանձն առած նեղությունն ավելի մեծ բավականություն համարել, քան ուրիշներից առաջարկված ուրախությունն ու կերուխումը»:

Հին Հայաստանում խմելը չարաշահողները դատապարտվել են նաև օրենքով: Իր նշանավոր Դատաստանագրքում Մխիթար Գոշը ձևակերպում է այն օրենքը, որով պատժվում էին հարբեցողները: Եթե հարբեցողը վնաս է հասցրել որևէ մեկին, ապա պետք է հատուցի այն: Հարբեցողից չպետք է երդում ընդունել: Պետք է պատժել հարբեցող հոգևորականին և նրանց, ովքեր մասնակցել են գինարբուքի կազմակերպմանը: Միջնադարի մեծ օրենսգիրքը միաժամանակ նշում է, որ հարբեցողին նախ պիտի խրատել և նոր դիմել պատժի միջոցներին:

Իր առակներից մեկում Մխիթար Գոշը գրել է. «Եթե մարդը զգույշ լինի ուտելու և խմելու մեջ, բժիշկներին դիմելու կարիք չի ունենա»:

Մեր նախնիները դարավոր կենսափորձից ելնելով ջանացել





են չափավորել գինու գործածությունը, խուսափել նրա կործանարար հետևանքներից: Ծանրութեան անելով գինու դրական ու բացասական կողմերը՝ մեր հները ժողովրդական իմաստությունների մի ամբողջ խրատանի են ստեղծել: Ահավասիկ.

Գինուն հարցրին.

— Ավերածոյ է շատ թե շինածոյ: Եվ գինին պատասխանեց.

— Շինածս չգիտեմ, ավերածս համրանք չունի:

Մի ուրիշը. Գինի խմողը կհարբի, կռվի գնացողը կմեռնի:

Երրորդը. Շնությունը, գինին ու քաղցուն սիրտը կխաբեն:

Գինեմոլությունը խարազանող հայկական հնագույն թևավոր խոսքերն այսօր էլ կենսունակ են և դեռևս առիթները չեն նվազել դրանք մոռացության տալու համար:

Հիշենք ևս մի քանիսը:

Ջուրն անուշ է, քան նռան գինին:

Գինին մարդ չի մեռցնում, բայց շան օրի է գցում:

Վայ նրանց, ովքեր առավոտ կանուխ ոտքի են ելնում ու ցքի խմելու հետևից ընկնում:

Եթե մեկը մեծ ուխտ ունի, պիտի զգուշանա գինուց ու օղուց: Խաղողի խաղաղիկ ջուրն ինչ հանցանք ունի, երբ նրանից թույն պատրաստողը մենք ենք:

Շատ գինի խմողը ջրի մեջ կկորչի:

Ժուժկալ հայը խմելու չափը բանաձևել է այսպես.

Մի բաժակը լավ է, երկուսը բավ է, երեքը ցավ է:

Միջնադարի մեծ բանաստեղծ ու իմաստասեր Ներսես Շնորհալին գրել է, որ անուշ գինով լցված թակուկը մարդուն առաջնորդում է դեպի հիմարություն: Հազար տարի առաջ մեր պապերը գիտեին, որ շատ գինի խմելը լյարդի հիվանդություն է առաջացնում: «Ծիծեռնակ» նշանավոր բանաստեղծության հեղինակ Գևորգ Դոդոխյանը «Արբեցողի երգը» զավեշտական բանաստեղծության մեջ գրել է.

Ուղիղ գինետնից ես տուն եմ գնում.

Փողոց, այ փողոց, էդ ինչ եմ տեսնում,

Աջ գնամ թե ձախ, ծուռ եմ

երկուսն էլ,

Փողոց, տեսնում եմ, դու էլ ես հարբել:

Հին Հայաստանում գինի են պատրաստել ոչ միայն խաղողից, այլև օշինդրից, վարդից, մկնսոխից, հապալասից, սերկևիլից:

Մեր նախահայրերը ցքին պատրաստել են արմավի հյութից, հետագայում նաև հոնից, թթից, սալորից և այլ մրգերից: Ցքին կամ օղին համարվել է ամենակործանարար: Այդ պատճառով ժողովուրդն ասել է. «Գինին

ծաղր անող է, ցքին՝ կռիվ գցող»:

Հին Հայաստանում տարածված են եղել նաև ավելի քան 400 տեսակ մրգահյութեր և քաղցրը օշարակներ: Դրանց մեջ ամենահռչակավորը նռան հյութն է, որը ոչ միայն հաճելի ըմպելիք էր, այլև բուժիչ դեղ: Նռան հյութը համարել են արտասովոր կենարար ըմպելիք, երկարակեցության բալասան: Ամմահական հյութի անուն է հանել որդան կարմիրի խառնուրդով պատրաստված օշարակը:

Հին հայերը զանազան օշարակներ են պատրաստել խնձորից, տանձից, խաղողից, դեղձից, սալորից, մոշից: Բայց, իհարկե, ամենապատվական օշարակը համարվել է ծիրանի հյութը:

Հայկական ըմպելիքների շարքին են դասվում բազմատեսակ ծաղկահյութերը, լոշտակից, մատուտակից, ուրիշ արմտիքներից, ծառերի փխրուն կեղևից ու քաղցրը խեժերից պատրաստված օշարակները: Միայն մեղրից պատրաստվել է տասներկու տեսակ օշարակ:

Հայաստանում կային անուշահոտ ծաղիկների հատուկ բուրաստաններ: Արքաների ու թագուհիների համար ծաղիկներից պատրաստում էին ընտիր հյութեր, որոնք կոչվում էին անմահական հեղուկներ: Հայտնի է, որ 7-րդ դարի ականավոր գիտնական Անանիա Շիրակացին Այ-

րարատ նահանգի Չողակերտ վայրում հայտնաբերել է համասփյուռ բույսը, որը բուժիչ հատկություններ ունի: Այդ բույսից սարքել են նաև անուշահամ օշարակներ:

Հայկական օշարակների թագուհին կենաց հյութն է, որի մեջ մեկտեղվում էին քառասուն բուրումնավետ ծաղիկների հյութերը: Այն ըմբռնում էին նավասարդյան տոնախմբությունների մրցություններում հաղթողները, արքաները, մեծ ճակատամարտերում հաղթանակ տանողները:

Հայկական ըմպելիքների առատության արգասիք է ըմպանակ բառի ծնունդը: Ըմպանակ նշանակում է բաժակ: Սկզբնական շրջանում դրանք այն բաժակներն էին, որոնց մեջ մրգահյութ, օշարակ էին լցնում: Հետագայում ըմպանակ բառը դարձավ բաժակ բառի հոմանիշ: Հին Հայաստանում պատրաստել են օշարակի մի տեսակ, որ կոչվում է զովացուցիչ հյութ: Այդ տեսակ հյութը խմողներին էին մատուցում կավե ամաններով:

Հին հայկական ըմպելիքները հաճելի համ են ունեցել նաև այն պատճառով, որ նրանց մեջ խառնել են Հայաստանի աղբյուրների սառնորակ ու խմելու ընտիր ջուրը:

*Ես աչք ու դու լույս, հոգի, առանց  
լույս՝ աչքն խավարի.*

Ես ձուկ ու դու ջուր, հոգի, առանց  
ջուր՝ ձուկն մեռանի.  
Երբ զձուկն ի ջրեն հանեն և ի  
այլ ջուր ձգեն, նա ապրի,  
Երբ զիս ի քենե զատեն, քան  
զմեռնելն այլ ճար չի լինի:

Նահապետ Քուչակ

Հայաստանում կինը առանձ-  
նապես չի ստրկացվել ոչ ստրըր-  
կատիրական կարգերի օրով, երբ  
կային անգամ կին աստվածներ  
(Անահիտ, Աստղիկ, Նանե) և ոչ  
էլ միջին դարերում, ավատա-  
կան կարգերի օրով, երբ կինն  
անգամ շինարարական աշխա-  
տանքների և նվիրատվություն-  
ների մեջ հանդես է գալիս իբրև  
բարեգործ՝ իր ամուսնու կամ հոր  
ու եղբայրների հետ հավասար,  
երբ նրանց հիշատակին կամ  
արևապաշտության համար եկե-  
ղեցիներում պատարագ է մա-  
տուցվում: Ստրկատիրական կար-  
գերի ժամանակաշրջանի այր և  
կնոջ դաշինքի օրինակ կարող է  
ծառայել 1969 թ. Ներքին Դվի-  
նում բացված դամբարանի քան-  
դակագործ քարը: Քարի վրա  
պատկերված են կողք կողքի  
կանգնած տղամարդ ու կին,  
իրար ձեռք բռնած, որ նրանց  
միասնությունն ու սիրո դաշինքն  
են ազդարարում:

Կարո Ղաֆադարյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՐԱՏԱՆԻ

Եթե հիվանդ կամ հոգնած ես, մի

կառավարիր իբրև իշխան:

Եզնիկ Կողբացի

Լավ է աչքով կույր լինել, քան  
մտքով կույր:

Եղիշե

Եթե մարդը մարմնապես բարձրա-  
հասակ չէ, ապա գոնե պետք է հո-  
գեպես բարձր լինի:

Գրիգոր Մագիստրոս Պահլավունի

Չղջիկները լուսին նայել չեն  
կարող, մտնում են քարերի ճեղքը  
և կամ պատերի խորշերը, և,  
որովհետև գարշահոտ են ու վա-  
տատես, ցերեկը գունդ ու կծիկ  
են լինում և գիշերը հարձակվում:

Այդպես են բանսարկուններն ու  
ավազակները, որոնք արդարու-  
թյան լուսից փախչելով՝ սիրում  
են խավարը:

Սխիթար Գոշ

Ով շողոքորթություն... Ամեն  
տարիք կսիրե զքեզ:

Հակոբ Պարոնյան

Կարճ է մարդուս կյանքը, բայց  
իմաստուն, խորհրդավոր: Պապս  
մոտ 105 տարի ապրեց, մեռնե-  
լիս էլ ասել էր. «Արժեք էս մի  
քանի օրվա համար ծնվել ու  
տանջվել...»:

Հովհաննես Քումանյան



Սուտ սերերը ավելի վտանգավոր են, քան ամենն բացահայտ ու խորունկ ատելությունները:

Երուխան

Տղաք, ինչ որ ունիք, — հոգեկան, մտային արժանիքներ կամ նյութական հարստություն, — կպատկանի ձեր ժողովուրդին, հայ ժողովուրդին, — անոր վերադարձնեք պիտի:

Լևոն Շանթ

Վարուժանով կիպարտանանք, Դուրյանով կտառապինք, Մեծարենցով կանուշնանանք, Վահան Թեքեյանով կզգաստանանք:

Հակոբ Օշական

Բանաստեղծություն մը պետք է որ, կամ ավելի ճիշտ՝ բանաստեղծությունը պետք է որ — գեղարվեստից զարգացման կարգավզանոնք հիշելով — ճարտարապետությունն փոխ առնե գիծն, արձանագործությունն՝ ձևը, պատկերահանությունն՝ գույնը,

երաժշտությունն ու պարեն՝ եղանակն ու կշռությունը, իսկ սրտեն... արյունը:

Եղիա Տեմիրճիպաշյան

Լավագույն գրողները միշտ լավագույն քնահատվածները չեն եղած իրենց ժամանակին:

Արտաշես Հարությունյան

(գրող, Մեծ եղեռնի զոհ)

Մարդկային բոլոր զգացումներն ամենն ուժեղը մորը սերն է իր զավակին հանդեպ:

Լևոն Բաշայան

Խնչպես բանաստեղծություններ կան առանց բանաստեղծության, այնպես էլ կյանքեր կան՝ գրեթե առանց կյանքի...

Վահան Թեքեյան

Մարդը մարդ է միշտ որոնում և իրեն է սոսկ գտնում:

Լևոն Աթաբեկյան

(բանաստեղծ, հասարակական գործիչ, 1875 — 1918)



# ՍԵՊՏԵՄԲԵՐ

|            |   |    |    |    |
|------------|---|----|----|----|
| ԵՐԿՈՒՇԱԲԹԻ | 3 | 10 | 17 | 24 |
| ԵՐԵՔՇԱԲԹԻ  | 4 | 11 | 18 | 25 |
| ՉՈՐԵՔՇԱԲԹԻ | 5 | 12 | 19 | 26 |
| ՀԻՆԳՇԱԲԹԻ  | 6 | 13 | 20 | 27 |
| ՈՒՐԲԱԹ     | 7 | 14 | 21 | 28 |
| ՇԱԲԱԹ      | 1 | 8  | 15 | 22 |
| ԿԻՐԱԿԻ     | 2 | 9  | 16 | 23 |
|            |   |    |    | 30 |

## **ԽԱՀԱ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՆԱ- ԳԻՐԸ**

## **ԱՊՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԽԱՀ ԼԵՌԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱԿԱՐ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԶԵՎ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում և նրա առնչության մեջ ազգամիջյան հարաբերությունների շարունակվող լարվածության կապակցությամբ, նպատակ ունենալով կանխել դրանց հետագա սրումը և կայունացնել իրադրությունն այդ ռեգիոնում, հաշվի առնելով Ադրբեջանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ կուսակցական ու պետա-

կան մարմինների, ինչպես նաև Ազգությունների խորհրդի հանձնաժողովի առաջարկությունները, ԽԱՀԱ Գերագույն խորհրդի Նախագահությունը, այդ հարցը քննության առնելով Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի Նախագահության հետ, ԽԱՀԱ սահմանադրության 119-րդ հոդվածի 14-րդ կետին համապատասխան որոշում է.

1. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում ժամանակավորապես սահմանել կառավարման հատուկ ձև, պահպանելով Լեռնային Ղարաբաղի՝ որպես Ադրբեջանական ԽՍՀ կազմում ինքնավար մարզի, ստատուսը:

Կազմել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Հատուկ կա-

ռավարման կոմիտե՝ ընկ. Ա. Ի. Վոլսկու նախագահությամբ:

Դադարեցնել Լեռնային Ղարաբաղի Մջնավար Մարզի քսաներորդ գումարման ժողովրդական դեպուտատների խորհրդի լիազորությունները մինչև խորհրդի նոր կազմի ընտրությունների անցկացումը:

2. Սահմանել, որ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Հատուկ կառավարման կոմիտեն ենթարկվում է անմիջականորեն ԽԱՀ Միության պետական իշխանության և կառավարման բարձրագույն մարմիններին, լրրիվ ծավալով օժտված է ինքնավար մարզի ժողովրդական դեպուտատների խորհրդի և նրա գործադիր կոմիտեի լիազորություններով, իսկ Կոմիտեի նախագահը՝ ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի գործադիր կոմիտեի նախագահի իրավունքներով ու պարտականություններով:

Հիշյալ Կոմիտեի վրա դնել Լեռնային Ղարաբաղի Մջնավար Մարզի պետական իշխանության և կառավարման տեղական մարմինների ղեկավարումը, ինչպես նաև նրան հանձնել ժողովրդական դեպուտատների մարզային խորհրդի գործադիր կոմիտեի ապարատը՝ որպես աշխատանքային մարմին:

3. Սահմանել, որ Լեռնային Ղարաբաղի Մջնավար Մարզի

տարածքում գտնվող միութենական և հանրապետական ենթակայության ձեռնարկությունները, հիմնարկություններն ու կազմակերպությունները, ինչպես նաև նրանց մասնաճյուղերը, արտադրամասերն ու մյուս կառուցվածքային ստորաբաժանումները սույն հրամանագրի գործողության ժամանակամիջոցում, այն հարցերում, որ կորոշի ԽԱՀ Մինիստրների խորհուրդը՝ հաշվի առնելով Ադրբեջանական ԽԱՀ Մինիստրների խորհրդի կարծիքը, ենթարկվում են Կոմիտեին:

Մամուլի, ռադիոյի և հեռուստատեսության, մասսայական ինֆորմացիայի մյուս միջոցների օրգանները, հրատարակչությունները, պոլիգրաֆիական ձեռնարկությունները, ներքին գործերի մարմինները, ինչպես նաև մշակույթի, ժողովրդական կրթության, առողջապահության հիմնարկություններն ու ոչ արտադրական ոլորտի մյուս կազմակերպությունները, անկախ իրենց ենթակայությունից ու գերատեսչական պատկանելությունից, իրենց գործունեությունը իրականացնում են Կոմիտեի կամ նրա լիազորած անձանց անմիջական ղեկավարությամբ:

Լեռնային Ղարաբաղի Մջնավար Մարզի տարածքում դատախազության ու դատարանների գործունեությունն իրականացվում է գործող օրենսդրու-

թյան ու այն կարգի համաձայն, որ կսահմանեն համապատասխանաբար ԽԱՀՄ գլխավոր դատախազը, ԽԱՀՄ արդարադատության մինիստրությունը և ԽԱՀՄ գերագույն դատարանը:

4. Լեռնային Ղարաբաղի Մքենավար Մարզի Հատուկ կառավարման Կոմիտեին իրավունք տալ.

դադարեցնել Լեռնային Ղարաբաղի Մքենավար Մարզի ժողովրդական դեպուտատների շրջանային, քաղաքային, գյուղական, ավանային խորհուրդների, նրանց գործադիր և կարգադիր մարմինների լիազորությունները, ինչպես նաև նշանակել հիշյալ տեղական խորհուրդների ընտրություններ և կազմակերպել դրանց անցկացումը.

դադարեցնել հասարակական կազմակերպությունների և ինքնագործ միավորումների՝ ԽԱՀՄ սահմանադրությանն ու օրենսդրությանը հակասող գործունեությունը կամ, անհրաժեշտության դեպքում, արձակել դրանք: Հանրապետական կամ ընդհանուր միութենական մարմիններ ունեցող նշված կազմակերպությունների ու միավորումների գրանցումը կամ արձակումը կատարվում է այդ մարմինների հետ համաձայնեցնելով.

անհրաժեշտության դեպքում պետական, տնտեսական և սոցիալ-կուլտուրական շինարարու-

թյան հարցերի առթիվ առաջարկություններ ներկայացնել անմիջականորեն ԽԱՀՄ Գերագույն խորհրդի Նախագահություն, ԽԱՀՄ Մինիստրների խորհուրդ, ԽԱՀՄ մինիստրություններ, պետական կոմիտեներ ու գերատեսչություններ:

5. Լեռնային Ղարաբաղի Մքենավար Մարզի տարածքում ժամանակավորապես դադարեցնել «Պետական ձեռնարկության (միավորման) մասին» ԽԱՀՄ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ կետերի ու 5-րդ կետի երրորդ պարբ. և 7-րդ հոդվածի գործողությունը:

6. Աղբբեջանական ԽԱՀ Գերագույն խորհրդի Նախագահությանը՝ ընդունել սույն հրամանագրից բխող համապատասխան որոշումներ:

7. Սույն հրամանագիրը կիրառել 1989 թվականի հունվարի 20-ից:

**ԽԱՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության Նախագահ՝**  
**Մ. ԳՈՐԲԱՀՈՒ**

**ԽԱՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության քարտուղար՝**  
**Թ. ՄԵՆՇԵՆԱՇՎԻԼԻ**

**Մոսկվա, Կրեմլ, 12 հունվարի 1989 թ.**

Եղբայր եմք մեք,  
որ մրրկավ էինք գատված...

Սկրտիչ Պեշկոթաշլյան

## ՂԱՐԱԲԱՂԻ ՄԱՍԻՆ ՍԵՐԳԵՅ ԳՈՐՈՂԵՑԿՈՒ ԱՎԱՎ ՀԱՅՏՆԻ ՀՈՂՎԱԾԸ

Ուսու սեզանի բանաստեղծ, բարձրանիչ ու հասարակական գործիչ Սերգիյ Գորոզեցկու (1884—1967) այս հոգվանք գրվել է 1919 թվականին և առաջգրվել ժողովրդական սուզու թերթի 1919 թվականի մարտի 23-ի համարում:

### ՂԱՐԱԲԱՂ

Ամեն երկիր, ամեն մի ազգ իր նվիրական պատվարն ունի: Երբ ժողովրդի պատմությունը հաջող ընթացք է ունենում, այն դառնում է մշակութային ու քաղաքական կյանքի կենտրոն: Իսկ երբ ճակատագիրը հալածում է ազգին, այն դառնում է ազգային կյանքի հենարան, հույսերի կղզի, վերածնության երաշխիք:

Հայ ժողովրդի համար հենց նշված վերջին դերն է խաղացել ու խաղում Ղարաբաղի լեռնային մարզը:

Բուն բնությունն է նրան հսկայական նշանակություն տվել:

Այնտեղ, Ղարաբաղի անառիկ բարձունքներում, որ Կարսի ու Սևանի բարձրավանդակների շարունակությունն են, ավելի քան երկու հազար տարի հայ ժողովուրդը տոկացել է քոչվոր ցեղերի հարձակումներին՝ պահպանելով իր մշակույթը, պահպանելով իր ազգային դեմքը:

Ազգագրական, տնտեսական ու լեզվային առումով լինելով միասնական, Ղարաբաղը դարձել է Հայաստանի միջնաբերդը, նրա արեվելյան թևը: Այդպիսին է նա եղել անցյալում, այդպիսին է ներկայումս և այդպիսին կլինի ընդմիջտ, քանի որ առանց Ղարաբաղի տերը լինելու, անկարելի է պաշտպանել Հայաստանի սիրտը, Արարատյան դաշտավայրը: Պատմության ընթացքում բազմիցս են հարձակման ալիքները գարնվել ու փշրվել Ղարաբաղի ամրությանը, թափանցելով սոսկ գետահովիտները, բայց այդտեղ էլ երկար չեն մնացել: Սյունիքի (այդպես էր կոչվում Ղարաբաղը) իշխանության մեղիքությունները հին ժամանակներում բազմիցս են սեփական ուժերով տեղի հողերից քշել թշնամուն: Պատմությունը կրկնվում է, և վերջին անգամ դա տեղի ունեցավ մեր աչքի առաջ:

Բնությունը և պատմությունը Ղարաբաղում ստեղծել են վառ արտահայտված տիպ: Աշխարհով մեկ սփռված ղարաբաղցիներին հեշտ է ճանաչել ամենուր: Գործունեության լայն թափ, անձնուրաց քաջություն, կյանքը վտանգելու պատրաստակամություն, ինքնավստահություն, ինքնատիպ համառություն, շիտակ նպատակամտություն, նահապետական պարզ կենցաղավարություն՝ ահա ղարաբաղցուն բնորոշ այն առինքնող հատկանիշները, որոնք



ասես խտացնում են հայի հիևավուրց առաքինությունները, որոնք այլուրեք դժգունել են պատմության արհավիրքներից, բայց անաղարտ վիճակում պահպանվել են Ղարաբաղում: Բարձրահասակ, պնդակազմ ժողովուրդը կյանքը փրկելու համար բարձրանալով լեռները, ամրապնդվեց լեռնային օդի ազդեցությամբ և իրեն զերծ պահեց այն վարակներից, որոնք բաժին են ընկնում հովիտների բնակիչներին:

Հայաստանի ազգային հիշողությունը պետք է պահպանի անվանի շատ ղարաբաղցիների հիշատակը: Չկա մի այնպիսի բնագավառ, որտեղ նրանք դրսևվորած չլինեն իրենց ձեռներեցությունն ու տաղանդը: Քաղաքականություն, գրականություն, հասարակական գործունեություն, առևտուր՝ այդ ամենը աշխատանքի ասպարեզ է ծառայել նրանց համար...

Տալով բազմաթիվ նշանավոր տղամարդ գործիչներ, Ղարաբաղը ստեղծել կամ ավելի ճիշտ՝ իր զուտ տեսքով պահպանել է նաև հին հայ կնոջ տիպը, որի հոգեբանության մեջ ու կենցաղում շատ բան է պահպանվել նահապետականությունից: Իր մշակույթով ու կենցաղով դարբնըված Ղարաբաղը մեր օրերում ևս ստվեր չի գցել իր վաղեմի փառքի վրա: Ընչպես Թամեռլանի ժամանակներում հավաքելով

իրենց զորագնդերը, մելիքները պաշտպանեցին Ղարաբաղի անկախությունը: Շուշիի միջադեպը չփոխեց Նուրի փաշայի պարտության ընդհանուր պատկերը, և պաշտպանության գիծը, ըստ էության, մնաց անձեռնմխելի, ինչպես նախկին հարձակումների ժամանակներում:

Այդպիսին է Ղարաբաղի նշանակությունը Հայաստանի համար: Եթե Հայաստանը կորցնեք Ղարաբաղը, ապա ազգերի ինքնորոշման գաղափարը հարկավ խիստ կոտնահարվեք: Եվ ընդհակառակը, տերը լինելով Ղարաբաղի, Հայաստանը կստանա մշակութային եռանդագին ուժի հուժկու հորձանք, որը հորդելով Հայաստանի ավերված տարածությունները, դրանք կբեղմնավորի մշակույթով և դրանով իսկ կամբողջացնի Ղարաբաղի բազմադարյան պանծալի պատմությունը:

Յուրաքանչյուր ժողովուրդ հիմա փնտրում է իրենը: Վերածնված ազգերի ամբողջ ապագան կախված է այն բանից, թե նրանք իրենց մեջ ազգային մշակույթի բավականաչափ, այսպես ասած, մակարդ կգտնեն արդյոք: Նման պայմաններում բոլոր կենտրոնները, որտեղ այս կամ այն պատճառով կենտրոնացվել է մշակութային կյանքը, բացառիկ նշանակություն են ստանում: Այդպիսին է Ղարաբաղի նշանակությունը Հայաստանի համար:

Ճիշտ է, պատմությունը Հայաստանին ձգել է դեպի հարավ, դեպի տաք ծովը, և գուցե հենց այդտեղից հորդեն ուժեր, որոնք Ղարաբաղը դարձնեն Հայաստանի հյուսիսային ծայրամասը:

ԳԱՆՃԱՍԱՐԻ ՏԱՃԱՐԸ 750 ՏԱՐԵԿԱՆ Է



Հայկական ճարտարապետության եզակի կոթողներից է Գանձասարի վանքի համալիրը, որ գտնվում է Լեռնային Ղարաբաղի Ռջնավար Մարզի Մարտակերտի շրջանում, Վանք գյուղի դիմաց, բլրի վրա: Կառուցվել է 1216 — 38 թվականներին, օծվել է 1240-ի հուլիսի 22-ին, Վարդավառի մեծ տոնին՝ կիրակի օրը: Օծմանը ներկա է եղել 700 քահանա: Հայ ճարտարապետության հմուտ գիտակ Ա. Յակոբսոնը Գանձասարը համարում է ժայ ճարտարապետության մարգարիտ: Ճարտարապետության եվրոպացի խոշոր մասնագետ Շառլ Դիլը համաշխարհային մշակույթի գանձարան մտած հայկական հինգ հուշարձաններից երրորդը համարում է Գանձասարը: Ըստ Շառլ Դիլի, հայկական այդ հինգ նշանավոր կոթողներն են. 1. Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին, 2. Էջմիածնի Հռիփսիմեի տաճարը, 3. Գանձասարի վանքը, 4. Հաղպատի վանքի համալիրը, 5. Անիի Մայր տաճարը:

Գանձասարի վանքը կանգուն է և այսօր էլ հիացնում է դիտողին:

Բայց այդ դեպքում ևս նա չի կորցնի իր նշանակությունը՝ իբրև անձեռնմխելի և դարերում քննություն բռնած մշակույթի ֆոնդի:

Սերգեյ Գորոդեցկի

## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԸ

Հայ ընթերցողի սեղանին դրվեցին Հայկական խորհրդային հանրագիտարանի 12 հատորները և դրանց բաղկացուցիչ մաս կազմող «Խորհրդային Հայաստան» հատորը:

Հայկական հանրագիտարանի հրատարակությունը աննախադեպ երևույթ է հայ տպագիր գրքի պատմության մեջ: Մինչև այժմ լույս տեսած 100 հազար անուն գրքերի մեջ Հայկական խորհրդային հանրագիտարանը բոլոր առումներով ամենածավալուն և ամենահեղինակավոր գիրքն է: Հայկական հանրագիտարանը խորհրդային իշխանության տարիներին հայ ժողովրդի ձեռք բերած հոգևոր նվաճումների պերճ վավերագիրն է: Այս կոթողային հրատարակությունը հնարավոր դարձավ իրագործել խորհրդային իշխանության պայմաններում հայ ժողովրդի սոցիալական, ազգային ու պետական վերածննդի, տնտեսության ու մշակույթի համակողմանի զարգացման շնորհիվ: Մեր հանրագիտարանը իր բնույ-

թով համապարփակ է, ընդգրկում է բոլոր գիտությունները՝ արտացոլելով մարդկային մտքի արդի մակարդակը: Աննախադեպ է նաև նրա 100 հազար օրինակը, որը միութենական հանրապետությունների համապարփակ բնույթի հանրագիտարանների մեջ ազգային լեզվով ամենաբարձր տրաքանակն է: Իր բարձրորակ տպագրությամբ չի զիջում համաշխարհային համանման առաջնակարգ հրատարակություններին:

Հայկական խորհրդային հանրագիտարանի 12 հատորների օրգանական մաս կազմող «Խորհրդային Հայաստան» հատորը ամբողջովին նվիրված է Խորհրդային Հայաստանի տնտեսության, մշակույթի ու գիտության, հայ ժողովրդի պատմության լուսաբանմանը:

Հայկական խորհրդային հանրագիտարանի (Երևան, 1974 — 1986) հրատարակության կազմակերպման և խմբագրման հա-

մար 1988 թվականին Հայկական ԽՍՀ պետական մրցանակներ են շնորհվել: ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի և Հայկական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Հայկական խորհրդային հանրագիտարանի



խմբագրական կոլեգիայի և գիտահրատարակչական խորհրդի նախագահ Կիկտոր Համազասպի **Համբարձումյանին**, խմբագրական կոլեգիայի գլխավոր խմբագիր, պատմական գիտությունների դոկտոր Մակիչ Վահանի **Արզումանյանին** (հետմահու), նախկին գլխավոր խմբագիր, պատմական գիտությունների դոկտոր Աբել Պողոսի **Սիմոնյանին**, գլխավոր խմբագրի տեղակալ Զավադ Լևոսի **Քոբոջյանին**, պա-



Հայկական խորհրդային հանրագիտարանի գլխավոր խմբագրության շենքը

տասխանատու քարտուղար, գրող  
Հայկ Հարությունի Խաչատրյա-  
նին:

Հայկական խորհրդային հան-  
րագիտարանի գլխավոր խմբա-  
գրությունը առաջիկա տարիներին  
լույս կընծայի քառահատոր «Հայ-  
կական համառոտ հանրագիտա-  
րանը», «Երևան», «Տնային տըն-  
տեսության հանրագիտարան»,  
«Հայաստանի բնությունը», «Բը-  
ժըշկական հանրամատչելի հան-  
րագիտարան», «Հայ գրականու-  
թյան և արվեստի հանրագիտա-  
րան», «Հայկական հանրագի-  
տական բառարան», «Հայկական  
փիլիսոփայական հանրագիտա-  
րան» և ուրիշ գրքեր:

### ՀԱՅԿԱԿԱՆ ԽՐԱՏԱՆԻ

*Չհասկացված մահը մահ է, հաս-  
կացված մահը՝ անմահություն:*

Եղիշե

*Ճշմարիտ լույս բովանդակող գիր-  
քը ավելի քաղցր է իմացական  
քիմքի, քան մեղրը բերանի հա-  
մար:*

Գրիգոր Մագիստրոս Պահլավունի

*Այն ազգը, որը պատմություն  
չուճի, իր անցյալի մասին լուսա-  
վոր և պայծառ գիտակցություն,  
ապագա ունենալ չի կարող:*

Գարեգին Հովսեփյան

### ՀԱՅԵՐԵՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԸ

Մանկական հանրագիտարան  
հրատարակելու փորձեր արել են  
ևսև մեր հները: Չի հաջողվել:  
Մեզ է հասել լույս չտեսած հայ-  
կական մանկական հանրագիտա-  
րանի նշանաբանը. «Մանուկների  
համար գրված գրքից պիտի լույս  
ու ժպիտ ճառագայթի»:

Առաջնորդվելով հենց այդ նշա-  
նաբանով՝ Հայկական խորհրդա-  
յին հանրագիտարանի գլխավոր  
խմբագրությունը 1984—87 թվա-  
կաններին լույս ընծայեց «Ընչ է.  
Ով է» մանկական հանրագիտա-  
րանի 4 հատորը՝ յուրաքանչյու-  
րը 100 հազար տպաքանակով:

«Ընչ է. Ով է» հայերեն ման-  
կական հանրագիտարանը թարգ-  
մանությունն է կրտսեր տարիքի  
դպրոցականների համար նախա-  
տեսված ռուսերեն համանուն  
հանրագիտարանի, որը 1975—78  
թվականներին լույս է ընծայել  
«Պեդագոգիկա» հրատարակչու-  
թյունը, Մոսկվայում: Բայց հայե-  
րեն հրատարակությունը զուտ  
թարգմանություն չէ: Այստեղ ընդ-  
գրկված է բավականին լայնա-  
ծավալ հայկական նյութ: Զրույց-  
ներ կան Խորհրդային Հայաս-  
տանի, նրա բնաշխարհի, ծաղկող  
քաղաքների, հայ ժողովրդի դա-  
րավոր անցյալի, նրա մաքառում-  
ների ու հերոսամարտերի, կարե-  
վոր իրադարձությունների, գի-

տութեան, մշակութի ու գրականութեան հայ ականավոր դեմքերի, հայ հեղափոխական գործիչների, մեր հանրապետութեան խոշոր նվաճումների, աշխարհով մեկ սփռված հայ գաղթավայրերի մասին:

Մանկական հանրագիտարանը ստեղծվել է սիրով ու մեծ պատասխանատվությամբ: Ե՛վ ինքնուրույն, և՛ թարգմանական նյութերը շարադրված են մանուկների համար մատչելի լեզվով ու շքեղ պատկերազարդումով:

Հայկական խորհրդային հանրագիտարանի գլխավոր խմբագրությունը առաջիկա տարիներին կիրատարակի մանկական մի նոր հանրագիտարան՝ բաղկացած 8 հատորից:

## ՀԱՅ ՀԱՎԱՔԱՅՈՒՆԵՐ

Հավաքածու կազմելը հրապուրիչ զբաղմունք է: Աշխարհում ինչ տեսակ հավաքածու ասես, որ մարդիկ չեն կազմել: Մեկը հավաքյալ գրքեր է հավաքում, մյուսը՝ թանկարժեք նկարներ, երրորդը՝ հին դրամներ: Կան նաև ծովի խեցիներ, դրոշմանիշեր, զանգեր, դանակներ, ժամացույցներ, սեղաններ, ինքնաեռներ, գդալներ, զենքի տարբեր տեսակներ, ջահեր, գոտիներ, ծխամորձեր, գինիներ ու կոնյակներ, ծովաքարեր, սանդեր, զամբյուղ-

ներ, սկահակներ, օճառներ, բաժակներ, կրծքանշաններ, ինքնահոսներ, նույնիսկ ջրաղացքարեր, հին ավտոմեքենաներ հավաքողներ:

Մարդիկ հավաքածուներ են կազմել հնագույն ժամանակներից սկսած:

Հավաքածու կազմելը բուռն նախասիրության արդյունք է: Միատեսակ առարկաներ հավաքողը ընդլայնում է իր աշխարհաճանաչողությունը, գիտելիքներն այդ առարկայի մասին: Հավաքորդները միաժամանակ ոչնչացումից ու մոռացումից փրկում են այնպիսի արժեքներ, որոնք մարդկային քաղաքակրթության մեջ և բնության հրաշալիքների շարքում կարևոր օղակ են կազմում: Վերջին հաշվով աշխարհի բոլոր թանգարաններն էլ յուրատեսակ հավաքածուներ են:

Հավաքածու են կազմել նաև մեր հները: Դեռևս մեր թվականությունից առաջ 6—1-ին դարերում հայոց երվանդունի և Արտաշեսյան գահատոհմերի յուրաքանչյուր թագավոր իր պալատում պահում էր նախնիների մոմաքանդակները կամ նրանց հուշարձանների առանձին պանթեոն էր սարքում, ուր իրենց բնական չափերով կարելի էր տեսնել թագավորի հորը, պապին, ապուպայերին: Դրանք ինքնատիպ հավաքածուներ էին, որոնցից բեկորներ են հասել մեզ:

Սրջսահարում հարուստ հայերը մագաղաթյա ձեռագիր էին գնում և հպարտանում իրենց մատյանների հավաքածուներով: Հաճախ նրանք մեծ փրկագին էին տալիս և ձեռք բերում ավարի մատնված հայերեն ձեռագրեր: Այդպիսի մատյաններ շատ կան Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում:

Այնուամենայնիվ, հին հայ հավաքողների մասին պահպանված տեղեկությունները շատ կըցկտուր են:

19-րդ դարում հավաքածու կազմելը լայն տարածում գտավ աշխարհի բոլոր կողմերում: Սկսեցին հավաքածու կազմել նաև հայ մտավորականներից շատերը:

Ուշագրավ է եղել մեծանուն վիպասան Բաֆֆու հնագիտական հավաքածուն: Իր ճանապարհորդությունների ընթացքում Բաֆֆին հավաքել է հայկական, պարսկական, հունական, հռոմեական, բյուզանդական երեք հազարի հասնող հավազյուտ հին դրամներ, նուրբ քանդակներ ու նկարներ, արժեքավոր ձեռագրեր: Վիպասանի մահից հետո նրա այրին՝ Աննա Բաֆֆին, ամուսնու հնագիտական հավաքածուի դրամները 1896 թվականին տանում է Պետերբուրգ՝ ծախելու: Այստեղ նրան հայտնում են, որ դրամների այդ հավաքածուին ավելի մեծ գին կտան Լոնդոնում: Եվ ահա Աննա Բաֆֆին գնում

է Անգլիա: Բայց այստեղ կատարվում է ցավալի իրողությունը: Լոնդոնի ճարպիկ գրպանահատները գողանում են տիպիկ Աննայի հանդերձի մեջ կարված դրամները: Աննա Բաֆֆու բողոքը անգլիական ոստիկանությանը՝ արդյունք չի տալիս, գողերը չեն գտնվում: Այդպես էլ անհայտանում է նշանավոր գրողի հնագույն դրամների մեծարժեք ընտրանին:

Ջանազան իրեր հավաքելու սեր է ունեցել հանճարեղ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը: Նա հավաքել է գայլերի, շների, արջերի, աղվեսների և ուրիշ կենդանիների փոքրիկ արձանիկներ: Նա սիրում էր դրանք դասավորել սեղանի վրա և իր սքանչելի հեքիաթներն ու պատմվածքները գրելու ժամանակ նայել դրանց: Թումանյանն ուներ նաև հայկական դրոշմանիշերի ու գեղեցիկ ծաղկամանների հավաքածուներ:

Արձակագիր Մկրտիչ Արմենը սիրում էր լուցկու պիտակներ հավաքել: Նրա հավաքածուում կար 840 լուցկու պիտակ, որով կարելի էր մի ամբողջ ուսումնասիրություն գրել 20-րդ դարում լուցկի արտադրող քաղաքների ու առանձին ձեռնարկությունների մասին:

Գրականագետ ու արվեստաբան, Հայկական ԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Ռուբեն Զարյանը 1944

թվականին ձեռք բերեց Ստեփան Աղաջանյանի «Իմ բակը» նկարը, որը դարձավ նրա հավաքածուի հիմքը: Անցած 46 տարում նա հավաքել է 100-ից ավելի նկար, որոնց մեջ են Վարդգես Սուրենյանցի, Էդգար Շահինի, Եղիշե Թաղևադյանի, Մարտիրոս Սարյանի, Երվանդ Քոչարի, Մինաս Ավետիսյանի, Հարություն Կալենցի, Ռիշար Ժերանյանի և ուրիշ նշանավոր արվեստագետների կտավները:

1957 թվականից նամականիշեր է հավաքում արձակագիր Վահագն Գրիգորյանը: Նրա հավաքածուում կա հայկական և անգլիական 10 հազարից ավելի նամականիշ: Այդ հավաքածուից կարելի է իմանալ, որ աշխարհում առաջին դրոշմանիշը թողարկվել է 1840 թվականին: Մինչև հիմա թողարկվել է անգլիական ընդամենը 900 նամականիշ: Ներկայումս աշխարհի ուրիշ երկրներում տարեկան թողարկվում է մի քանի տասնյակ, հաճախ էլ հարյուրից ավելի նամականիշեր: Իսկ Անգլիայում տարեկան թողարկվում է ընդամենը մի քանի նամականիշ, որով ասես հաստատվում է անգլիական պահպանողական դիմագիծը:

Գրականագետ Գառնիկ Անանյանը հավաքում է Եղիշե Չարենցի երկերի հայերեն և օտար լեզուներով լույս տեսած բոլոր գրքերը: Հետաքրքրական է նաև

գրականագետ Պիոն Հակոբյանի հավաքածուն: Նա հավաքել է Խաչատուր Աբովյանի երկերի հայերեն և այլ լեզուներով բոլոր հրատարակությունները՝ մոտ 300 գիրք: Դա կարելի է անվանել արժանական գրադարան:

Դերասան ու ռեժիսոր Սերգեյ Մնացականի Առաքելյանը 1963 թվականից սկսել է հավաքել Սայաթ-Նովայի կյանքն ու ստեղծագործությունն արտացոլող նյութեր, որոնց թիվը հասել է 20.000-ի: Դրանք ցուցադրվել են Երևանում ու Մոսկվայում:

Նոր տարվա հայերեն շնորհավորագրեր է հավաքում մատենագետ, Երևանի Ա. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի աշխատակցուհի Նինել Ոսկանյանը: Այդ շնորհավորագրերում մեկտեղված են Նոր տարվա առթիվ հայկական հին ու նոր ժամանակների բազմաթիվ մաղթանքներ: Անցած 40 տարում Նինել Ոսկանյանը հավաքել է բոլոր մայրցամաքներում տպագրված 2 հազարից ավելի հայերեն շնորհավորագրեր:

Շատ հավաքողներ կան նաև սփյուռքում: Նրանցից ոմանք իրենց հավաքածուները նվիրում են Խորհրդային Հայաստանի թանգարաններին, գիտական և ուսումնական հաստատություններին: Դա հայրենասիրության պայծառ դրսևորում է: Նյույորքաբնակ գորգավաճառ Հարություն

Հազարյանը երկար տարիներ հավաքել է հայերեն ձեռագիր մատյաններ: Մահից մի քանի տարի առաջ նա իր ամբողջ հավաքածուն, որ կազմում էր 397 ձեռագիր մատյան, նվիրել է Երեվանի Մաշտոցի անվան Մատենադարանին: Հնամյա ձեռագրերի իր ընտիր հավաքածուն, որ կազմում է 175 մատյան, հայրենիքին է նվիրել նաև սիրիահայ Վարուժան Սալթյանը: Դրանք հայ մշակույթի թանկարժեք մասունքներ են, որոնցով հարստացել է հայկական ձեռագրերի աշխարհահռչակ հավաքատեղի-Մատենադարանը:

**ՀԱՅԵՐԵՆ  
ԱՄԵՆԱԵՐԿԱՐԱԿՅԱՑ  
ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ**

1843 թվականի մայիսից Վենետիկում սկսեց լույս տեսնել Վենետիկի Մխիթարյան միաբանության «Բազմավեպ» հայագիտական հանդեսը: Նրա հրատարակությունը առանց ընդմիջման շարունակվում է ցայսօր: «Բազմավեպը» հայերեն ամենաերկարակյաց պարբերականն է:

**ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՈՐԱՍԵՂՄԵՐԸ**

Հին Հայաստանը հարուստ էր բազմատեսակ կենդանիներով ու թռչուններով և համարվում էր

աստվածային որսատեղի: Սակայն որսորդությունը հիմնականում արքաների ու իշխանների մենաշնորհն էր: Հայկական լեռնաշխարհի ընտիր որսատեղիները միշտ էլ եղել են իշխողների սեփականությունը: Որսատեղիները ոչ միայն զվարճավայրեր էին, այլև զինավարժարաններ: Եվ պատահական չէ, որ հին Հայաստանի բոլոր մայրաքաղաքների, հայկական բանակատեղիների և արքունական ոստանների մոտ եղել են որսատեղիներ:

Իրենց զվարճանքին պաշտոնական բնույթ տալու համար արքաներն ստեղծել են առանձին նախարարություններ, որոնց պարտականությունն էր պաշտպանել որսատեղիները և արքաների որսի համար պատրաստել ամեն բան: Պատմահայր Մովսես Խորենացին գրում է, որ Հայոց Վաղարշակ թագավորը Գառնիկի զավակներից Դատին նշանակում է արքունական որսերի վերակացու: Այս Դատի որդին, որի անունը Վարաժ էր, և որը, պատմիչի հավաստմամբ, եղջերուների, այծյամների ու վարազների որսերում հաջողակ էր ու քաջ նետաձիգ, Արտաշես արքայի ժամանակ նշանակվում է հոր պաշտոնին, արքան նրան պարգևում է մի քանի գյուղ, որոնք գտնվում էին Հրազդան գետի ափերին: Հենց այս Վարաժից էլ հետագայում առաջանում է Վա-



րաժնունյաց տոհմը, որի անունով էլ կոչվում է Վարաժնունիք գավառը: Սա վկայում է, որ արքունական որսերի վերակացուն դառնում է ժառանգական պաշտոն: Որսորդության հետ կապված հին հայկական նախարարական տներից էին Սպանդունիներն ու Հավունիները: Առաջիններն այդպես են կոչվել սպանդանոցների վերակացու լինելու պատճառով, իսկ Հավունիները բազեակիրներ և բազե բռնողներ էին, որոնք պարտավոր էին արքաների համար որսկան բազեներ վարժեցնել: Գրաբարում հավ նշանակել է թռչուն, դրա համար էլ թռչուններով զբաղվողներին անվանել են Հավունիներ: Վերջիններս վարժեցնում էին նաև որսկան շներ, քերծեներ, որոնց մեր նախնիներն անվանում էին բարակներ: Արքունական որսերի վերակացուներ էին նաև Ալկունիները, որոնց նախարարական տիրույթը Տարոնում էր: Սրանք պարտավոր էին արքաների համար ջուշեր՝ արու այծեր որսալ:

Մնչպես ուրիշ երկրներում, Հայաստանում նույնպես որսատեղիները եղել են դավադրության օրջեր: Այսպես, Մովսես Խորենացին գրում է, որ նույն Ալկունիները ապստամբում են Հայոց թագավորի դեմ: Եվ ահա Մամիկոնյան տոհմի նախնին՝ Մամգունը, իր աղխով գնում է Տարոնի կողմերը, արժանանում Ալկունիների

վստահությանը և որսի ժամանակ սպանում ապստամբին՝ որպես վարձատրություն ստանալով Ալկունիների ժառանգական կավածքը:

Հայտնի է, որ Շահապիվանը եղել է հայ Արշակունի թագավորների բուն բանակատեղին, որի մոտ կային ձիարշավարան և որսատեղի: Հենց այստեղ, Լսին կոչվող լեռան մոտ, Արշակ Բ թագավորը որսի ժամանակ դավադրաբար սպանել է տալիս Գնել արքայազնին և տիրանում նրա գեղեցկուհի կնոջը՝ Փառանձեմին:

Սրբազան որսատեղիներ են համարվել Մասիսի լանջերը, ուր կարող էին որս անել միայն արքաներն ու արքայազունները: Քերթողահայրն ասում է, որ Արտաշես Առաջին արքայի մահվան ժամանակ, հեթանոսական սովորությամբ, շատ ինքնասպանություններ են լինում: Սրա վրա, ինչպես ասում են Գողթան գուսանները, Արտաշեսի որդի Արտավազդը նեղանում է և հորն ասում.

Երբ դու գնացիր

Ու բոլոր երկիրը քեզ հետ  
տարար,

Ես այս ավերակների վրա  
Մնչպես թագավորեմ:

Սրա համար Արտաշեսը նրան անիծելով ասում է.

Թե դու հեծնես որսի գնաս  
Ազատն ի վեր, դեպի Մասիս,

Քաջքերը քեզ բռնեն տանեն  
Ազատն ի վեր, դեպի Մասիս.  
Այնտեղ մնաս, լույս չտես-  
նես:

Արտաշեսից հետո թագավոր  
դարձած Արտավազը երկար չի  
ապրում: Հոր անեծքը իբր կա-  
տարվում է: Մի անգամ Մասիսի  
լանջին, Գինա գետակի ակունք-  
ների մոտ, կինձեր և վայրի էշեր  
որսալիս, նա ցնորվում է, ձիուց  
վայր ընկնում և խորասուզվում  
ու անհետանում ամեհի վիհի մեջ:

Սրբազան որսատեղի է եղել  
նաև Մասիս լեռան ստորոտնե-  
րում գտնվող Փռռական Շեմա-  
կաց կոչվող դաշտը, որի մասին  
հիշատակում է Ագաթանգեղոսը:  
Ստուգապես հայտնի չէ այս վայրի  
տեղադրությունը: Որոշ ուսումնա-  
սիրողների կարծիքով այն կապ  
ունի Փռռախոտ ավանի հետ,  
որ կառուցել է Ամասիայի որդի  
Փռռոխը Մասիս լեռան մոտ:

Հայ Արշակունիների սիրած որ-  
սատեղիներից էր Կոզովիտ գա-  
վառը, որը գտնվում էր Մասիսի  
թիկունքում: Այս գավառի Դա-  
րոյնք կոչվող բերդի մոտ, բարձ-  
րաբերձ ժայռի վրա, պահպանվել  
է մի հնագույն խորաքանդակ, որ  
պատկերում է սաղավարտաձև  
խույրերով երկու քուրմի, նրանց  
միջև՝ նվիրական մի եղջերու:  
Կոզովիտի Գայլատու ծովակը,  
մյուս լճերը, եղեգնուտներն ու  
ճահճուտները մի ժամանակ հա-

րուստ են եղել կռուկներով,  
կարապներով, արագիլներով ու  
բադերով: Այս գավառի գովական  
որսատեղիներից էր Եղջուրներ  
անունով լեռը: Այդպես է կոչվել  
եղջերվաձև ցցված ժայռերի պատ-  
ճառով: Ավանդությունն ասում է,  
որ դրանք եղջերուներ են եղել,  
որոնք որսորդներից հալածվելով  
վախից քարացել են տեղում:

Հին Հայաստանի ամենամեծ ու  
անզուգական որսատեղին, իհար-  
կե, Արարատյան դաշտն էր, որի  
պերճ ու հանգամանալից նկա-  
րագիրը տվել է պատմիչ Դազար  
Փարպեցին. «Երկիրը, հուրախու-  
թյուն և ի զվարճություն որսա-  
տենչ ազատների, իր մեջ անա-  
պական ջրերով սնում է բազմա-  
տեսակ թռչուններ՝ կաղկաղող ու  
քաղցրաձայն, առապարասեր, վի-  
մասույզ կաքավների ու սալամբ-  
ների երամներ, և կամ եղեգնա-  
բնակ, թփերում ու մացառներում  
թաք կացող պարարտամարմին,  
անուշահամ վայրի տեսակն ա-  
քարների, այլև ջրասուզակ, մամ-  
ռասեր, խոզակեր մեծամարմին  
թռչուններ, փորը, թանձրն ու  
սագը, և այլազան, անթիվ-ան-  
համար ցամաքային ու ջրային  
թռչունների բազմություններ»:

Հայաստանի նշանավոր որսա-  
տեղիներից էր Մենդոց անտառը,  
որ Ախուրյան գետի ափին, Բա-  
զարան քաղաքի մոտ հիմնել է  
Երվանդ Դ Վերջին հայ թագա-  
վորը մեր թվականությունից ա-

ոաջ 3-րդ դարի վերջին: Այս անտառը, որ հեթանոսական գուշակարան ու որսատեղի էր, լիքն է եղել այծյամներով, եղնիկներով, ցիռերով ու վարազներով:

Փռաբանված է եղել Խոսրովի անտառը, որն այժմ դարձել է Խորհրդային Հայաստանի բուսական ու կենդանական եզակի թանգարան: Այն տնկել է տվել Խոսրով Բ Կոտակ հայ թագավորը մոտ 330 թվականին: Այս անտառի մի մասը գտնվում էր Արարատյան դաշտում, Արաքս գետի ափերին և Արտաշատ ու Դվին քաղաքների շրջակայքում: Անտառն սկսվում էր Դվին քաղաքին մերձ Տիկնուռի պալատից և Ազատ (Գռանի) գետի ափերով բարձրանալով հասնում էր մինչև Գռանի ամրոցը: Ժամանակին պարսպապատված այս անտառը լցված է եղել որսի բազմատեսակ կենդանիներով: Խոսրովի անտառի տնկումը արքան հանձնարարել էր Վաչե զորավարին: Սա նշանակում է, որ հին Հայաստանում որսատեղի պատրաստելը ռազմական նշանակություն է ունեցել: Որսն էլ, ի վերջո, յուրովի գինավարժություն է:

Անանիա Շիրակացու խրախճանականներից մեկում խոսվում է այն մասին, որ Արաքս գետում բռնված ձուկը կշռում է 240 լիտր (այժմյան չափերով՝ մոտ 80 կիլոգրամ): Սա վկայում է, որ հնում Արաքս գետում բավական

մեծ ձկներ են եղել: Նույն Անանիա Շիրակացին գրում է, որ Արաքսի վտակ Ախուրյան գետում ձուկ էին որսում այնպիսի ուսկաններով, որոնցից յուրաքանչյուրի թարփի մեջ ընկնում էր 45—50 ձուկ: Սա ապացույց է, որ վաղնջագույն ժամանակներից Հայաստանում զարգացած է եղել ձկնորսությունը: Քարփղ լայն բերանով ու շատ նեղ տակով կողով է՝ ձուկ բռնելու համար, որ Շիրակացու ժամանակներից մինչև հիմա համարյա մնացել է նույնը:

Վանա լճի ափին էր գտնվում Առեստ ավանի արքունի ձկնորսարանը: Սա հայ Արշակունի թագավորների սեփականությունն էր, որոնք որոշ տուրք էին ստանում այստեղ որևէ մեկին որսի իրավունք տալու համար: Առեստ ձկնորսարանի մասին հիշատակում է Փավստոս Բուզանդը: Որսը կատարվում էր Առեստ ավանի մոտով հոսող Առեստ (հետագայում կոչվել է Բերկրի) գետում: Այստեղ մեծ քանակությամբ տանեխ էին բռնում, չորացնում ու վաճառքի հանում: Փավստոս Բուզանդը գովասանքով է խոսում նաև Մեծ Ծովքի Մամբրե կոչվող վայրում գտնվող Մամուշեղ ձկնառատ գետի մասին:

Հայաստանի հնադարյան որսատեղիներից է Արտենի լեռը, որը գտնվում է Արագածի հարավարևմտյան ստորոտին: Այս լեռան

վրա, գլխավորապես Սատանի դար, Արեգունի և Հարավային բլուրներում, հայտնաբերվել են ԽՍՀՄ-ում ամենահին քարեդարյան կայանների մնացորդներ: Այստեղի գտածոները հաստատում են, որ սա աշխարհի հնագույն որսատեղիներից է: Այս լեռն իր շրջակայքով 7-րդ դարում Շիրակի և Արշարունիքի տեր Ներսես Կամսարականի տիրույթ-որսատեղին էր: Անանիա Շիրակացին գրում է, որ այս լեռան բոլորքը լիքն էին լինում ցիռերով՝ վայրի էշերով: Մի որսի ժամանակ Ներսես Կամսարականին հանդիպում է 2160 ցիռ, որից որսորդները միայն նիզակով ըսպանում են 360-ը:

Հրաշալի որսատեղիներ են ունեցել Կասպուրականի Արծրունի թագավորները: Թովմա Արծրունին գրում է, որ Գագիկ Արծրունին ձվաշոտ գավառի Գետն կոչվող ավանում կառուցել է մի վայելուչ խրախճանատեղի-որսարան, որի շրջակայքը լիքն էր վայրի խոզերի հոտերով և ցիռերի երամակներով:

Մեր պատմիչները շքեղ որսատեղիներ են համարել Տուրուբերան նահանգի Ապահունիք գավառի Սիփան լեռան լանջերը, այս կողմերում գտնվող Աղիորսք քաղաքի մոտերքը, Տայքի Պարխար լեռները, Ռսիքի Խաղխաղ քաղաքի մոտի արքունական ձմեռանոցը, Սյունիքի Նակորգան ա-

վանը, որ գտնվում էր Արաքս գետի ափին: Իսկ Կարնո աշխարհի մասին Մովսես Խորենացին ոգևորված գրել է. «Այստեղ անհաշիվ քանակությամբ ձկներ են լինում և զանազան տեսակ թռչուններ, որոնք սնվում էին այստեղ, որոնց ձվերով միայն կերակրվում էին բնակիչները: Լեռները լիքն են կճղակաբաշխ և որոճող երեներով»:

Հետագա դարերում հայկական որսատեղիները ոտքի կոխան դարձան օտար նվաճողների համար: Ասպատակողները հոշոտեցին հայոց պերճ բնությունը: Հայկական լեռնաշխարհի կենդանական շատ ներկայացուցիչներ իսպառ վերացան:

Խորհրդային Հայաստանում այժմ պետական հոգատարություն է տարվում բոլոր որսատեղիների հանդեպ: Հանրապետությունում արգելված է հազվագյուտ կենդանիների ու թռչունների որսը: Իսկ ընդհանրապես որսն այնպես է կազմակերպվում, որ նրանից չտուժի հայրենի բնությունը:

## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՐԱՏԱՆԻ

Վախը թերահավատության նըշան է:

եղիշե

Ճարտասանությունը համոզելու արվեստ է:

Դավիթ Անհաղթ

**Չկա ոչինչ, որ կարելի չլինի  
բացատրել և չկա ոչինչ, որ ան-  
մատչելի լինի բանականությանը:**

**Անանիա Շիրակացի**

**Անհրաժեշտ է հոգու աչքերով  
շրջահայաց լինել և ծառայել ժա-  
մանակին:**

**Գրիգոր Մագիստրոս Պառլամունի**

Մարդ կա՝ ելել է շալակն աշխարհի,  
Մարդ կա՝ աշխարհն է շալակած տանում:

Պարույր Սևակ

## ՀՈԿՏԵՄԲԵՐ

|            |   |    |    |    |    |
|------------|---|----|----|----|----|
| ԵՐԿՈՒՇԱԲԹԻ | 1 | 8  | 15 | 22 | 29 |
| ԵՐԵՔՇԱԲԹԻ  | 2 | 9  | 16 | 23 | 30 |
| ՉՈՐԵՔՇԱԲԹԻ | 3 | 10 | 17 | 24 | 31 |
| ՀԻՆԳՇԱԲԹԻ  | 4 | 11 | 18 | 25 |    |
| ՈՒՐԲԱԹ     | 5 | 12 | 19 | 26 |    |
| ՇԱԲԱԹ      | 6 | 13 | 20 | 27 |    |
| ԿԻՐԱԿԻ     | 7 | 14 | 21 | 28 |    |

### ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԱԿԱՆ ՀԱՊՈՒՅՆ ՏՄԵՐԸ

Յուրաքանչյուր տոն տվյալ ժողովրդի կենսագրության մի էջն է, պատմության մասնիկը, խառնվածքի ինքնատիպ դրսևվորումը: Վաղնջագույն տոները բանավոր ամենամեծ ստեղծագործություններն են, որ փոխանցվում են սերնդեսերունդ, դարից դար:

Զարմանալի ճակատագիր ունեն ժողովրդական տոները: Նըրանց մի մասը մոռացության է տրվում ժամանակի հետ, մյուս մասը մնում է մշտապես երիտասարդ, թարմ, ամեն տարի վերածնվող: Ցավոք, այդպիսի քնակալնոն կյանք չեն ունեցել հայկա-

կան ժողովրդական տոները: Հազար տառապանք տեսած հայը հարկադրված է եղել պատմության ճամփեզրերին թողնել ամեն տեսակ գանձ, այդ թվում և իր հոգու կերտվածք տոներից շատերը: Հավանաբար, աշխարհի ոչ մի անկյուն այնքան շատ ու արնածարավ զավթիչ չի տեսել, որքան Հայաստանը: Այդ պատճառով էլ եղծվել են երկրի տեսքըն ու հայկյան ոգին, ժայռերի ծերպերում մարել ու մուռնջ են դարձել հայերենականչ շատ տոների վերջին ցնծաճիչերը:

Մենք մի կերպ պահել ենք քիչը: Դրա մեջ մեծը մնում է Լավասարդյան տոնը, որով մեր նախնիները դիմավորում էին Նոր տարին: Հայկական այդ հնաբուն

տոնը տևում էր մի քանի օր, որի ժամանակ կազմակերպվում էին երգեր ու պարեր, ժողովրդական կամ գուսանական թատերախաղեր, մարմնամարզական մրցումներ, ձիարշավներ, ցլամարտեր, գինարբուք-խրախճանքներ, գուշակություններ, զոհեր էին մատուցում աստվածներին: Նավասարդյան տոնախմբությունների ժամանակ հայերը սովորություն են ունեցել դիմակ գործածել: Տոնն ավելի պերճաշուք ու հանդիսավոր էր անցնում Արածանի գետի ափին, Բագրեվանդ գավառում, Նպատ լեռան փեշերին: Ամեն գավառ նույն օրերին մի առանձին շուքով էր նշում տոնը, որով այն դառնում էր համահայաստանյան: Ամենևին էլ պատահական չէ, որ 11-րդ դարի մեծ մտածող Գրիգոր Մագիստրոս Պահլավունին գրի է առել հայ քնարերգության ընտիր տողափունջը, որը Նավասարդյան տոների անզուգական փառաբանություն է.

Ո՛ տայր ինձ զծուխ ծխանի,  
եւ զառաւօտն Նաւասարդի.

Զվագելն եղանց և զվագելն եղ-  
ջերուաց.

Մէք փող հարուաք և թմբկի հար-  
կանեաք,

Որպէս օրէնն է թագաւորաց:

Սկզբնական շրջանում Նավասարդյան տոնի մաս էր կազմում ջրախաղը՝ իրար վրա ջուր լըց-

նելը: Հետագայում այն բեկվեց Նավասարդյան տոնից և Վարդավառ անունով կապվեց Աստղիկ ու Անահիտ աստվածուհիների հետ:

Անհիշելի ժամանակներից մեր նախնիք պաշտել են ծառն ու անտառը: Այդ պաշտամունքի հետ են կապված ժողովրդական մի քանի տոներ, որոնցից մեկն է ծաղկազարդը: Ծառապաշտության մնացորդ է տոնածառը, որի սովորությունը գալիս է հեթանոսական ժամանակներից: Ծառապաշտության հետ է կապված նաև ձու ներկելու սովորությունը: Ձուն միշտ էլ եղել է գարնան, պտղաբերության, հարության, վերածննդի խորհրդանիշը, որովհետև իր մեջ պարունակում է կյանքի նոր սերմը: Որպես ուրախության նշան մեր նախնիք ձուն ներկել են որդան կարմիրով: Չվի ներկումը հեթանոսական սովորություն է, որ հետագայում դարձել է քրիստոնեական Զատիկի մենաշնորհը: Այժմ Զատիկը տոնում են մարտի 21-ից մինչև ապրիլի 26-ը, շարժական 35 օրերի միջև: Հնում ծառատունկը կատարել են հենց այդ օրերին:

Տոներին անդրադառնալիս պիտի առաջնորդվել հետևյալ սկզբունքով. յուրաքանչյուր ժողովրդական տոն եղել է իր դարաշրջանի անդրադարձը և նոր ժամանակներում իմաստ չունի մտահոգվել բոլոր տոները վերա-

կանգնելու մասին: Պիտի հարա-  
տև դարձնել միայն այն տոները,  
որոնց ենթաշերտում այսօրվա  
մարդու հոգու հետ խոսող բան  
կա, և որով մենք կապվում ենք  
մեր պատմությանը, մեր արմատ-  
ներին:

## **ՀԱՅԵՐԵՆ ՏՊԱԳԻՐ ԳՐԶԵՐԻ ԱՄԵՆԱՀԱՐՈՒՍ ՉԳՐԱԴԱՀՈՅԸ**

Երևանի Ա. Մյասնիկյանի ան-  
վան հանրապետական (հանրա-  
յին) գրադարանը հայերեն տպա-  
գիր խոսքի ամենահարուստ գրա-  
պահոցն է աշխարհում, հանրապե-  
տության խոշորագույն գրադա-  
րանը, գրադարանագիտության,  
մատենագիտության, գրքի պատ-  
մության գիտահետազոտական  
հաստատություն և Հայաստանի  
գրադարանային ցանցի մեթոդա-  
կան աշխատանքների ու հանձ-  
նարարական մատենագիտու-  
թյան կենտրոն: Հիմնադրվել է  
Երևանի գավառական ուսումնա-  
րանի (1832), հետագայում արա-  
կան գիմնազիայի (1881) գրա-  
դարանների 18 հազար միավոր  
գրքային ֆոնդերի հիմքի վրա:  
ՀԽՍՀ ժողկոմխորհի 1921 թվա-  
կանի մայիսի 11-ի որոշմամբ այդ  
գրադարանի հիմքի վրա կազմա-  
վորվել է հանրապետական (հան-  
րային) գրադարանը, որի պաշտո-  
նական բացումը տեղի է ունեցել  
1922 թվականի նոյեմբերի 7-ին:

Հանրապետական գրադարանը  
1925 թվականից կրում է Ալեք-  
սանդր Մյասնիկյանի անունը:  
1922 թվականին գրադարանն  
ունեւր 40 հազար միավոր գրքային  
ֆոնդ: Այժմ գրադարանի գրքերի  
թիվն անցնում է 7 միլիոնից:

## **ՀԱՅԿԱԿԱՆ ԽՐԱՏԱՆԻ**

*Հայաստանը լուկ բարիք ու  
հանճարեղ միտք է արտամուծել,  
բայց ոչ բռնություն:*

Վարդան Հացունի  
(բանասեր, 1870—1944)

*Մենք արվեստի ճամփաներով  
հեռուներ գնալու դեռ շատ տեղեր  
ունենք:*

Սիրարփի Տեր-Ներսեսյան  
(արվեստաբան, ՀԽՍՀ ԳԱ արտասահմանյան անդամ)

*Ահա մենք կուզանք, ուսով հրելով  
Մեր ցավին անիվը դարահողով:*

Ռուբեն Սևակ

## **ԽՈՋԻՎԱՆՔ**

Խորհրդային Վրաստանի մայ-  
րաքաղաք Թբիլիսիի տեսարժան  
վայրերից մեկը Հայ մշակույթի  
գործիչների պանթեոնն է: Հնում  
այն կոչվել է Խոջիվանք: Գըտ-  
նըվում է Թբիլիսիի հյուսիսային  
մասում՝ Մախաթ սարի ստորո-



տին: Այդ տեղամասը շատ հին ժամանակներից պատկանել է 17-րդ դարի Վրաց թագավոր Ռուստոմի գանձապետ հայ Աշխարբեկ Բեհբուլայանի նախնիներին և եղել Բեհբուլայանների տոհմական գերեզմանատունը: Վրաց Ռուստոմ թագավորը բարձր է գնահատել Աշխարբեկ Բեհբուլայանի նվիրված և ազնիվ ծառայությունը և նրան կոչել է խոջա Բեհբուլ, այսինքն՝ մեծ Բեհբուլ: Վրաց թագավորը հայ արքունականին իրավունք է տվել ընդարձակել իր նախնիների գերեզմանատունը: Աշխարբեկ Բեհբուլայանը խողովակներով ջուր է բարձրացրել այդ տեղամասը, ծառեր տնկել այնտեղ և 1654 թվականին գերեզմանատանը կառուցել Սուրբ Աստվածածին եկեղեցին, որին ժողովուրդը տվել է Խոջի վանք, այսինքն՝ խոջա Բեհբուլի շինած վանք անունը: Խոջի վանք, Խոջի վանք ասելով՝ հետագայում ամբողջ գերեզմանատունը կոչվեց Խոջիվանք:

1930-ական թվականներին Խոջիվանքի գերեզմանատունը փակվեց, 1938 թվականից այն կոչվեց Բարեկամության այգի: 1962 թվականի մարտի 17-ից կոչվում է Հայ մշակույթի գործիչների պանթոն: Այստեղ են թաղված հայ մշակույթի 34 գործիչներ: Նրանց թվում են.

Ախվերդյան Գևորգ Ախվերդիի (1818—1861), բանասեր, բժիշկ,

տնտեսագետ, հասարակական գործիչ, Սայաթ-Նովայի երգերի հայտնաբերողն ու հրատարակողը:

Աղայան Ղազարոս Ստեփանոսի (1840—1911), բանաստեղծ, արձակագիր, հրապարակախոս, մանկավարժ:

Արծրունի Գրիգոր Երեմիայի (1845—1892), հրապարակախոս, քննադատ, գրական-հասարակական գործիչ, «Մշակ» թերթի խմբագիր:

Եկմայան Մակար Գրիգորի (1856—1905), կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ:

Երիցյան Ալեքսանդր Դավթի (1841—1902), պատմաբան, հնագետ:

Քումանյան Հովհաննես Թադևոսի (1869—1923), բանաստեղծ, արձակագիր, թարգմանիչ, գրական-հասարակական գործիչ: Խոջաբեկյան Վանո Գևորգի (1875—1922), նկարիչ:

Ծատուրյան Ալեքսանդր Հովսեփի (1865—1917), բանաստեղծ, թարգմանիչ:

Ծերենց (Հովսեփ Շիշմանյան, 1822—1888), արձակագիր, հրապարակախոս:

Հակոբյան Հակոբ Մնացականի (1866—1937), բանաստեղծ:

Հովնաթանյան Մկրտում (1779—1845/46), նկարիչ Հովնաթանյան տոհմից:

Մայսուրյան (Փուղինյան) Օլգա Միքայելի (1871—1931), դե-

րասանուհի, Վրացական ԽԱՀ վաստակավոր արտիստուհի:

Մուրացան (Գրիգոր Աստվածատուրի Տեր-Հովհաննիսյան, 1854—1908), արձակագիր, դրամատուրգ:

Լար-Պոս (Միքայել Ջաջարի Հովհաննիսյան, 1867 — 1933), արձակագիր:

Լերսիսյան (Լերսեսյան) Ստեփանոս Հակոբի (1815—1884), նկարիչ:

Պոռշյան Պերճ (Հովհաննես Ստեփանի Տեր-Առաքելյան, 1837—1907), արձակագիր, մանկավարժ:

Ջիվանի (Սերոբ Ստեփանի Լեվոնյան, 1846—1909), գուսան, ժողովրդական երգիչ:

Սունդուկյան Գաբրիել Մկրտումի (1825—1912), դրամատուրգ, հասարակական գործիչ:

Բաֆֆի (Հակոբ Մելիք-Հակոբյան, 1835—1888), արձակագիր:

Հայ մշակույթի գործիչների պանթեոնը հայկական սրբազան մի անկյուն է եղբայրական վրաց հողի վրա: Վերջին տարիներին Վրաստանի գրողների միության հայկական մասնաճյուղի նախաձեռնությամբ Բարեկամության այգի կոչվող Խոջիվանքում կազմակերպվում է մեծ հանդիսություն, որ կոչվում է Հիշատակի օր և նշվում է ամեն տարվա ապրիլի 13—14-ին: Այդ օրը Թբիլիսիի հայկական դպրոցների հարյուրավոր աշակերտներ, ուսու-

ցիչներ, ծնողներ, բանվորներ, մտավորականության ներկայացուցիչներ հարգանքի տուրք են մատուցում հայ գրականության ու մշակույթի երախտավորների հիշատակին, ծաղկեպսակներ դնում, արտասանում հայ գրողների արձակ ու չափածո գործերից: Խոջիվանքի այդ հանդիսություններին մասնակցում են նաև Թբիլիսիի Ստեփան Շահումյանի անվան հայկական պետական դրամատիկական թատրոնի դերասանները:

## ԱՐԱՐԱՏ ԼԵՈՒՆ ՏԱՐԻՔ

Գիտնականների հաշվումներով Արարատ լեռը մոտավորապես երեքուկես միլիոն տարեկան է: Մեծ ու Փոքր Մասիսները իրարից բաժանվում են երկրաբանական մի ամբողջ դարաշրջանով: Մեծ Մասիսը 3,5 միլիոն տարեկան է, իսկ Փոքր Մասիսը՝ ընդամենը 200 հազար տարեկան: Հետևաբար, Մեծ Մասիսը հազարամյակներ շարունակ եղել է առանձին:

## ԵՐԵՎԱՆԻ ԿՈՄԻՏԱԻ ԱՆՎԱՆ ԶԲՈՍԱՅԳՈՒ ՊԱԼՅԵՌԸ

Երևանի տեսարժան վայրերից է Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնը, որտեղ հանգչող հա-

յոց մեծերը ասես հավերժական գրույցի են բռնվել սաղարթախիտ ծառերի սոսափյունի հետ:

Հայ հանճարեղ երաժիշտ, ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիր Կոմիտասի աճյունը Փարիզից երևան բերվեց և 1936 թվականի մայիսի 28-ին թաղվեց այս այգում, որ հետագայում կոչվեց Կոմիտասի անունով: Դրանով ասես Խորհրդային Հայաստանի հողն ավելի քաղցրացավ ու սրբացավ աշխարհի բոլոր ծագերում սփռված հայերի համար: Ասես գողթանցի գուսանը տուն էր վերադարձել: Եվ դա այդպես էր: Վաղնջական ժամանակներից սկսած հայոց Գողթն գավառում այդպիսի մի սովորություն կար. գուսանները շրջում էին աշխարհով մեկ, տարիներով չէին լինում ծննդավայրում, բայց մահից առաջ տուն էին վերադառնում, որպեսզի իրենց մարմինը պահ տան ծննդավայրի հողին: Նա, ում բախտ չէր վիճակվում հոգին հայրենի հողում ավանդել, մահամերձ ժամանակ աղաչում էր, որ մերձավորներն իր դին ուղարկեն Գողթն:

Այս ավանդույթը հոգեհարազատ էր մեծ Կոմիտասին, որը թեև ծնվել էր հեռավոր Կուտինայում, բայց նրա երակներում Գողթնի արյուն էր հոսում, որովհետև պապերն այդ գավառի Տղնա գյուղից էին:

Կոմիտասի անվան զբոսայգին

1930-ական թվականներին եղել է Երևանի հին գերեզմանատներից մեկը: Հետագայում գերեզմանատան տեղը փոխվեց, և այդտեղ մնացին միայն Կոմիտասի ու մինչև 1936 թվականը մահացած մի բույլ գործիչների շիրիմները:

1936 թվականից հետո պանթեոնում շուրջ 20 տարի թաղում չի եղել: 1957 թվականին այնտեղ թաղվում է Ավետիք Խահակյանը: Այդ ժամանակվանից սկսած այգու այս հատվածը կոչվում է Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոն: Հայ քնարերգության լուսաշող անուններից մեկը՝ Վահան Տերյանը, մահացավ 1920 թվականին և թաղվեց հեռավոր Օրենբուրգ քաղաքում: Սակայն Վահան Տերյանի շիրմաքարի տեղը հայտնի չէ: Նրա մահից 50 տարի անց Օրենբուրգի քաղաքային գերեզմանատանից մի բուռ հող է բերվում Երևան և որպես Վահան Տերյանի խորհրդանշական աճյուն թաղվում Կոմիտասի անվան զբոսայգում:

1978 թվականին Մոսկվայում մահանում է Արամ Խաչատրյանը: Մահից առաջ նա խնդրում է, որ իրեն թաղեն Երևանում: Ինչ կարգարմանալու, չէ որ Արամ Խաչատրյանը նույնպես գողթանցի էր: Մեծանուն կոմպոզիտորի աճյունը Մոսկվայից բերվեց Երևան: Եվ երկու գողթանցի՝ Կոմիտասն ու Արամ Խաչատրյանը մեջք

մեջքի տվեցին հավերժատուն-  
պանթեոնում:

1981 թվականին Ամերիկայի  
Միացյալ Նահանգների Ֆրեզնո  
քաղաքում իր մահկանացուն կրն-  
քեց Վիլյամ Սարոյանը: Նա կտա-  
կեց, որ իր աճյունի կեսը փո-  
խադրվի Հայաստան: Աշխարհա-  
հռչակ գրողի ցանկությունը կա-  
տարվեց: 1982 թվականի մայիսի  
29-ին պանթեոնում թաղվեց Վիլ-  
յամ Սարոյանի աճյունասափորը:

1984-ի մարտի 17-ին պան-  
թեոնի մշտնջենական բնակիչ  
դարձավ խորհրդահայ մեծ բանա-  
ստեղծ Հովհաննես Շիրազը:

Այժմ պանթեոնում հանգչում  
են երեսուներեք գործիչների շի-  
րիմներ, որոնց թվում են.

Աբելյան Հովհաննես Արտեմի  
(1865 — 1936), դերասան, Հայ-  
կական ԽՍՀ ժողովրդական ար-  
տիստ:

Աճեմյան Վարդան Մկրտչի  
(1905—1977), ռեժիսոր, թատե-  
րական գործիչ, ԽՍՀՄ ժողո-  
վրդական արտիստ:

Ասրյան Արուս Հարությունի  
(1904 — 1987), դերասանուհի,  
ԽՍՀՄ ժողովրդական արտիստու-  
հի (Վարդան Աճեմյանի կինը):

Ջորյան Ստեփան (Ստեփան  
Եղիայի Առաքելյան, 1889 —  
1967), արձակագիր, թարգմանիչ,  
ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս: Հետա-  
գայում գրողի կողքին թաղվել է  
նրա կինը՝ Սաթենիկ Ջորյանը:

Թադևոսյան Եղիշե Մարտիրո-

սի (1870—1936), նկարիչ:

Թամանյան Ալեքսանդր Հով-  
հաննեսի (1878—1936), ճարտա-  
րապետության ակադեմիկոս,  
ՀԽՍՀ ժողովրդական ճարտա-  
րապետ, Երևանի առաջին գլխա-  
վոր հատակագծի հեղինակ:

Թորամանյան Թորոս Հարու-  
թյունի (1864—1934), ճարտա-  
րապետ, հայկական ճարտարա-  
պետության գիտական ուսումնա-  
սիրության հիմնադիր:

Իսահակյան Ավետիք Սահակի  
(1875—1957), բանաստեղծ, ար-  
ձակագիր, թարգմանիչ, հրապա-  
րակախոս, գրական-հասարակա-  
կան գործիչ, ՀԽՍՀ ԳԱ ակադե-  
միկոս: 1966 թվականին նրա կող-  
քին թաղվեց կինը՝ Սոֆյա Իսա-  
հակյանը:

Լալայան Երվանդ Ալեքսանդրի  
(1864—1931), ազգագրագետ,  
բանահավաք, հնագետ:

Լեո (Առաքել Գրիգորի Բա-  
բախանյան, 1860—1932), պատ-  
մաբան, գրող, հրապարակախոս,  
գրականագետ:

Խանզադյան Տոլակ Խորենի  
(1886—1935), գրականագետ,  
թարգմանիչ:

Խաչատրյան Արամ Եղիայի  
(1903—1978), կոմպոզիտոր, դի-  
րիժոր, մանկավարժ, հասարա-  
կական գործիչ, ԽՍՀՄ ժողո-  
վրդական արտիստ, ՀԽՍՀ ժողո-  
վրդական արտիստ, Վրացական  
ԽՍՀ ժողովրդական արտիստ,  
սոցիալիստական աշխատանքի

հերոս, ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս, արվեստագիտության դոկտոր:

Խնկո Ապեր (Աթաբեկ Խնկոյան, Աթաբեկ Հովհաննեսի Խնկոյան, 1870—1935), ՀԽՍՀ վաստակավոր մանկական գրող, ՀԽՍՀ վաստակավոր ուսուցիչ:

Կոմիտաս (Սողոմոն Գևորգի Սողոմոնյան, 1869—1935), կոմպոզիտոր, երաժիշտ-բանահավաք, երգիչ, խմբավար, մանկավարժ:

Հովհաննիսյան Հովհաննես Մկրտչի (1864—1929), բանաստեղծ, մանկավարժ, թարգմանիչ:

Մելիքյան Ռոմանոս Հովակիմի (1883—1935), կոմպոզիտոր, խմբավար, երաժշտական-հասարակական գործիչ:

Մելիքյան Սպիրիդոն Ավետիսի (1883—1933), երաժշտագետ, կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ:

Մուշեղյան Տիգրան Պետրոսի (1886—1935), ֆիզիոլոգ, երեվանի համալսարանի ռեկտոր (1933—35-ին):

Ներսիսյան Հրաչյա Ներսեսի (1895—1961), դերասան, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ:

Շիրազ Հովհաննես (Օսիկ Թադևոսի Կարապետյան, 1914 — 1984), բանաստեղծ:

Շիրվանզադե (Ալեքսանդր Մինասի Մովսիսյան, 1858—1935), արձակագիր, դրամատուրգ, Հայաստանի և Ադրբեջանի ժողո-

վրդական գրող, Անդրկովկասի կուլտուրայի վաստակավոր գործիչ:

Ղափլանյան Հրաչյա Նիկիտի (1923—1988), ռեժիսոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ:

Սարյան Մարտիրոս Սերգեյի (1880—1972), գեղանկարիչ, ԽՍՀՄ ժողովրդական նկարիչ: Հետագայում նրա կողքին է թաղվել կինը՝ Լուսիկ Սարյանը:

Սարոյան Վիլյամ (1908 — 1981), արձակագիր, դրամատուրգ:

Տերյան Վահան Սուքիասի (1885—1920), բանաստեղծ, խորհրդային պետական գործիչ:

Փափազյան Վահրամ Քամերի (1888—1968), դերասան, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ:

Փափազյան Վրթանես Մեսրոպի (1866—1920), արձակագիր, դրամատուրգ, գրականագետ:

Մի քանի տարի առաջ առաջարկություն եղավ պանթոն փոխադրել Երևանի մյուս գերեզմանատանը թաղված Մանուկ Աբեղյանի (1865—1944), Հրաչյա Աճառյանի (1876—1953), Դերենիկ Դեմիրճյանի (1877—1956) և Հակոբ Կոջոյանի (1883 — 1959) աճյունները: Ըստ եության մեծերի աճյունների այդպիսի «հավաքի» կարիք չկա: Աճյուններ կարելի է բերել աշխարհի ուրիշ կողմերից, իսկ հայկական հողի վրա հանճարների հիշատակին պիտի խունկ վառել

այնտեղ, ուր նրանք թաղված են, որովհետև պատմության ամենակուլ երախից փրկված պապենական այն հողը, որն ունի բարձր ու վսեմ անուն՝ Խորհրդային Հայաստան, բոլոր հայերի համար թանկ ու սրբազան է իր լայնքով ու երկայնքով, իր ոստանով ու ծայրամասով, իր քունջ ու պուճախով:

Մեր հները հաճախ նշանավոր մարդկանց թաղում էին երկրի ծայրակալ գավառներում, որպեսզի սահմանները՝ իրենց սրբազան գերեզմանատներով անմատչելի դարձնեն թշնամու համար: Այդ սովորույթի մեջ դարավոր իմաստություն էր խտացված: Երբեմն էլ հայոց մեծերը կտակում էին, որ իրենց թաղեն երկրի՝ կռվախնձոր դարձած անկյուններում, որպեսզի իրենց շիրիմներով «պաշտպանեն» այդ հողի հայկական դիմագիծը: Կիլիկյան Հայաստանի թագավոր Լևոն Բ Մեծագործի (մահացել է 1219 թվականի մայիսի 2-ին) մարմինը թաղվել է Սիս մայրաքաղաքում, իսկ սիրտը՝ Ցախուտ գավառի սահմանագլխին գտնվող Ակներ ավանում:

Նշանավոր մարդու գերեզմանը նշանավոր է դարձնում նաև սովյալ բնակավայրը: Հայ գրերը ստեղծող Մաշտոցը մահացել է Վաղարշապատում (այժմ՝ Էջմիածին), 440 թվականի փետրվարի 17-ին: Նրա դին կա-

րող էին հասցնել Տարոն և թաղել հայրենի Հացեկաց գյուղում: Կամ, կարող էին թաղել հենց Վաղարշապատում, որը հայոց հոգևոր մշակույթի կենտրոն էր, որտեղ բացվել է հայկական առաջին դպրոցը, և որը, ընդհանրապես, շատ բանով է առնչվում Մաշտոցի կյանքին ու գործունեությանը: Համենայն դեպս մեր հանճարեղ ուսուցչի դին Հացեկաց փոխադրելու կամ Վաղարշապատում թաղելու համար խանգարող հանգամանքներ չկային: Բայց ահա Հայաստանի հազարապետ Վահան Ամատունին իր ուսուցչի դին Վաղարշապատից փոխադրում ու թաղում է Ամատունիների իշխանանիստ Օշական գյուղում և երեք տարի հետո նրա գերեզմանի վրա կառուցել տալիս կենտրոնագմբեթ դամբարան: Վահան Ամատունին հեռատես գտնվեց և, օգտագործելով իր իշխանությունը, կապեց իրեն կենդանության օրոք սուրբ հռչակված Մաշտոցի անվանը: Եվ այսօր Վահան Ամատունուն հիշում ենք հատկապես նրա համար, որ նա կապ ունի Մաշտոցի հետ: Գիր ստեղծողի գերեզմանն էլ սրբացավ: Տասնհինգուկես դար է, ինչ մարդիկ այցի են գնում նրա շիրմին: Դա հայերեն գրող հայի ամենահին հայտնի գերեզմանն է Հայաստանում: Օշական անունը տալիս հայ մարդու մտապատկերում հառնում է

Մաշտոցի սիրելի կերպարը:

Պարույր Սևակը (1924—1971) թաղվեց իր հայրենի Սովետաշեն գյուղում (Արարատի շրջանում): Դրանով մեծանուն բանաստեղծի ծննդավայրը ավելի է քաղցրացել շրջակա բնակավայրերի մեջ:

Կարևորը նշանավոր գործչի գերեզմանատեղին բարվոք պահելն է և ոչ թե նրա աճյունը «մայրաքաղաքի և հատկապես պանթեոնի բնակիչ դարձնելը»: 10—11-րդ դարերի հռչակավոր տոմարագետ Հովհաննես Կոզեռնը թաղվել է Երևանում: Նրա անունով է կոչվել Երևանի Կոնդի գերեզմանատունը (Հայաստանի կոմպոզիտորների միության այժմյան շենքի շրջակայքը): Մի քանի տասնամյակ առաջ շինարարական աշխատանքների ժամանակ Կոզեռնի գերեզմանատունը քանդվեց, և հիմա ոչ ոք չգիտե, թե որտեղ է ընկած Հովհաննես Կոզեռնի շիրմաքարը:

### ՀԱՅԿԱԿԱՆ ԽՐԱՏԱՆԻ

Ոչ ոք չի կարող այս աշխարհում մնալ:

Մովսես Կաղանկատվացի

Ով հայրենիքի սահմանը քանդի, թող օձը նրան խայթի:

Գրիգոր Մագիստրոս Պաշլավունի

Եկա երգիկը՝ չեկար, եկա դուռը՝ նոր եկար:


Կիրակոս Գանձակեցի

Պատմությունը մեռած գիտությունն չէ և նրա կարևոր խնդիրներից է նաև ներկայում կողմնորոշելն ու անցյալի լույսով ապագան լուսավորելը:

Մխիթար Անեցի

### ՀԱՅԵՐԵՆ ԱՌԱՋԻ ՏՊԱԳԻՐ ԳԻՐԸ

«Ուրբաթագիրք», այսպես է կոչվում հայերեն առաջին տպագիր գիրքը, որը Հակոբ Մեղապարտը տպագրել է Վենետիկում, 1512 թվականին: Տառատեսակը բոլորգիր է, տպագրությունը՝ սև ու սպիտակ: 124 էջանոց գիրք է: «Ուրբաթագրքի» եզակի օրինակները պահվում են Խորհրդային Հայաստանի և արտասահմանի մի քանի գրադարաններում: Գրքում ամփոփված են ա-



ռասպելախառն պատմություններ, չափածո աղոթքներ:

Բայց ինչո՞ւ է այս ժողովածուն ստացել «Ուրբաթագիրք» խորագիրը: Այդպես է կոչվել ուրբաթ օր անունից, իսկ ուրբաթը, ըստ Ղևոնդ Ալիշանի, հնուց անտի համարվել է հմայական ազդեցության օր:

1512—13 թվականներին Հակոբ Մեղապարտի ջանքերով Վենետիկում լույս են տեսել հայերեն առաջին գրքերը: Ահա դրանք ըստ հերթականության. «Ուրբագիրք», «Պատարագատետր», «Աղթարք», «Պարզատումար», «Տաղարան»:

### ՀԱՅԿԱԿԱՆ ԽՐԱՏԱՆԻ

Առարկայի ստվերը երբեք չի հեռանում առարկայից:

Եզնիկ Կողբացի

Չի կարելի նմանվել պիղծ ու վատթար գործերով լցված մարդկանց, որոնք իրենց աչքի գերանը չտեսնելով, ուրիշի աչքն են զննում, որ շղյուղ հանեն:

Ղազար Փարպեցի

Աներկյուղի հետ ճանապարհ մի գնա

Թովմա Արծրունի

Իմաստությունը ճշմարտության մայրն է և կեղծիքի ու ստի արտամղիչը:

Գրիգոր Մագիստրոս Պահլավունի

Ստողների խոսքերը լորի պես պարարտ են, և հիմարները կլանում են դրանք:

Արիստակես Լաստիվերցի

Քո կյանքում ոչ ոքի առիթ մի տուր, որ քեզ անիծի:

Մատթեոս Ուռհայեցի

Ինչպես տարբեր գույների և հասակների, այնպես էլ լեզուների զանազանությունը գեղեցկություն է պատճառում:

Վարդան Արևելցի





# ՆՈՅԵՄԲԵՐ

|            |   |    |    |    |    |
|------------|---|----|----|----|----|
| ԵՐԿՈՒՇԱԲԹԻ | 5 | 12 | 19 | 26 |    |
| ԵՐԵՔՇԱԲԹԻ  | 6 | 13 | 20 | 27 |    |
| ՉՈՐԵՔՇԱԲԹԻ | 7 | 14 | 21 | 28 |    |
| ՀԻՆԳՇԱԲԹԻ  | 1 | 8  | 15 | 22 | 29 |
| ՈՒՐԲԱԹ     | 2 | 9  | 16 | 23 | 30 |
| ՇԱԲԱԹ      | 3 | 10 | 17 | 24 |    |
| ԿԻՐԱԿԻ     | 4 | 11 | 18 | 25 |    |

## ՎԵՐՈՍՆԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԸ 70 ՏԱՐԿԱՆ Է

Միշտ էլ դաժան է եղել հայերիս ճակատագիրը: Մենք ստիպված ենք եղել զսպել մեր արարչագործական ոգին և ապրել անկառույց հարյուրամյակներ ու հազարամյակներ: Հայ ժողովրդի կառուցողական քանքարը, որն իր անցած ճանապարհին տեղ-տեղ է պեծին-պեծին տվել, միանգամից փայլատակեց 1920 թվականի նոյեմբերի 29-ից հետո, խորհրդային իշխանության տարիներին:

Խորհրդային Հայաստանը դարձավ զարգացած արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության ու մշակույթի երկիր:

Հայն այսօր այլևս չի զարմանում ուրիշների ստեղծած սարքավորումներով ու մեքենաներով: Հայաստանաբնակ հայը հիմա ստեղծում է ամեն տեսակ արդյունաբերական արտադրանք և առաքում բոլոր մայրցամաքները, ամենազարգացած երկրները:

Անցած 70 տարում ողբի ու որբի երկիր Հայաստանը հիմնովին փոխեց իր դիմագիծը: Երևանն այնպես բարգավաճեց, որ դարձավ բոլոր ժամանակների հայկական ամենագեղեցիկ քաղաքը: Մի 70 տարում ծնունդ առան, ասես հրաշքով վերածնվեցին նախկինում չկառուցած և կառուցած, բայց թշնամու կողմից ավերված կոթողաշարերը: Միայն խորհրդային իշխանության շնոր-



Հայկական ԽՍՀ պետական դրոշը

հիվ շինարվեստը, շենքեր կերտելը, շողույլը դարձան հայ ժողովրդի գոյատևության հավերժական խորհրդանշանները: Ստալինյան բռնության ու լճացման տարիներին Հայաստանն ու ամբողջ հայ ժողովուրդը շատ բան են կորցրել: Բայց միաժամանակ հաղթահարելով ամեն տեսակ դժվարություններ՝ նոր երկիր են կառուցել: Եվ այդ կառուցումների թափն ավելի ուժգին կլիներ, եթե կյանքն ընթանար բնականոն ընթացքով:

1988 թվականին հայ ժողովրդի ուսերին մի ամբողջ հարյուրամյակի ծանրություն ընկավ: Եվ, ի զարմանս մեզ ու ամբողջ աշխարհի, այդ ծանրության տակ մեր նիհարիկ ուսերը ոչ թե ձկվեցին, այլ պրկվեցին, տոկունացան ու դարձան ժայռազարմ: Ղարաբաղյան շարժումը թմբիկից դուրս բերեց տասնամյակներ շարունակ անշարժության մատնված ուժերին: Դեկտեմբերի 7-ին տեղի ունեցավ Հայաստանի կործանարար երկրաշարժը: Իրավ է, դա դարձավ հայ ժողովրդի սև օր, բայց, ի մխիթարություն և

բախտավորություն մեզ, դա հայ ժողովրդին բաժին ընկած միակ արհավիրքն էր, երբ նա միայնակ չմնաց: Խորհրդային Միության բոլոր եղբայր ժողովուրդները, ամբողջ աշխարհը օգնության ձեռք մեկնեցին Հայաստանին: Փոքրիկ Հայաստանը դարձավ համաշխարհային համերաշխության եպիկենտրոն: Եվ հիմավերածնվում ու վերակերտվում են երկրաշարժից կործանված հայոց քաղաքներն ու գյուղերը: Արհավիրքին ու իր դաժան ճակատագրին հայ ժողովուրդը հակադրվեց նոր կառուցումներով և ցույց տվեց, որ իր ոգին ավելի տոկուն ու կարծր է, քան իր ճակատագիրը, քան պատմության քառուղիներում իր դեմ ելած զորեղների չարությունը:

Վերակառուցումն ու հրապարակայնությունը մուտք են գործել Հայաստանի կյանքի բոլոր ոլորտները: Ժողովուրդը ոտքի տակ է տվել էժան լոզունգներն ու կեղծ հաջողությունների թըմբկահարումները: Նոր, ընդունակ ղեկավարներ են կանգնում հանրապետության տնտեսական ու մշակութային կյանքի հրամանատարական կետերում: Չկա այն անջրպետը, որ առաջներում կար հանրապետության ղեկավարության ու ժողովրդի միջև: Վերակառուցումը հավաստեց, որ ամենատաղանդավոր ղեկավարն էլ չի կարող արդարացնել իրեն,

եթե չի հենվում ժողովրդի վրա: Ժամանակակից Հայաստանը շատ հոգսեր ունի: Զի կարելի բավարարվել միայն բարոյաքաղաքական մթնոլորտը մաքրելով: Չնայած փակվել է Հայկական ատոմակայանը, բայց դեռևս լուրջ մտահոգություն է պատճառում էկոլոգիական դրությունը Հայաստանում:

Վերածնված Հայաստանն ա-նում է ամեն ինչ՝ մաքրելու իր երկինքն ու բնությունը արտադրական թունավոր արտանետումներից ու գազերից, իսկ գավակների հոգիները՝ մղձավանջա-յին տարիներին ստացած տա-նապալից ցնցումներից:

Այն, ինչ որ այս երեք տար-վա ընթացքում տեսել և ուսում-

նասիրել եմ այստեղ, ամրապնդել են իմ այն համոզմունքը, որ հայ ժողովրդի փրկության միակ ուղին խորհրդայինն է, և չարաչար սխալվում են նրանք, որոնք ունեն որևէ առարկություն դրա դեմ: Ոչ մի պետություն չէր կարող անել և չի արել հայ ժո-ղովրդին այն բարիքը, որ արել է և անում է խորհրդային Միու-թյունը:

Շիրվանզադե

Խորհրդային Հայաստանը մեր արևն է, մեր քարն է, մեր ծովն է, մեր պատմությունն է, մեր ամբողջականությունն է: Եթե չլի-ներ Հայաստանը, մենք դժբախտ կլինեինք: Մեզ համար մեծ բախտ է, որ մեզ զորավիզ է ռուս ժո-ղովուրդը:

Վիլյամ Սարոյան

Խնչպես աշխարհի ճորտերին բոլոր,  
Այնպես էլ գերի աշխարհին իմ հին —  
Երկինք մի մաքուր, արև մի բոսոր  
Լոկ Հոկտեմբերյան հողմերը տվին:

Եղիշե Զարենց

## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎԱԴԵՄՈՒՆ

Հայկական ԽՍՀ գիտություն-ների ակադեմիան հիմնադրվել է 1943 թվականի նոյեմբերի

29-ին, Երևանում, ԽՍՀՄ գիտու-թյունների ակադեմիայի հայկա-կան մասնաճյուղի հիման վրա: ՀԽՍՀ ԳԱ հիմնական խնդիրներն են՝ կազմակերպել բնական և հասարակական գիտությունների

առանցքային պրոբլեմների հետազոտումը, ուսումնասիրել և ընդհանրացնել համաշխարհային գիտության նվաճումները և նըպաստել դրանց օգտագործմանը արտադրության մեջ, գիտության ու մշակույթի ասպարեզներում, բացահայտել տեխնիկական առաջընթացի հնարավորությունները և հանձնարարականներ մշակել ժողովրդական տնտեսության համար: ԳԱ ղեկավարում և կորրիկնացնում է գիտահետազոտական հիմնարկներում և բարձրագույն ուսումնական հաստատություններում կատարվող հետազոտությունները: Գիտահետազոտական հաստատությունները գտնվում են Երևանում (մեծ մասը), Բյուրականում, Աշտարակում, Լենինականում, Կիրովականում և հանրապետության այլ վայրերում:

1930-ական թվականներին Հայաստանում գիտահետազոտական հաստատությունների ցանցի ընդլայնումը և գիտական կարների աճը պայմաններ ստեղծեցին մեկ ընդհանուր կենտրոնում գիտական աշխատանքները միավորելու համար: 1935-ին ստեղծվեց ԽՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղը (Արմֆան), որը դարձավ հանրապետության գիտական մտքի կենտրոն: Նախապատերազմյան տարիներին Հայաստանում լայն ուսումնասիրություններ ու հետազոտություններ

կատարվեցին քիմիայի, գյուղատնտեսության, հասարակական գիտությունների, ինչպես նաև ֆիզիկայի, մաթեմատիկայի և տեխնիկական այլ գիտությունների ասպարեզում:

ՀԽՍՀ ԳԱ ստեղծումով հայկական գիտությունը թևակոխեց զարգացման նոր շրջան: Ընդարձակվեցին գիտահետազոտական ուղղություններն ու պրոբլեմները, հիմնվեցին գիտական նոր հաստատություններ: Ավանդական գիտական ուղղություններից բացի զարգացան աստղագիտությունը, ֆիզիկան, մաթեմատիկան, մեխանիկան, քիմիան, ֆիզիոլոգիան, կենսաքիմիան, էլեկտրատեխնիկան և գիտության այլ ճյուղեր:

ՀԽՍՀ ԳԱ ունի 42 իսկական, 59 թղթակից, 3 պատվավոր և 1 արտասահմանյան անդամ: Գիտահետազոտական հիմնարկներում կա 3179 գիտաշխատող, որից 187-ը՝ գիտությունների դոկտոր և 1058-ը՝ գիտությունների թեկնածու:

Գիտությունների ակադեմիան բաղկացած է բաժանմունքներից, որոնք միավորում են գիտության մեկ կամ մի քանի հարակից ճյուղերի գիտահետազոտական հիմնարկներ: Բաժանմունքները գիտաստեղծագործական առումով կազմակերպում են իրենց տնօրինության տակ գտնվող գիտական հիմնարկների, գիտու-

թյան տվյալ ճյուղի գծով կատարվող աշխատանքները և դրա համար հաշվետու են ակադեմիայի ընդհանուր ժողովին ու նախագահությանը:

ՀԽՍՀ ԳԱ նախագահությանն առընթեր գործում են նաև գիտական և գիտակազմակերպական հաստատություններ՝ խմբագրական հրատարակչական խորհուրդը, ՀԽՍՀ գիտական հիմնարկների ու բուհերի բնական և հասարակական գիտությունների բնագավառում գիտական գործունեության կոորդինացման խորհուրդը, գիտատեխնիկական և սոցիալ-տնտեսական կանխատեսման պրոբլեմների հանրապետական գիտական խորհուրդը, տիեզերական էլեկտրառադիոտեխնիկայի և էլեկտրոնիկայի գիտական խորհուրդը, գիտական կադրերի պատրաստման խորհուրդը, բնագիտական և տեխնիկայի պատմության խորհուրդը, արտասահմանյան գաղափարական հոսանքների պրոբլեմների գիտական խորհուրդը, մշակույթի հուշարձանների պահպանման, նորոգման և ուսումնասիրման գիտամեթոդական խորհուրդը, կենսոլորտի պրոբլեմների գիտական խորհուրդը, կոլորոտային և տուրիստական ռեսուրսների ուսումնասիրության գիտական խորհուրդը, մեքենագիտության պրոբլեմների խորհուրդը, կիբեռնետիկայի և ռադիոէլեկտրոնիկայի

խորհուրդը, գիտատեխնիկական հեղափոխության տնտեսական պրոբլեմների, հիմնական ֆոնդերի տնտեսական արդյունավետության և կապիտալ ներդրումների գիտական խորհուրդը, կիսահաղորդիչների խորհուրդը, քարտեզագրական աշխատանքների կոորդինացման գիտական խորհուրդը, ատոմային էներգիայի և տեխնոլոգիայի օգտագործման գիտական խորհուրդը, գրադարանային խորհուրդը, ցուցահանդեսների խորհուրդը, սոցիալիստական ազգերի զարգացման և մերձեցման պրոբլեմների գիտական խորհուրդը, ֆիզիկաքիմիական կենսաբանության և կենսատեխնոլոգիայի պրոբլեմների միջգերատեսչական գիտատեխնիկական խորհուրդը, ինչպես նաև միջազգային գիտական կապերի հանձնաժողովը, աշխարհագրագետների, արևելագետների, ֆիզիոլոգների, բուսաբանների, կենսաքիմիկոսների, գենետիկների և սելեկցիոներների, սերմնաբույծների և այլ ընկերությունները:

Աստիճանաբար ընդլայնվում են ՀԽՍՀ ԳԱ միջազգային կապերը: Հայ գիտնականները գործուն մասնակցություն են ունենում տարբեր գիտությունների գծով Խորհրդային Միությունում և արտասահմանյան երկրներում կազմակերպվող միջազգային գիտաժողովներին, կոնգրեսներին ու համագումարներին:

ԳԱ հրատարակում է «Հայաստանի գիտությունների ակադեմիայի զեկուլյցներ», «Աստղաֆիզիկա», «Պատմա-բանասիրական հանդես», «Լրաբեր հասարակական գիտությունների», «Հայաստանի կենսաբանական հանդես», «Հայկական քիմիական ամսագիր», «Տեղեկագիր ՀԽՍՀ ԳԱ», «Էքսպերիմենտալ և կլինիկական բժշկության հանդես», «Նեյրոքիմիա» պարբերականները և այլ գրականություն:

### **ՀԱՅՏԱՐԱԲԵՐԵԼ Է ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՅՈՑ**

Հայկական ԽՍՀ Գորիսի շրջանի Բարձրավան գյուղի մոտ, անտառապատ կիրճերով շրջապատված եռանկյունաձև դարավանդի վրա է գտնվում Բղենո Նորավանքի ճարտարապետական հուշարձանը, որը կառուցվել է 10—11-րդ դարերում: Սյունիքի միջնադարյան այս նշանավոր վանական համալիրի մասին հիշատակել է պատմիչ Ստեփանոս Օրբելյանը:

Աղթամարից հետո Բղենո Նորավանքը հարուստ, ավարտուն սյուժետային պատկերաքանդակներով հայկական եզակի հուշարձաններից է: Այս կառույցը հայ ճարտարապետության մեջ արտակարգ տեղ է գրավում ոչ միայն հատակագծային հորինվածքի յուրօրինակությամբ, այլև

իր բարձրարվեստ քանդակներով: Ուշագրավն այն է, որ այս հուշարձանախումբը 1932 թվականին պատահաբար հայտնաբերել է ականավոր գրող Ակսել Բակունցը:

Բղենո Նորավանքը վերանորոգվել է 1957 — 62 թվականներին:

### **ԶՎԱՐՔՆՈՑ**

Հայ ժողովրդի արարչագործական հանճարը առավել ուժգին փայլատակել է ճարտարապետության բնագավառում: Եթե ամեն ինչ կործանող բարբարոսների ոտքը չդիպչեր հայկական հողին և երկրաշարժեր չլինեին, ապա այսօր Հայկական լեռնաշխարհում կլինեին ճարտարվեստի ադամանդի արժեք ունեցող մոտ 40 հազար փառահեղ տաճար և 700 հազար անձեռակերտ խաչքար: Այդ շողշողուն ադամանդներից է վաղ միջնադարի հայկական ճարտարապետության հուշարձան Զվարթնոցը, որ գտնվում է Արարատյան դաշտում, Էջմիածնից 3 կիլոմետր հարավ: Ըստ հայ պատմիչների վկայության և պահպանված հունարեն արձանագրության, տաճարը կառուցել է Ներսես Գ Իշխանցի (Շինող) Հայոց կաթողիկոսը, և նրա գահակալության տարիներից էլ (641 — 661) արտածվում է

Զվարթնոցի կառուցման ժամանակը: Ըստ Մովսես Կաղանկատվացու, Զվարթնոցը օծվել է 652 թվականին: Թորոս Թորամանյանի կարծիքով շինարարությունը ըսկըսվել է 643-ին և հիմնականում ավարտվել 652-ին: Ներսես Գ-ի՝ Տայքում լինելու տարիներին (653—659) շինարարությունը շարունակել է նրան փոխարինող Անաստաս Ակոռացին: Տաճարը Զվարթնոց է անվանում Սեբեոսը, մյուս պատմիչներն այն անվանում են Վաղարշապատի Սուրբ Գրիգոր:



Զվարթնոցի տաճարը (վերակազմությունը՝ Թորոս Թորամանյանի)

Զվարթնոցը կանգուն է եղել մինչև 10-րդ դարի վերջը. ավերման պատճառի մասին մեզ հայտնի պատմական աղբյուրները լռում են: 20-րդ դարի սկզբին ավերակ Զվարթնոցը տակավին ծածկված էր հողի հաստ շերտով: Պեղումները կատարվել են (1901 — 07) Խաչիկ վարդապետ Դադյանի նախաձեռնությամբ: 1904-ից, որպես գիտական ղեկավար, մասնակցել է Թորոս Թորամանյանը: Ըստ պեղված նյութերի, նախքան Զվարթնոցը այստեղ եղել են հնագույն և 4—5-րդ



Զվարթնոցի ավերակները

դարերի կառույցներ: Հնագույնը Ռուսա Բ արքայի սեպագիր արձանագրությամբ՝ շինարարական աշխատանքների, այգիներ տնկելու, ջրանցք կառուցելու և աստվածներին զոհաբերություններ մատուցելու վերաբերյալ: Ենթադրում են, որ Զվարթնոցի տարածքում է եղել Տիր աստծու մեկանը:

Պեղումներով հայտնաբերվեցին Զվարթնոց տաճարը, նրանից հարավ-արևմուտք՝ կաթողիկոսական պալատը՝ օժանդակ շինություններով (բաղնիք, խուցեր և այլն), տարբեր իրեր, գերեզմաններ, նաև եկեղեցու մնացորդներ, պալատից ոչ հեռու, հարավ-արևելյան մասում՝ խաղողի քարաշեն հնձան և այլն: Տաճարից պահպանվել են հատակաձևը, տեղ-տեղ պատերի ցածի մասերով, սյուների խոյակներ, բներ, խարիսխներ, բեկվածքավոր որմնակամարներ, թաղաբեկորներ, խճանկարի, որմնանկարի, ցածի կղմինդրի մնացորդներ և այլ մանրամասներ: Տա-

ճարը կառուցվել է տարբեր որակի և երանգի (դարչնագույն, բաց մոխրագույնից մինչև սև) տուֆից:

1905 թվականին Թորոս Թորամանյանը ստեղծեց Ջվարթնոցի գիտական վերակազմությունը: Ըստ պահպանված հատակաձևի և այդ վերակազմության, կառույցի ծավալատարածական հորինվածքի կորիզը քառակոնքն է, որը ցածում շրջապատված է երկհարկ պարարկյալ սրահով, իսկ վերևում կիպ պարփակված գլանային պատով:

Ջվարթնոցը արտաքուստ եռաստիճան, հետզհետե նվազող տրամագծերով երեք գլանային ծավալների ներդաշնակ ամբողջություն կազմող կենտրոնակազմ գմբեթավոր հորինվածք է: Ծավալները ռիթմիկորեն ներդաշնակվում են կղմինդրյա լանջային տանիքներով և գմբեթի սրածայր վեղարով, որոնց ստորին եզրերը հանգում են զամբյուղակազմ, բեկվածքավոր, զարդաքանդակ գոտիներից բաղկացած հորիզոնադիր քիվապսակներից: Տաճարն ունեցել է 5 մուտք, ստորին և միջին աստիճանները՝ 32, վերինը՝ գմբեթի թմբուկը, 16 նիստանի են: Զույգ որմնասյուներից և նրանց կապող բեկվածքավոր որմնակամարներից կազմված խորանաշարից վեր, մինչև հարկաբաժան գոտին, ամբողջ պարագծով ընթանում է խաղողի

որթ և նռնազարդ ճյուղեր բովանդակող զարդաքանդակ գոտին: Որմնակամարների հանդիման անկյուններում քանդակված են կառուցմանը ժամանակակից հոգևոր և աշխարհիկ 32 բարձրաքանդակներ (պահպանվել են 9-ը): Նույն անկյուններից վեր, մեծ ելուստով քանդակված են մեկական մեծաչափ, գնդաձև նուռ: Անկասկած տաճարի հարավային մասում տեղադրված է եղել արևային բոլորակ ժամացույցը:

Ջվարթնոցի կերպարը մտահղացված է որպես մի ամբողջական կոթող-հուշարձան, որը, լինելով որոշակի ֆունկցիայով շենք՝ տաճար, ամփոփելով Գրիգոր Լուսավորչի մասունքները, պետք է կրեր իր ժամանակի զաղափարախոսության բուն խորհրդանշանը՝ խաչը: Սիմետրիայի ուղղահայաց առանցքով զարգացող ծավալի ռիթմական կարգը ստեղծում է կերպարի դինամիկ վերսլացություն: Տաճարի ներսում թռիչքի պատրաստված թևատարած արծիվները, լուսավոր պարարկյալ սրահի որմնազարդի ռիթմը, խոյազարդ խոյակներով սյունակազմ խորանների պարը, մույթերի սլացքը, բարձրադիր լուսաողող գմբեթը ողջ դեկորի հետ մեկտեղ պետք է ստեղծեին նույն վերսլացությունը:

Թորոս Թորամանյանի վերա-



կազմության ստույգությունը ապացուցվեց 1906 թվականին՝ Զվարթնոցի օրինակով, ըստ Ասողիկ պատմիչի, 11-րդ դարի սկզբին Անիում կառուցված Գագկաշեն Գրիգոր Լուսավորչի տաճարի պեղումներից հայտնաբերված մանրակերտով (առարկայական մյուս ապացույցը Փարիզի Սեն-Շապել եկեղեցու, 1243—48, որմնաքանդակներն են):

Զվարթնոցը հայկական շինարվեստի, քանդակագործության, դեկորատիվ արվեստի յուրօրինակ հանրագումարն էր, Հայաստանի քաղաքակրթական ընդհանուր զարգացման արգասիքը: 1937 թվականին Զվարթնոցի ավերակներից ոչ հեռու կառուցվել է փոքրիկ թանգարան, ուր ցուցադրվում են պեղված նյութերը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային մշակույթի և բնության ժառանգության պահպանության մասին» ընդունած կոնվենցիայով կազմվել է պատմաճարտարապետական և բնության հուշարձանների տեղեկատու՝ «Համաշխարհային ժառանգության ցուցակ», որի մեջ 1989 թվականին

ԽՍՀՄ-ից (ուր կա 200 հազարից ավելի հուշարձան) ընդգրկվել է 18 հուշարձան: Այդ 18-ի մեջ Հայաստանից մտել է մեկ հուշարձան՝ Զվարթնոցը: Այսպիսով, հայ ժողովրդի պատմության և մշակույթի հուշարձանների բոլոր պետական ցուցակներում № 1 թվակիրն է հայ ճարտարվեստի հանճարեղ ստեղծագործություն Զվարթնոց տաճարը:

## ՀԱՅԵՐԵՆ ԱՈՒՋԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ

Հայերեն առաջին պարբերականը «Ազդարար» ամսագիրն է, որ հրատարակվել է Մադրասում (Հնդկաստան), 1794—1796 թվականներին: Ընդամենը լույս է տեսել 18 համար: Խմբագրել և իր հիմնած տպարանում գրաբարով, մասամբ էլ հնդկահայ և Նոր Զուղայի բարբառներով տրպագրել է Հարություն Շմավոնյանը:

1994 թվականին լրանում է հայ առաջին պարբերականի՝ «Ազդարարի» առաջին համարի լույսընծայման 200-ամյակը:

# ԴԵԿՏԵՄԲԵՐ

|            |   |    |    |    |    |
|------------|---|----|----|----|----|
| ԵՐԿՈՒՇԱԲԹԻ | 3 | 10 | 17 | 24 | 31 |
| ԵՐԵՔՇԱԲԹԻ  | 4 | 11 | 18 | 25 |    |
| ՉՈՐԵՔՇԱԲԹԻ | 5 | 12 | 19 | 26 |    |
| ՀԻՆԳՇԱԲԹԻ  | 6 | 13 | 20 | 27 |    |
| ՈՒՐԲԱԹ     | 7 | 14 | 21 | 28 |    |
| ՇԱԲԱԹ      | 1 | 8  | 15 | 22 | 29 |
| ԿԻՐԱԿԻ     | 2 | 9  | 16 | 23 | 30 |

## ԵՐԿՐԱՇԱՐԺԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՀԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

1988 թվականի դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած երկրաշարժը ցնցեց հայ ժողովրդին: Փլատակների վերածվեց Սպիտակ քաղաքն ամբողջովին, կիսաքանդ դարձան Լենինականն ու Կիրովականը և ուրիշ քաղաքներ ու գյուղեր: Ջոհվեցին տասնյակ հազարավոր մարդիկ: Ծանր օրերին օգնության եկան Խորհրդային Միության բոլոր կողմերից, աշխարհի մոտ ու հեռավոր երկրներից: Հիմա կառուցվում ու վերակառուցվում են ավերված հայկական բնակավայրերը: Հա-

յաստանի երկրաշարժը ցնցեց ոչ միայն Հայաստանը, այլև ամբողջ աշխարհը, որը մի աչք դարձած հետևում էր հայ ժողովրդին հասած ողբերգությանը: Այդ երկրաշարժն ասես առավել ողջախոհ դարձրեց համայն մարդկությանը և ժողովուրդների համերաշխությունը դարձրեց առավել գործնական:

Հայկական լեռնաշխարհն ունի ավելի քան 600 մեծ ու փոքր հրաբխային կենտրոններ և երկրազևոյի սեյսմակտիվ շրջաններից է, այսինքն՝ հաճախակի են երկրաշարժերը: Վերջին 1500 տարում այստեղ տեղի է ունեցել 300-ից ավելի երկրաշարժ: Հայկական լեռնաշխարհում

տեղի ունեցած երկրաշարժերի մասին ամենահին հիշատակությունը տալիս է Պատմահայր Մովսես Խորենացին: Նա նկարագրում է, թե ինչպես մեր թվականությունից առաջ վեցերորդ դարում ապրած Տիգրան Առաջին հայ թագավորը՝ երվանդ Սակավակյաց թագավորի որդին, Մարաց թագավոր Աժդահակի Անուշ կնոջն իր որդիներով «բնակեցնում է անդորր տեղում՝ Մեծ լեռան փլվածքի վերջում: Այդ փլվածքն ասում են առաջ է եկել մի ահագին երկրաշարժից: Այս բանը պատմում են այն մարդիկ, որոնք Պտղոմեոսի հրամանով ընդարձակ ուղևորություններ կատարելով, ասպարեզներով չափեցին մարդկանց բնակության տեղերը, մասամբ նաև ծովը և անբնակ վայրերը Այրեցյալ գոտուց մինչև Քեմյուռոսն»: Մեծ լեռ ասելով Մովսես Խորենացին նկատի է ունեցել Արարատ լեռը:

Հայաստանում երկրաշարժ է եղել նաև մեր թվականությունից առաջ հինգերորդ դարում, որի մասին հիշատակում է հին աշխարհի ականավոր պատմիչ Ատրաբոնը:

Մեր թվականության 341 թվականին տեղի է ունեցել մի երկրաշարժ, որի մասին եփրեմ Եղեսացին գրել է. «Հայկական լեռներն սկզբում հեռանում էին իրարից և ապա նորից մոտենում սարսափելի աղմուկով, ըստ որում

ժայթքում էր կրակ և ծուխ և ապա նորից վերականգնվեց նախկին դրությունը»:

568 թվականի երկրաշարժից կործանվում է երկրորդ Հայքի Արփսուս քաղաքը:

602—603 թվականներին ուժեղ երկրաշարժից կործանվեց Տարոնի Սուրբ Կարապետ վանքը: Այդ առթիվ պատմիչ Հովհաննես Մամիկոնյանը գրում է. «Այս թվին Սուրբ Կարապետը, որ Ինսականյա վանքի տեղում էր, քանդվեց, որովհետև սաստիկ երկրաշարժ եղավ, որի պատճառով այն տները, որոնք նրա ներքին մասում էին, երկրաշարժից փլվեցին: Իսկ եկեղեցին, որի հիմքը գետնի վրա էր, շարժվեց և ճեղքվեց, ըստ որում Տարոնի իշխան Մուշեղը մեծ զանձեր տալով քարակոփներին՝ հրամայեց շինել»: 735 թվականի հուլիսի 21-ին աղետաբեր երկրաշարժ եղավ Վայոց ձորում, որը տևեց քառասուն օր: Մովսես Կողանկատվացու պատմությունը շարունակող Դասխուրանցին այդ երկրաշարժի մասին այսպես է գրել. «Անասելի խավարը պատեց Մոզի շրջանը և 40 օր այդ վայրը շարժվեց: Խորասույգ լինելով երկրի տակ ընկղմվեցին 10 հազար կենդանի մարդիկ, որի պատճառով այն Վայոց ձոր կոչվեց»:

800—802 թվականներին սաստիկ երկրաշարժ է տեղի ունեցել Կողատու լեռներում: Այդ մասին

պատմիչ Սամուել Անեցին գրում է. «Այս ժամանակ եղավ ուժգին երկրաշարժ և Կողատու լեռները, որ կան դեռ ու դեռ՝ իրար կպան, որը տեսան մարդիկ և քանդվեց մի լեռ ու թափվելով Եփրատի մեջ մեկ օրով արգելեց նրա ընթացքը և գետն սկսեց հոսել դեպի վեր: Բազմաթիվ լեռներ ձեղքվեցին, ջրի, կպրի ու նավթի շատ աղբյուրներ բացվեցին, իսկ շատերը փակվեցին»:

Կործանիչ է եղել 858 թվականի Դվինի երկրաշարժը: Այդ մասին Հովհաննես կաթողիկոսը գրել է. «Ջաջարիա կաթողիկոսի ժամանակ հայոց գերությունից յոթ տարի հետո Դվին քաղաքում ահագին երկրաշարժ եղավ, քանդվեցին բազմաթիվ տներ, պալատներ, ապարանքներ և ընդհանրապես դլրդոցն ամբողջ քաղաքն էր բռնել: Միաժամանակ մարդկային շատ զոհեր եղան և վտանգի մեծությունն այնքան էր, որ ոչ ոք չէր մնում հարկի տակ, այլ հրապարակներում ու փողոցներում հառաչում էին, իսկ ձմեռվա սառնամանիքն ավելի ևս սաստկացնում էր ողբը, որովհետև շատերը մրսելով սառչում էին»:

Դվինը նորից երկրաշարժային աղետի ենթարկվեց 869 թվականին, որի ժամանակ զոհվեց 120 հազար մարդ: Ամայացնող էր նաև Դվինի հաջորդ երկրաշարժը, որը եղավ 893-ին:

Հայաստանում մեր թվականության երկրորդ հազարամյակի առաջին երկրաշարժերը տեղի են ունեցել 1003—1004 թվականներին: Պատմիչ Մատթեոս Ռոհայեցին գրում է. «Երեբալով դողաց ամբողջ աշխարհը: Մարդիկ սարսափից ու բարկությունից անգամ ժամանակ չունեցան խոստովանելու և հաղորդվելու: Մարդիկ ու անասունները նվազեցին և մնացյալ չորքոտանիները շրջում էին երկրի վրա»:

Շատ Սամուել Անեցու, 1007 թվականին Հայաստանում «կրակի տեսք ունեցող մի աստղ երեվաց և սաստիկ երկրաշարժ եղավ»:

1011 — 1012 թվականներին կործանիչ երկրաշարժ եղավ Երզնկայում, որի մասին Մխիթար Այրիվանցին գրում է. «Առաջավորի տոնին սաստիկ երկրաշարժ եղավ, Երզնկա քաղաքն ամբողջովին թաղվեց և մնաց միայն Կիրակոս Ողորմածի տունը: Շատ եկեղեցիներ ու բերդեր տապալվեցին»:

Վերջին հիմա հազար տարում հայկական ոչ մի բնակավայրում այնքան կործանարար երկրաշարժ չի եղել, որքան Երզնկայում: Այս քաղաքը հայերը գրեթե հիմնովին վերակերտել են քսան անգամ: Այդ պատճառով էլ Երզնկայի վերակառուցումը դարձել է հայ մարդու համբերության չափանիշ: «Մարդ պետք է

համբերություն ունենա, որ քսան երզնկա շինե՝ ասում են հույները մեր մասին:

1046 թվականին մեծ երկրաշարժ եղավ Անիում, որից կործանվեցին քաղաքի շատ պալատներ ու եկեղեցիներ:

1111 թվականին սարսափելի երկրաշարժ եղավ Վասպուրականում: Այդ մասին հնամյա հիշատակարաններից մեկում գրված է.

«1111 թվականին Հայաստանում, Վասպուրական նահանգում, տեղի ունեցավ սարսափելի ֆիզիկական երևույթ: Չմեռը, գիշերվա կեսին, երկնակամարը բացվեց և այնտեղից ահագին բոց թափվեց Վանա լճի վրա, որի ալիքները սարսափելի աղմուկով ցատկեցին ափ: Եվ ջուրը և գետինը ցնցվում էին: Գոյացան սարսափելի խորության ճեղքվածքներ»:

Մի հզոր, աղետաբեր երկրաշարժ էլ տեղի է ունեցել դրանից երեք տարի անց, 1114 թվականին, որն ընդգրկել է մի վիթխարի երկրամաս՝ Հայոց Միջագետքը, Անտիոքը, Կիլիկիան: Այդ երկրաշարժը իր ուժգնությամբ և ընդգրկումով եղել է մեծագույններից մեկը, որի ժամանակ Հայաստանում և շրջակա երկրներում զոհվել է 400 հազար մարդ:

1132 թվականին Անիում մի երկրաշարժ եղավ, որի ժամանակ փլվեց հրաշակերտ Ամենափրկիչ եկեղեցին:

Հզոր է եղել 1139 թվականի Գանձակի երկրաշարժը, որի ժամանակ կործանվել է Գանձակ քաղաքը, փլվել է Ալիարակ լեռը, գլխատվել, փակել կողքի գետի հունը և առաջացրել այժմյան Գոյ գյուլ լիճը:

1282 թվականին մի երկրաշարժ եղավ, որի ժամանակ խորտակվեցին Արճեշ և Խլաթ քաղաքները:

1319 թվականին կործանիչ երկրաշարժ եղավ Հայաստանում, որը ավերակների կույտերի վերածեց շատ քաղաքներ ու գյուղեր: Այդ երկրաշարժն առավել մեծ ավերածություն է պատճառել գեղեցկաշեն Անիում: Եվ ընդհանրապես հաճախակի տեղի ունեցող երկրաշարժերը պատճառ են դարձել Անիի վերջնական կործանմանն ու ամայացմանը:

1646 թվականի ապրիլի 2-ին ահեղ երկրաշարժ է տեղի ունենում Վան քաղաքում և մերձակայքում: Այդ երկրաշարժը ավերակների է վերածել Վանի շինությունների մեծ մասը, քանդել է բերդի մի մասը, եկեղեցիները, տաճկական բոլոր մզկիթները, որոնց փլատակների տակ զոհվել են շատ մարդիկ ու կենդանիներ: Այդ երկրաշարժի մասին Առաքել Դավրիժեցին գրել է. «Ութ օր շարունակ երկիրը շարժվեց, որի պատճառով չէին կարողանում տներում ապրել, այլ բացօթյա, վրանների տակ էին

մում, որովհետև այդ ութ օրն անդադար չարժվում էր երկիրը, ինչպես նաև ջրի երեսին»:

1679 թվականի հունիսի 4-ին, ժամը 7-ին, Արարատյան նահանգում տեղի է ունենում ոչնչացնող երկրաշարժ, որին նախորդում է ահռելի դողդոց ու որոտ և միաժամանակ բարձրանում է այնպիսի հողմ ու փոշի, որ օրը ցերեկով մթնում է:

Ըստ ժամանակի պատմիչ Ջաջարիա Սարկավազի, այդ երկրաշարժից տապալվում է Գառնի ամրոցի տրդատաշեն չքնաղ տաճարը, Հայաստանի հնագույն

ճարտարապետության այդ հիանալի կոթողը, որ դարեր շարունակ դիմացել էր բնության տարերջին, արհավիրքներին: Երկրաշարժի ցնցումն այնքան ուժեղ է եղել, որ Գառնիի տաճարի քարերի մի մասը, որոնցից յուրաքանչյուրը կշռում էր մի քանի տոննա, Գառնի ամրոցի բարձունքից զցում է մոտակա ձորը: Երկրաշարժից Այրիվանքի ձորը լցվում է քարակույտերով, և ամբողջ վանքն այնպես է ծածկվում, որ այլևս շինությունները չեն երեկում: Երկրաշարժից կործանվում է նաև Հավուց թառի վանքը, որ

*Տեսարաններ Սպիտակի երկրաշարժի պատճառած ավերածություններից*



կառուցել է տվել Գրիգոր Մագիստրոս Պահլավունին 1013 թվականին: Այդ երկրաշարժի ժամանակ շենքերի փլատակների տակ մեռնում է 7600 մարդ:

1696 թվականի հունիսի 10-ին մի այլ կործանիչ երկրաշարժ է տեղի ունենում Բաղեշում, որի մասին Վարդան Բաղիշեցին գրում է. «Բաղեշ քաղաքում սաստիկ երկրաշարժ եղավ և բազմաթիվ մեծարժեք շենքեր, տներ ու ապարանքներ կործանվեցին և ավերվեցին, և բազմաթիվ անձինք մեռան»:

Մասիսի կատարամերձ Ակոռի գյուղը եղել է հայկական հնագույն բնակավայրերից մեկը: Այն կործանվեց 1840 թվականի հունիսի 20-ի երկրաշարժի ժամանակ: Այդ երկրաշարժի հենց առաջին հարվածից Մեծ Մասիսի գագաթից և կիրճ կազմող ժայռոտ թեքությունից մոտ երկու կիլոմետր բարձրությունից պոկվել են սառույցներով ու դարավոր ձյունով ծածկված հսկայական քարեր և կայծակի արագությամբ լցրել կիրճը. յոթ կիլոմետր երկարությամբ սառույցների ու քարերի զանգվածների տակ անհետանում են Ակոռի գյուղը և նրա կողքի Սուրբ Հակոբ եկեղեցին: Ջոկվում են Ակոռի գյուղի բոլոր բնակիչները՝ մոտ 2000 մարդ:

Գերմանացի ճանապարհորդ, աշխարհագրագետ ու բնագետ Մորից Վագները այդ երկրաշար-

ժից երեք տարի անց, 1843 թվականին, Խաչատուր Աբովյանի հետ բարձրանում է Ակոռի գյուղի տեղանքը: Նրանց Պ զարմացնում է մի բան. երկրաշարժն Ակոռից ոչ մի հետք չի թողել, բայց ահա գյուղի հռչակավոր այգում կանգուն է մնացել 13 ծիրանենի:

— Այսպիսի հրաշք կարող է միայն Հայոց աշխարհում լինել, — զարմացած բացականչել է Մորից Վագները: — Ամեն ինչ կործանվել է, համարյա բան չի մնացել, բայց այդ ամենակարող շարժը չի կարողացել գետին տապալել հայկական ծիրանենիները: Չէ, Խաչատուր, սա մեծ խորհուրդ ունի: Ծիրանը հայկական երկրի խորհրդանիշն է: Այս կանգուն ծիրանենիները կարծես թե ուզում են մեզ ասել, որ ինչ արհավիրք էլ լինի՝ Հայաստանը հուր-հավիտյան կանգուն կմնա: Խորհուրդ ունի նաև 13 թիվը, որը հավաստում է, թե ոչ մի պատահականություն չի կարող աշխարհի երեսից վերացնել հայ ժողովրդին:

1926 թվականին Լենինականի կործանիչ երկրաշարժի ժամանակ, որի ուժգնությունը հասել է 8—9 բալի, զոհվել ու վիրավորվել է 600 մարդ:

Հիմա Հայաստանն ապաքինում է 1988-ի երկրաշարժից ստացած իր վերքերը: Մարդիկ ջանում են այնպիսի շենքեր կառուցել, որոնք իրենց ամրու-

թյամբ ի վիճակի լինեն դիմակայելու մեծ ուժգնություն ունեցող երկրաշարժերին:

**1968 ՔԱՎԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի  
ԵՐԿՐԱՇԱՐՉԻ ՊԱՏՃԱՄՈՍ  
ՎՆԱՄԵՐԻ ՄԱՍԻ**

**Հայկական ԻՄԸ վիճակետկոմի  
հաղորդագրությունից**

Հանրապետության ժողովրդական տնտեսությանը հսկայական վնաս պատճառեց ավերիչ երկրաշարժը: Տարերային աղետն ընդգրկեց հանրապետության տարածքի ավելի քան 40 տոկոսը՝ գրեթե մեկ միլիոն բնակչությամբ: Տուժեցին 21 քաղաք ու շրջան, 342 գյուղ, որոնցից 58-ը լրիվ ավերվեցին: Աղետյալ գոտում փլատակներից դուրս բերվեց 40 հազար մարդ, որոնցից 25 հազարը՝ զոհված, տարբեր աստիճանի խեղումներ ու վերքեր ստացավ մոտավորապես 19 հազար մարդ:

Մոտ ութ միլիոն քառակուսի մետր բնակավայրերի կորուստ կա, որը կազմում է հանրապետության ամբողջ բնակարանային ֆոնդի 17 տոկոսը: Աղետյալ գոտում բնակելի տների մեծ մասը վթարային վիճակում է: Ավերվել կամ վթարային վիճակում են երկու թատրոն, 14 թանգարանային շենք, 391 գրադարան, 42 կինո-

թատրոն, 349 ակումբ ու մշակույթի տուն, առողջապահության 416 օբյեկտ: Լրիվ խախտվել էին ջրամատակարարումը, ջերմամատակարարումն ու էներգամատակարարումը, ավերվել էին կոմունալ-կենցաղային օբյեկտներ, ինժեներային շատ կառուցվածքներ և կոմունիկացիաներ:

Վնասվել էին 604 կիլոմետր ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհներ: 40 տեղերում ավերվել ու ձևախախտվել էին ութ կիլոմետր ընդհանուր երկարությամբ երկաթգծի հողապաստառն ու վերին կառուցվածքը:

Դադարել են գործել 130 արդյունաբերական ձեռնարկություններ ու միավորումներ: Ամբողջությամբ վերցրած տարեկան 1,9 միլիարդ ռուբլու արդյունաբերական արտադրանքի թողարկման կարողությունների, 82 հազար աշխատատեղերի կորուստ կա:

Երկրաշարժը մեծ վնաս հասցրեց ագրարդյունաբերական համալիրին: Էականորեն տուժեցին 209 խորհրդային տնտեսություն և 90 կոլտնտեսություն: Ավերվել և խիստ վնասվել են վերամշակման արդյունաբերության ավելի քան 80 ձեռնարկություն, մոտ 1200 անասնապահական շենք և արտադրական նշանակության ուրիշ շատ օբյեկտներ: Ոչնչացել են մեծ քա-



նակութամբ անասուններ ու թռչուններ: Հանրապետության ագրոարդյունաբերական համալիրի գծով կորուստները կազմում են ավելի քան 2 միլիարդ ռուբլի:

Շարքից դուրս է եկել շինարարական ինդուստրիայի ձեռնարկությունների զգալի մասը:

Երկրաշարժի պատճառած ընդհանուր ժողովրդատնտեսական վնասը գնահատվում է մոտավորապես 10 միլիարդ ռուբլի:

*«Սովետական Հայաստան» օրաթերթ  
1989-ի փետրվարի 19*

## ԱՐՏԱՌՈՒՐ ԱՏԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Ալբերտ Վարազդատի Մուշեղյանը արտասովոր տաղանդի տեր մարդ է: Ծնվել է 1931 թվականին, Երևանում: Վեց տարեկան հասակում կորցրել է տեսողությունը: Բայց մարդը չի հաշտվել ճակատագրի հետ: Ավարտել է միջնակարգ դպրոցը, ապա՝ Երեվանի համալսարանի բանասիրական ֆակուլտետը: 1955 — 59 թվականներին սովորել է համալսարանի ասպիրանտուրայում: 1956-ին կազմակերպել է բրայլյան տպարան (չտեսնողների համար ուռուցիկ տառերով գրքեր տպագրելու համար) և աշխատել այդ տպարանում որպես գլխավոր խմբագիր: 1964—65-ին եղել է Հայաստանի կույրերի միավորման կենտրոնական վարչության նախագահի առաջին տեղակալ,

1965—73-ին՝ կենտրոնական վարչության նախագահ: 1974—78-ին գիտաշխատող է եղել ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտում: 1978-ից աշխատում է ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում: 1980 թվականին «Ավետիք Խահակյանի կյանքի և ստեղծագործության վաղ տարիները» թեմայով դիսերտացիա է պաշտպանել և ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան: Նա գերմաներենից հայերեն է թարգմանել Հայնեի և Գյոթեի մի շարք գործեր:

Մուշեղյանը տիրապետում է յոթ՝ հայերեն, գրաբար, ռուսերեն, գերմաներեն, անգլերեն, հունարեն, լատիներեն լեզուների: Նա ոչ միայն տիրապետում է, այլև կատարում է բնագրական այնպիսի համեմատություններ, որ ապշեցնում է աշխարհը երկու աչքով տեսնող մարդկանց: Նրա գիտական հետազոտությունները պատասխանում են հնյագիտական շատ խրթին հարցերի: Գերմանացի արևելագետ Ալֆրեդ Գուտշմիդը ջանացել է ապացուցել գիտական աշխարհին, թե Մովսես Խորենացին ապրել է ոչ թե 5-րդ, այլ 7-րդ դարում: 1884 թվականին Գուտշմիդը գրել է, թե Խորենացին 5-րդ դարի հեղինակ լինել չի կարող, որովհետև նա իր գրքում հիշատակում է Բյուզանիա անունը և

ԱՄԱՆՈՐՅԱ ՀԱՅԿԱԿԱՆ  
ՄԱՂԹԱՆՔՆԵՐ

նշում, որ պարսիկները հասել են այնտեղ: Մինչդեռ հայտնի է, ասում է գերմանացի արևելագետը, որ պարսիկները Բյուզանդիան են հասել 629 թվականին: Եվ ահա, բնագրահամեմատական հետազոտություններ կատարելով, Ալբերտ Մուշեղյանը հերքեց Ա Գուտշմիդի տեսակետը: Մուշեղյանը բյուզանդական ժամանակակիր Հովհաննես Մաղալայի (մոտ 459—578) մի գործում գտավ, որ պարսիկները Բյուզանդիան են մտել Խորենացու նշած ժամանակներում: Բանն այն է, որ դա ոչ թե Կոստանդնուպոլսի մոտ եղած Բյուզանդիան է, այլ Նույնանուն մի քաղաք՝ Միջերկրականի ափին: Հետագայում Ա Մուշեղյանը աղբյուրագիտական պրպտումների հիման վրա հիմնովին հերքեց «կեղծ Մովսես Խորենացու» լեգենդը և Թումանյանի ու Թոմսոնի ամենավերջին փաստարկումները, որոնք հայ ամենամեծ պատմիչին ներկայացնում են իբրև 8-րդ դարում ապրած հեղինակ:

Այն ամենն, ինչ անում է Ալբերտ Մուշեղյանը, ապշեցնող է, որ քիչ է սխրագործություն անվանելը: Նա այդ բոլորը կատարում է իր արտասովոր հիշողության, մտապահության շնորհիվ: Իր գիտական հետախուզումները նա կատարում է կնոջ՝ Ռիմա Մուշեղյանի օգնությամբ: Կինը կարդում է, Մուշեղյանը մտապահում է:

*Թող Նոր տարին աշխարհի բոլոր մարդկանց համար առավել խաղաղավետ, հացառատ ու երջանկաբեր լինի, քան անցած, նախանցյալ և նախորդ բոլոր տարիներին:*

*Թող Նոր տարում խաղաղության մեջ պայթեն ու ճայթեն բոլոր բողբոջները՝ և նուռը կարմիր, և խնդությունը մարդկային հոգու, և հիացք ու զարմանք պատճառող ամեն տեսակ շնորհք ու տաղանդ:*

*Թող տարին բոլոր խաղաղավետ լինի, մեր խոփը սուր մնա, և ոչ մի ակոս խոպան չդառնա:*

*Թող ամենալավն ու խաղաղավետը լինեն Նոր տարվա առաջին օրը, հաջորդ օրը և մնացած բոլոր օրերը:*

*Մաղթենք, որ խաղաղավետ ու աներկրաշարժ լինի այս Ամանորը, և մարդը ցնցվի միայն բարի խոսքի առատությունից:*

*Ամանոր, խաղաղությամբ մտիր մեր հարկերի տակ, թող մարդը բնավեր չդառնա, ոչ էլ ողբ ու լաց լինի անժամանակ կորստի համար:*

*Մաղթենք, որ Նոր տարին երիցս խաղաղավետ, խաղողավետ ու ցորենավետ լինի:*

Թող Ամանորն անչափ խաղաղ լինի, իսկ անձրևներն ու արևի շողարձակումները՝ չափավոր:

Մաղթենք, որ Նոր տարին խաղաղաշատ, ծննդաշատ և ցորենաշատ լինի:

Ամանոր, խաղաղությամբ ու բարությամբ լցրու ամենքի սրտերը: Բարությունից մարդու աչքին աշխարհը հազար անգամ մեծ է երևում, ունեցածը՝ հազարապատիկ շատ:

Մաղթենք, որ Նոր տարում տունդ խաղաղ լինի, հացդ՝ սպիտակ, խոսքդ՝ լիքը:

Թող Նոր տարին աշխարհը խաղաղության մեջ պահի, փակի երաշտի ու մորեխի և չարիք ու արհավիրք բերող բոլոր ուժերի ճամփան:

Մաղթենք, որ Ամանորը խաղաղառատ, բերքառատ և լուսառատ լինի և անկատար չթողնի ոչ մեկի բարի ցանկությունը:

Նոր տարի, գալդ բարի, խաղաղալից ու պտղալից լինի:

Եվ մարդն ասաց Նոր տարուն. «Եվ, լույս ու խաղաղություն թափիր իմ երդիկից, մնացածը ինքս կանեմ՝ աշխարհը պահելու ամատուտության մեջ»:

Հայրս դիմել է Ամանորին ու ասել. «Դու խաղաղությամբ լցրու աշխարհը, ես՝ բերք ու բարիքով»: Ես կրկնում եմ հորս խոս-

քերն ու ասում՝ եղիցի:

Հայոց անվանադիր ու հզոր նախնի Հայկն ասել է. «Թող խաղաղությունը, ազատությունն ու բարեկամությունն իշխեն աշխարհի արևելքում ու արևմուտքում, հյուսիսում ու հարավում: Եվ թող տարվա ոչ մի օր աշխարհում գուժկան չերևա»: Ահա չորսուկես հազարամյակ է, ինչ Հայկի զարմորդիները կրկնում են այդ խոսքը:

Մաղթում եմ, որ ամբողջ տարին մի ցերեկվա պես անցնի, բայց խաղաղ, առանց ամպրոպի ու կարկտի, առանց ջրհեղեղի ու հրդեհի անցնեն առավոտը, կեսօրն ու երեկոն:

Ամանոր, թող խաղաղությամբ անցնեն մարդկային կյանքի բոլոր օրերը: Այնպես արա, որ ոչ պատանին շտապի տարեց դառնալ, ոչ էլ տարեցը չորս ոտք արած ժամանակից շուտ հևսպառ դառնա ծերության լանջերին:

Ամանոր, խաղաղության մեջ պահիր եզրերն ու միջնաշխարհը: Իմ ամբարներն ու մառանը լցրու մի քիչ պակաս, հարևանիս՝ երկու անգամ շատ, հեռավոր հարևանիս՝ երեք անգամ շատ: Եվ ես նրանց չափ հարուստ կլինեմ:

Ամանոր, ամեն ինչը նոր, խաղաղությունը, սերն ու բարեկա-

մութիւնը՝ հնամյա ու խոր:

Մաղթենք, որ խաղաղ լինի Նոր տարին: Խաղաղութիւնը կարող է տիեզերքը պռնկեպտունկ լցնել առատութեամբ:

Թող խաղաղ լինի Նոր տարին, խոսքով վարեն աշխարհի գործերը, և ամեն տեսակ բերք ու բարիք իր տիրոջը մնա:

Նոր տարին խաղաղութիւն է, խաղաղութիւնը՝ Նոր տարի:

Նոր տարին մարդուն դարձնում է առավել խաղաղասեր, առույգ, մարդամոտ ու երազկոտ: Մաղթենք, որ նա այդպիսին մնա մինչև տարեվերջ և հաջորդ բոլոր տարիներին:

Եթե ուզում ես խաղաղ, արդունավետ ու իմաստավորված անցկացնել կյանքդ՝ գինի և օշարակ խմիր միայն Նոր տարվա առաջին և երկրորդ օրը, մնացած օրերը բավարարվիր օշարակով:

Նոր տարվա խաղաղաշունչ շնորհավորանքը լսում են նաև նախնայաց ոգիները: Մեր ձայնը նրանց չի հասնի, եթե մենք մայրենի լեզվով չմաղթենք Նոր տարվա գալուստը:

Նոր տարին մտնում է յուրաքանչյուրիս հարկի տակ և դռնում հայրենյաց պատմութեան մի ծալքը: Հետնորդներին երեւում են միայն խաղաղաշունչ ու հայրենաշունչ ծալքերը:

Տիեզերքը մեծ է, բայց Նոր տարին ու տիեզերական խաղաղութիւնն սկսվում են մարդուց:

Աշխարհում ամենասեղմ, սըրտահաճ ու խաղաղաշունչ խոսքը պարտավոր են ասել գրողներն ու Նոր տարվա գալուստը մաղթող տանտերերը: Երիցս շնորհավոր լինի կարճ ու իմաստավորված խոսողի Նոր տարին:

Ամանոր, խաղաղութեան մեջ պահիր և համայն աշխարհը, և առանձին-առանձին ամեն տուն: Եվ թող ծիծաղն անպակաս լինի ամենքի դեմքից:

Ջարմդ հայկյան, շնորհավորիր նաև նրանց Նոր տարին, ովքեր հայերեն են խոսում, բայց ճակատագրի քմահաճ խաղով բեկվել են հայրենի հողից և ապրում են այս աշխարհի մոտ ու հեռավոր անկյուններում: Խաղաղութիւն և տունդարձ մաղթիր նրանց:

Ամանոր, տարին կլոր խաղաղ պահիր, մեր տուն ու տեղը՝ շեն ու առատ:

Է՛յ, խմուկ մարդ, երրորդ բաժակը թափիր դուրս՝ հաշվելով, թե դա էլ Նոր տարվա բաժինն է: Դրանով խաղաղ կլինի և քո, և բարեկամներիդ Նոր տարին:

Յուրաքանչյուր մարդ մի քայլ է անում հին ու Նոր տարվա սահմանագլխին: Բայց քայլ զգելուց

առաջ պիտի հին ափին թողնի  
ոխր, չարակամությունը և կռվա-  
րար ոգին: Այդ ամենը շալակին  
պահող մարդու համար Նոր  
տարի չկա:

Շնորհավոր լինի քո Նոր տա-  
րին, բարեկամ: Խաղաղ և Նոր  
տարվա առաջին օրվա պես ու-  
րախ անցնեն կյանքիդ բոլոր  
օրերը:

Նոր տարում մի խոսիր ոչ քո,  
ոչ էլ ուրիշի տարիքի մասին:

Նոր տարին ջահելություն է և  
ջահելի պես պիտի անփուլթ լի-  
նել գլորած տարիների հանդեպ:

Ծուլլ ու անբան մարդու հա-  
մար Նոր տարին ավելորդ կան-  
գառ է:

Բարի խոսքով պիտի սկսել Նոր  
տարին, որպեսզի բոլոր շարու-  
նակությունները բարի լինեն:

Հայրենի հողի վրա Նոր տարին  
Նոր տարի է, օտարության մեջ՝  
պատրանք:



**ՀԱՅՊԱՎԱՆ  
ԽՈՐՀՐԱՅԻՆ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆԻ  
ԳԼԽԱՎՈՐ ԽԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Գեղ. խմբագիր՝ Կ. Կ. Խաչատրյան  
Տեխ. խմբագիր՝ Վ. Ն. Ալոբջոլկին  
Արբագրիչ՝ Ն. Պ. Անանիկյան**

**Հասցեն. 375001, Երևան  
Թումանյան փ. 17**

**ԿՖ 10935**

Հանձնված է շտրվածքի 28.04.89 թ.: Ստորագրված է տպագրության 18.08.89 թ.:  
Թուղթ օֆսեթ գոգնակ. 84×108<sup>1</sup>/<sub>32</sub>: Տառատեսակ՝ «Արարատ». օֆսեթ տպագրու-  
թյուն: Տպագրական 10.0 մամուլ, 8,4 պայմ. մամուլ, 7,75 հրատ. մամուլ: Տպաքանակ՝  
80000 (1-ին թողարկում՝ 1 25000): Պատվեր՝ 1203: Գինը՝ 3 ռ. 50 կոպ.:  
Հայկական խորհրդային հանրագիտարանի գլխավոր խմբագրություն. 375001, Երե-  
վան 1, Թումանյան փ. 17:

Главная редакция Армянской Советской энциклопедии, 375001, Ере-  
ван — 1, ул. Туманяна, 17.

ՀԽՍՀ հրատարակչությունների, փոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական  
կոմիտեի գունավոր տպագրության տպարան, 375082, Երևան 82, Ծովակալ Իսակովի  
փող. 48:

Типография цветной печати Госкомитета Арм. ССР по  
полиграфии и книжной торговли, 375082, Ереван —  
Исакова, 48.



10-00

3 n.

13960